

*Redefining
Strength &
Solidarity*

**A LOOK THROUGH
FEMINIST LENSES**



Վերանայում ենք
անձնական
ուժեղություններ
**ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ
ՈՍՊԵՅԱԿԻ ՆԵՐՔՈՒ**



**WOMEN'S
FUND
ARMENIA**



This article collection has been financed by Sweden. Responsibility for the content rests entirely with the creator. Sweden and WFA do not necessarily share the expressed views and interpretations.

This publication was possible also thanks to the support of Oak Foundation.

Editor-In-Chief: Gohar Shahnazaryan
 Editors: Siran Hovhannisyanyan,
 Armine Markosyan

Layout and design: Sophy Dishakjian



Սույն հրատարակությունն իրականացվել է Շվեդիայի ֆինանսավորմամբ: Բովանդակության համար պատասխանատվություն կրում է բացառապես հեղինակը: Շվեդիան և ՀԿՀ-ն կարող են չկիսել դրանում արտահայտված տեսակետներն ու մեկնաբանությունները:

Հրատարակությունը հնարավոր է դարձել նաև Oak հիմնադրամի աջակցության շնորհիվ:

Գլխավոր խմբագիր՝ Գոհար Շահնազարյան
 Խմբագրական կազմ՝ Սիրան Հովհաննիսյան
 Արմինե Մարկոսյան

Ձևավորումը և էջադրումը՝ Սոֆի Տիշաքճեան



Content

1	Feminist-in-the-Know <i>Chandapiwa Olesego Sisila, Partnerships and Philanthropy Officer - African Women's Development Fund</i>	12
2	Feminist Solidarity <i>Fondo Alquimia</i>	48
3	Resilience and Struggle <i>Yelena Sargsyan, Women's Fund Armenia</i>	62
4	Zooming in and out <i>Ekaterine Danelia, Nurjan Estebe, Nino Ugrekhelidze / Dalan Fund</i>	84
5	From Surviving to Organizing to Thrive in Times of Crisis <i>Fondo Semillas</i>	114
6	"Hope is the impetus to bring about change" <i>filia.die frauenstiftung</i>	136
7	Equality Fund Response to the Recent Earthquakes in Turkey and Syria <i>Equality Fund</i>	146
8	Stories of Resilience and Solidarity <i>UN Trust Fund to End Violence against Women</i>	160

Բովանդակություն

1	Այն, ինչ գիտեն միայն ֆեմինիստները <i>Չանդապիվա Օլեսեգո Սիսիլա, Գործընկերությունների և ֆիլանթրոպիայի բաժնի պատասխանատու, Աֆրիկյան կանանց զարգացման հիմնադրամ</i>	13
2	Ֆեմինիստական համերաշխություն <i>Ալքիմիա հիմնադրամ</i>	49
3	Դիմակայունություն և պայքար <i>Ելենա Սարգսյան, Հայաստանում կանանց Հիմնադրամ</i>	63
4	Հայացք մոտիկից և հեռվից <i>Եկատերինե Դանելիա, Նուրջան Էստեբես, Նինո Ուգրեխելիձե / «Դալան» հիմնադրամ</i>	85
5	Գոյատևումից մինչև ինքնակազմակերպում՝ ճգնաժամի ժամանակ բարգավաճելու համար <i>«Սեմիլիաս» հիմնադրամ</i>	115
6	Հույսը փոփոխության ազդակն է՝ <i>Ֆիլիա կանանց հիմնադրամ</i>	137
7	Հավասարության հիմնադրամի արձագանքը <i>Թուրքիայում և Սիրիայում տեղի ունեցած</i>	147

9	Ukrainian Feminists Have Lessons to Teach Us about War <i>Cynthia Enloe, University of California Press</i>	180
10	The World is Bleeding... Don't Look Away <i>Lina AbiRafeh, written together with Kit Nicholson.</i>	202
11	Voices of Strength: Sudanese Women's Resilience Amid War and Conflict <i>SUWRA, Sudan</i>	224
12	There is No End to War <i>Susanna Shahnazaryan</i>	246
13	Women in the Army: Roles and Expectations <i>Media discourse analysis by Kristine Soloyan Authors: Mariam Khalatyan, Nvard Margaryan Editor: Arpy Manusyan</i>	264
14	Redefining Women's Safety Through Empowerment Self-Defense <i>Gohar Khachatryan</i>	284

վերջին երկրաշարժերին
Հավասարության հիմնադրամ

8	Դիմակայունության և համերաշխության պատմություններ <i>Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության ՄԱԿ-ի հավաքարմագրային հիմնադրամ</i>	161
9	Ուկրաինացի ֆեմինիստները մեզ կարող են դասեր տալ պատերազմի մասին» <i>Սինթիա Էնլո, Կալիֆոռնիայի համալսարանի հրատարակչություն</i>	181
10	Աշխարհն արյունահոսում է... Հայացքդ մի՛ թեքիր <i>Լինա ԱբիՌաֆեհ, գրվել է Քիրթ Նիքոլսոնի հետ համատեղ</i>	203
11	Ուժեղ ձայներ. սուղանցի կանայք տոկում են պատերազմին ու հակամարտությանը <i>Սուղանցի կանանց իրավունքների շարժում (SUWRA), Սուղան</i>	225
12	Պատերազմին վերջ չկա <i>Սուսաննա Շահնազարյան</i>	247
13	Կանայք բանակում. դերեր և ակնկալիքներ <i>Մեդիայի դիսկուրս վերլուծությունը՝ Քրիստինե Սոլոյանի շեղիակներ՝ Մարիամ Խալաթյան, Նվարդ Մարգարյան Խմբագիր՝ Արփի Մանուսյան</i>	265
14	Կանանց ապահովությունն ինքնապաշտպանությունն է <i>Գոհար Խաչատրյան</i>	285

Introduction

The year of 2023 was yet another year that was full of dramatic as well as traumatic events for us. The year itself was highlighted with forced displacement of ethnic Armenians from Nagorno Karabakh that was followed by a humanitarian crisis, and our own struggle with resource mobilization for our partners providing humanitarian assistance, which consequently led to a wide spectrum of negative emotions and burnouts. Now at the same time, there were many horrific events that happened, and even currently continue happening in different parts of the world; namely, Ukraine, Palestine, Sudan, and many other places. There are restrictive laws that are imposed on civil society in the neighboring country of Georgia. However, despite these hardships, we still manage to keep going and, in some way, continue redefining our collective strength and solidarity. In the beginning, we wanted to use the word resilience in the title of our book, but after various long and drawn-out discussions we decided not to do so, and this because it became too ubiquitous. More importantly, resilience is often about surviving and endurance of already vulnerable and marginalized communities. Communities that used to withstand the pain and suffering while living in a survival mode for a long period of time. Communities that never really knew what it means to thrive, relax, and fully enjoy their own respective existence.

However, despite what word we decide to use, we wanted to create a publication about feminist strength and solidarity, and present stories of feminist collective power during emergency times.

Ներածություն

2023 թվականը մեզ համար ողբերգական ու տրավմատիկ իրադարձություններով լի հերթական տարին էր: Տարին ինքնին առանձնացավ Լեռնային Ղարաբաղից էթնիկ հայերի բռնի տեղահանությամբ, որին հաջորդեց հումանիտար ճգնաժամ. մենք էլ աշխատում էինք ռեսուրսներ մոբիլիզացնել հումանիտար օգնություն տրամադրող մեր գործընկեր(ուհի) ների համար, իսկ այս ամբողջ պրոցեսը հանգեցրեց բացասական զգացմունքների ու այրման լայն դրսևորման: Միաժամանակ տարբեր սարսափելի իրադարձություններ էին տեղի ունենում և դեռ շարունակվում են աշխարհի տարբեր կետերում, մասնավորապես՝ Ուկրաինա, Պաղեստին, Սուդան և այլուր: Մեր հարևան Վրաստանում քաղաքացիական հասարակության գործունեությունը սահմանափակող օրենքներ են ուժի մեջ մտնում: Այնուամենայնիվ, ի հեճուկս այս դժվարությունների՝ դեռևս շարունակում ենք առաջ շարժվել ու ինչ-որ կերպ շարունակում ենք վերասահմանել մեր հավաքական ուժն ու սուլիդարությունը: Այս հրատարակությունը պատրաստելու նախնական փուլերում գրքի վերնագրում «դիմակայունություն» բառն էինք ուզում գործածել, բայց տարբեր երկար ու ծավալուն քննարկումների արդյունքում որոշեցինք հրաժարվել այդ բառից, քանզի այն արդեն չափազանց առօրեական է դարձել: Իսկ որ ավելի կարևոր է՝ դիմակայունությունը հաճախ գործածվում է՝ նկարագրելու արդեն իսկ խոցելի ու համակարգայնորեն անտեսված համայնքների գոյատևումն ու տոկունությունը: Համայնքներ, որոնք սովոր են անընդհատ գոյատևման ռեժիմում գտնվելով դիմադրել ցավին ու տառապանքին: Համայնքներ, որ

Solidarity in troubled times may look very different. It's an immediate response to our call for publication from dozens of great funds and well-known authors. It's a heartwarming letter from a world renown feminist author Cynthia Enloe immediately agreeing to republish a part of her book on the on-going war in Ukraine. It's a call to action released from the Dalan Fund to mobilize resources for us during the displacement of the Armenian population. It's also constant check-ins from Prospera International Women's Funds Network, and our sister funds from around the world, as well as our care for each other in our team of Women's Fund Armenia.

We do hope that this collection of stories of feminist solidarity from various parts of the world will once again reinsure all of us that in dramatic times where people, communities and nations lose their equilibrium, there is still hope that comes from collective care, solidarity, and the willingness to share each other's pain.

*Gohar Shahnazaryan,
Co-Director of Women's Fund Armenia*

այդպես էլ չեն իմացել՝ ինչ է բարգավաճումը, հանգիստը, ու չեն կարողացել լիովին վայելել իրենց սեփական գոյությունը:

Ինչևէ, ինչ բառ էլ գործածենք, մեր ցանկությունն էր ստեղծել ժողովածու՝ ճգնաժամային ժամանակներում ֆեմինիստական ուժի ու սոլիդարության մասին պատմություններով:

Փոթորկուն ժամանակներում սոլիդարությունը կարող է այլ տեսք ունենալ: Այն կարող է լինել հողավաճների ժողովածու ստեղծելու մեր կանչին տասնյակ հիմնադրամներից ու հանրաճանաչ հեղինակներից արագ արձագանքելու տեսքով: Կարող է լինել հայտնի ֆեմինիստ հեղինակ Սինտիա Էնլոյի սրտաշարժ նամակի տեսքով, որն անմիջապես համաձայնվեց մեզ տրամադրել իր գրքից մի հատված՝ նվիրված Ուկրաինայի դեմ ընթացող պատերազմին: Կարող է լինել Դալան հիմնադրամի կողմից տարածված կոչի տեսքով՝ բռնի տեղահանված հայ բնակչությանը օգնելու համար ռեսուրսներ մոբիլիզացնելու նպատակով: Սոլիդարությունը նաև մեզ ուղղված այն մշտական հարցումներն են Պրոսպերա կանանց հիմնադրամների միջազգային ցանցի և մեր այլ քույր հիմնադրամների կողմից՝ տեղեկանալու մեր որպիսության մասին, ինչպես նաև՝ Հայաստանում կանանց հիմնադրամի թիմում միմյանց հանդեպ հոգատարությունը:

Իրապես հուսով ենք, որ աշխարհի տարբեր մասերից ֆեմինիստական սոլիդարության պատմությունների այս ժողովածուն ևս մեկ անգամ կամրապնդի այն համոզմունքը, որ այս ողբերգական ժամանակներում, երբ մարդիկ, համայնքներն ու ազգերը կորցնում են իրենց հավասարակշռությունը, դեռևս կա հույս, որը բխում է կոլեկտիվ հոգատարությունից, սոլիդարությունից ու կամքից՝ կիսելու միմյանց ցավը:

*Գոհար Շահնազարյան,
Հայաստանում կանանց հիմնադրամի համահիմնադիր*

Feminist-in-the-Know: An Afrifem Perspective to Resourcing in Crisis

Chandapiwa Olesego Sisila, Partnerships and Philanthropy Officer - African Women's Development Fund

The Nature of Crisis in the Region

Indeed, we live in times of polycrisis. The volatility in our regions appears to escalate with each passing day. Whether it's a crisis brought on by pandemics, civil wars, political instability, or attacks on marginalised communities, we constantly find ourselves moving from one crisis to another.

When COVID-19 hit in 2020, the world went into a complete shutdown. In Africa, COVID-19 came just as we were settling out of Ebola, which claimed so many lives in Central and West Africa, whose shadows continue to follow us as that of COVID-19. The pandemic affected already fragile economies and healthcare systems. It further highlighted and deepened the social inequalities that existed in developing economies and fragile contexts. Some governments used the pandemic as a tool to suppress the rights of their civilians, imposing restrictions on freedom of expression and disrupting civic space. The pandemic exposed the vulnerabilities in Africa's healthcare systems; it highlighted the need for improvement in the very systems that were already struggling.

As lockdowns were enforced to mitigate the spread of COVID-19, another concerning issue emerged: an increase in domestic violence. With more people working remotely and spending extended periods at home, violence instigated by partners behind closed doors became more prevalent. The world watched as, day after day, our loved ones were lost. The loss of lives due to COVID-19 was devastating on a global scale, and its impact continues to be felt to this day.

Այն, ինչ գիտեն միայն ֆեմինիստները. Աֆրիֆեմ տեսակետը ճգնաժամի պայմաններում ռեսուրսների տրամադրման մասին

Չանդապիվա Օլեսեգո Սիսիլա, Գործընկերությունների և ֆիլանթրոպիայի բաժնի պատասխանատու, Աֆրիկյան կանանց զարգացման հիմնադրամ

ճգնաժամի բնույթը տարածաշրջանում

Իրապես, մենք ապրում ենք բազմաճգնաժամային ժամանակներում: Անկայունությունը մեր տարածաշրջաններում կարծես օրեցօր սրվում է: Լինի դա համաճարակների, քաղաքացիական պատերազմների, քաղաքական անկայունության կամ մարգինալացված համայնքների վրա հարձակումների հետևանքով առաջացած ճգնաժամ՝ մենք անդադար մի ճգնաժամից մյուսն ենք անցնում:

Երբ 2020թ. բռնկվեց ՔՈՎԻԴ-19-ը, աշխարհը թևակոխեց ամբողջական դադարի փուլ: Աֆրիկայում ՔՈՎԻԴ-19-ը եկավ հենց այն ժամանակ, երբ մենք հազիվ ազատվում էինք էբոլայից, որն այնքան շատ կյանքեր խլեց Կենտրոնական և Արևմտյան Աֆրիկայում, որոնց ստվերները շարունակում են հետևել մեզ, ինչպես ՔՈՎԻԴ-19-ինը: Համավարակն ազդել է առանց այն էլ փխրուն տնտեսությունների և առողջապահական համակարգերի վրա: Այն ավելի է ընդգծել ու խորացրել սոցիալական անհավասարությունները, որոնք առկա էին զարգացող տնտեսություններում և փխրուն համատեքստերում: Որոշ իշխանություններ օգտագործեցին համավարակը որպես իրենց քաղաքացիների իրավունքները ճնշելու գործիք՝ սահմանափակումներ դնելով խոսքի ազատության վրա և խաթարելով քաղաքացիական տարածությունը: Համավարակը երևան հանեց Աֆրիկայի առողջապահական համակարգերի խոցելիությունը. ընդգծեց հենց այն համակարգերի բարելավման անհրաժեշտությունը, որոնք արդեն իսկ դժվարին կացության մեջ էին:

Երբ ՔՈՎԻԴ-19-ի տարածումը մեղմելու համար սահմանվեցին տեղաշարժման սահմանափակումներ (լոքդաուններ), ի հայտ եկավ ևս մեկ մտահոգիչ խնդիր՝ ընտանեկան բռնության աճը: Մինչ ավելի

As the continent was grappling with COVID-19, conflict across the continent thrived - from civil war in Ethiopia and political unrest in already fragile countries such as Burkina Faso, Niger, Guinea, Mali, Sudan, DRC, Mozambique, Nigeria, and Somalia. Climate change also became an increasingly pressing issue - from floods that harshly impacted Southern Africa and in West Africa affecting Ghana, Cyclone Freddy, which displaced numerous individuals in Mozambique, Zimbabwe, Malawi, Zambia and Madagascar and Storm Daniel, which wreaked havoc in North Eastern Libya. At the same time, an earthquake shook the South Western region of Marrakech, Morocco.

Moreover, there has been a concerning rise and push against the rights and freedoms of LBTQI communities across the continent. The continent has seen legislative changes in Uganda, and countries such as Kenya, Burundi, Ghana, Senegal, and Tanzania are currently considering anti-homosexuality bills and/or strict regulations on non-governmental organisations' operations. There have also been cross-country discussions on the Maputo Protocol. Surprisingly, despite the advancements and successes for women's rights across the continent, these conversations are centered on the prospect of dismantling the protocol.

Most at risk in such times are women, children and gender-expansive individuals - vulnerable to gender-based violence, with limited access to health and reproductive health care, and most prone to economic insecurity.

Irrespective of this, Women's and Feminist Funds have moved and continue to move resources

շատ մարդիկ սկսեցին աշխատել հեռավար և երկար ժամանակ անցկացնել տանը, փակ դռների հետևում զուգընկերների կողմից գործադրված բռնությունն ավելի մեծ տարածում գտավ: Աշխարհը դիտում էր, թե ինչպես էին օր օրի կորչում մեր սիրելիները: ԶՈՎԻԴ-19-ի պատճառով մարդկային կորուստները ցնցող էին ամբողջ աշխարհում, և դրա ազդեցությունը շարունակում է զգացվել մինչ օրս:

Մինչ մայրցամաքը պայքարում էր ԶՈՎԻԴ-19-ի դեմ, ամբողջ մայրցամաքում հակամարտությունները սրվեցին՝ Եթովպիայում քաղաքացիական պատերազմից մինչև քաղաքական խռովություններ առանց այն էլ փխրուն երկրներում, ինչպիսիք են՝ Բուրկինա Ֆասոն, Նիգերը, Գվինեան, Մալին, Սուդանը, ԿԴՀ-ն, Մոզամբիկը, Նիգերիան և Սոմալին: Կլիմայի փոփոխությունը նույնպես դարձավ ավելի հրատապ խնդիր. սկսած ջրհեղեղներից, որոնք լրջագույն ազդեցություն ունեցան Հարավային Աֆրիկայի և Արևմտյան Աֆրիկայի վրա՝ ազդելով Գանայի վրա, մինչև Ֆրեդի ցիկլոնը, որը տեղահանեց բազմաթիվ անձանց Մոզամբիկից, Հիմբաբվեից, Մալավիից, Չամբիայից և Մադագասկարից, և Դանիել փոթորիկը, որը ավերածությունների պատճառ դարձավ հյուսիսարևելյան Լիբիայում: Միևնույն ժամանակ՝ երկրաշարժը ցնցեց Մարոկկոյի հարավ-արևմտյան Մարաբեշ շրջանը:

Ավելին՝ ամբողջ մայրցամաքում ԼԲՏԶԻ համայնքների իրավունքների և ազատությունների դեմ գործողությունների մտահոգիչ աճ արձանագրվեց: Մայրցամաքը օրենսդրական փոփոխություններ տեսավ Ուգանդայում, իսկ այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Զենիան, Բուրունդին, Գանան, Սենեգալը և Տանզանիան, ներկայումս քննարկում են նույնասեռականության դեմ օրինագծեր և/կամ խիստ կանոնակարգեր հասարակական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ: Եղել են նաև միջպետական քննարկումներ Մապուտոյի արձանագրության

to the heart of where they are needed most - marginalised communities. This piece assesses the lessons learned and key takeaways from resourcing in crises in the region and highlights the work of women's and feminist funds as a case of how we can resource better during crises.

Key Takeaways from Resourcing in Crisis: How the African Women's Development Fund Has Resourced in Crisis

Internally, within the AWDF, there has been an ongoing discussion on responsive resourcing in crisis. There are, however, no conclusive decisions made regarding the structure AWDF will take when it comes to crisis response. It is important to note that though AWDF is not an emergency response fund, there is a need for a strategy and the right architecture on how we respond to crises so as to resource and support the movement partners centered in our work.

One of AWDF's first experiences in crisis response was during the Ebola Crisis of 2013. AWDF took a proactive approach, providing resources to community-based organisations from Sierra Leone, Guinea, and Liberia in collaboration with partners. While funding was available from the international community to combat Ebola, it was primarily targeted at governments and international NGOs. AWDF was strategic and intentional in providing resources to women's rights organisations and community-based organisations at the heart of the Ebola crisis. This enabled AWDF to reach smaller organisations and communities without access to funding or support elsewhere.

վերաբերյալ: Չարմանալիորեն, չնայած մայրցամաքում կանանց իրավունքների ոլորտում առաջընթացին և հաջողություններին, այս խոսակցությունները կենտրոնացած են արձանագրությունը խաթարելու հեռանկարի վրա:

Նման ժամանակներում առավել վտանգի տակ են հայտնվում կանայք, երեխաները և բիսար գենդերային ինքնությունից դուրս անձինք, որոնք խոցելի են գենդերային բռնության նկատմամբ, ունեն առողջապահության և վերարտադրողական առողջության պահպանման սահմանափակ հասանելիություն և առավել հակված են տնտեսական անապահովության:

Այդուհանդերձ, կանանց և ֆեմինիստական հիմնադրամները ուղղել և շարունակում են ուղղել ռեսուրսները համակարգայնորեն անտեսված համայնքներ, որտեղ դրանք առավել անհրաժեշտ են: Այս հոդվածում գնահատվում են տարածաշրջանի ճգնաժամերի ժամանակ ռեսուրսներ ստանալուց քաղված դասերը և ստացված հիմնական գիտելիքները և ընդգծվում կանանց և ֆեմինիստական հիմնադրամների աշխատանքը՝ որպես օրինակ, թե ինչպես կարող ենք ավելի լավ կազմակերպել ռեսուրսներ տրամադրելու գործընթացները ճգնաժամերի ժամանակ:

Քաղված դասեր ճգնաժամի ժամանակ ռեսուրսներ տրամադրելու վերաբերյալ. ինչպես է ԱՖրիկյան կանանց զարգացման հիմնադրամը ռեսուրսներ տրամադրել ճգնաժամի ժամանակ

ԱԿՁՀ-ի ներսում շարունակական քննարկումներ են եղել ճգնաժամի ժամանակ ռեսուրսների տրամադրման վերաբերյալ: Այնուամենայնիվ, չկան վերջնական որոշումներ այն կառուցվածքի վերաբերյալ, որը կընդունի ԱԿՁՀ-ն, երբ խոսքը վերաբերում է ճգնաժամերի արձագանքմանը: Կարևոր է նշել, որ չնայած ԱԿՁՀ-ն արտակարգ իրավիճակների

AWDF provided small grants that met the immediate needs of the communities, even though some did not meet AWDF's criteria for grant-making. What AWDF learned from this experience was the need to balance accountability, trust, and effectiveness in its grant-making processes.

When the COVID-19 pandemic hit, cases of gender-based violence increased worldwide. Nigeria, particularly, saw a rise in sexual violence and rape cases. In response to the escalating reports of rape, state governors in Nigeria declared a “state of emergency” on rape and gender-based violence in June 2020. During this time, AWDF provided support and resources to movement partners as they worked to ensure the communities most affected received the support they needed. AWDF did this by amending its systems and procedures to ensure that the resources moved quickly to the communities that needed them the most.

In 2022, recognising the global cost of living crisis that resulted from inflation, AWDF awarded a fully flexible top-up grant of USD 5,000 to each of its 155 partners with live grants as of January 1, 2022, to women's rights and feminist organisations across Africa who were significantly affected, especially as the continent was still recovering from the impacts of COVID-19. Coined the Zinariya grants (Zinariya is a Hausa word meaning golden), the grants were part of AWDF's 50th grantmaking cycle. The grants came with no restrictions and limited reporting requirements, giving AWDF's partners full agency to decide on their priorities. With the Zinariya grants, AWDF piloted small unrestricted grants. What we learned from these grants was the need for more flexibility in our grantmaking, which we intend to iron out as we move forward and implement Lemlem, our ten-year strategic framework.

արծագանքման հիմնադրամ չէ, սակայն կարիք կա մշակելու ռազմավարություն և ճշգրիտ կանոնակարգ, թե ինչպես պետք է արծագանքենք ճգնաժամերին, որպեսզի ռեսուրսներ տրամադրենք և աջակցենք մեր աշխատանքի առանցքում գտնվող շարժման գործընկերներին:

ճգնաժամերի արծագանքման ԱԿՁՀ առաջին փորձառություններից մեկը եղել է 2013թ.՝ էթիոպիայի ճգնաժամի ժամանակ: ԱԿՁՀ-ն նախաձեռնողական մոտեցում է ցուցաբերել՝ գործընկերների հետ համագործակցությամբ ռեսուրսներ տրամադրելով Սիերա Լեոնեում, Գվինեայում և Լիբերիայում գործող համայնքահեն կազմակերպություններին: Թեև միջազգային հանրության կողմից կար ֆինանսավորում էթիոպիայի դեմ պայքարի համար, սակայն այն հիմնականում ուղղված էր կառավարություններին և միջազգային հասարակական կազմակերպություններին: ԱԿՁՀ կողմից ռազմավարական և նպատակաուղղված քայլ էր ռեսուրսներ տրամադրել կանանց իրավապաշտպան կազմակերպություններին և համայնքահեն կազմակերպություններին էթիոպիայի ճգնաժամի թե՛ժ պահին: Սա հնարավորություն ընձեռեց ԱԿՁՀ-ին կապ հաստատելու ավելի փոքր կազմակերպությունների և համայնքների հետ, որոնք այլ տեղից ֆինանսավորման կամ աջակցության հասանելիություն չունեին:

ԱԿՁՀ-ն տրամադրեց փոքր դրամաշնորհներ, որոնք բավարարում էին համայնքների անմիջական կարիքները, չնայած որոշները չէին համապատասխանում ԱԿՁՀ դրամաշնորհների տրամադրման չափանիշներին: Այն, ինչ ԱԿՁՀ-ն սովորեց այս փորձառությունից, դրամաշնորհների տրամադրման գործընթացներում հաշվետվողականության, վստահության և արդյունավետության հավասարակշռման անհրաժեշտությունն էր:

Most recently, in May 2023, AWDF resourced women's rights organisations in Malawi, Mozambique, Zambia and Zimbabwe in response to the flooding caused by Cyclone Freddy. These were short-term grants ranging from USD 5,000 to USD 10,000.

AWDF has also been involved in finding effective strategies to resource movements in the Sudanese crisis through the Black Feminist Action in Sudan collaborative, hosted by the Black Feminist Fund and the Equality Fund. Furthermore, as part of the *تحويل* (Tahwil) | Komboa | Reziste, the AWDF, with strategic partners that comprise the Initiative Sankofa d'Afrique de l'Ouest (ISDAO), Doria Feminist Fund, Purposeful, and the Strategic Initiative for Women in the Horn of Africa (SIHA) have each committed a percentage of their funding that will go towards crisis response funds dedicated to their funded partners.

Exploring Innovative Approaches to Crisis Response that Have Been Adapted by Other Feminist and Women's Funds

Women's Fund Asia - Kaagapay Fund: In response to the COVID-19 pandemic in 2020, Women's Fund Asia (WFA) established the Kaagapay Fund, a special grants program aimed at supporting feminist resilience in times of crisis. Since its inception, the Kaagapay Fund has provided 96 grants amounting to USD 1,146,359 by 2022.

The Kaagapay Fund provides flexible and unrestricted funding. It ensures grantee partners utilise the funds provided within a longer time frame, allowing them to address their immediate and long-term needs. Some of the areas WFA supported through the Kaagapay Fund include capacity strengthening, the production of knowledge products, advocacy awareness and educational campaigns, the use of activism to

երբ ՔՈՎԻԴ-19 համավարակը բռնկվեց, գենդերային հիմքով բռնության դեպքերն ավելացան ամբողջ աշխարհում: Նիգերիայում, մասնավորապես, աճեցին սեռական բռնությունների և բռնաբարությունների դեպքերը: Ի պատասխան բռնաբարության աճող հաղորդումների՝ Նիգերիայի նահանգապետերը 2020թ. հունիսին «արտակարգ դրություն» հայտարարեցին: Այս ժամանակահատվածում ԱԿՁՀ-ն աջակցություն և ռեսուրսներ էր տրամադրում շարժման գործընկերներին, քանի որ նրանք ձգտում էին անհրաժեշտ աջակցություն ապահովել ամենաշատը տուժած համայնքներին: ԱԿՁՀ-ն դա արեց՝ փոփոխելով իր համակարգերն ու ընթացակարգերը՝ ապահովելու, որ ռեսուրսներն արագ ուղղվեն դեպի այն համայնքները, որոնք դրանց կարիքն ամենաշատն ունեն:

2022 թվականին, հաշվի առնելով գնաճի հետևանքով առաջացած կենսապահովման ծախսերի համաշխարհային ճգնաժամը, ԱԿՁՀ-ն 2022թ. հունվարի 1-ի դրությամբ 5000 ԱՄՆ դոլարի չափով լիովին ճկուն դրամաշնորհ տրամադրեց իր 155 գործընկերներից յուրաքանչյուրին՝ կանանց իրավապաշտպան և ֆեմինիստական կազմակերպություններին ամբողջ Աֆրիկայում, որոնք զգալիորեն տուժել էին, հատկապես մինչ մայրցամաքը դեռ վերականգնվում էր ՔՈՎԻԴ-19-ի ազդեցությունից: Ստեղծվեցին «Զինարիա» դրամաշնորհները (Զինարիան հաուսա լեզվով բառ է, որը նշանակում է «ոսկյա»), որոնք տրամադրվում էին ԱԿՁՀ 50-րդ դրամաշնորհային շրջափուլի շրջանակում: Դրամաշնորհները տրամադրվել են առանց սահմանափակումների և սահմանափակ զեկուցման պահանջներով, ինչը լիարժեք գործորդություն է սովել ԱԿՁՀ գործընկերներին՝ որոշելու իրենց առաջնահերթությունները: «Զինարիա» դրամաշնորհներով ԱԿՁՀ-ն փորձնականորեն իրականացրեց փոքր առանց սահմանափակումների դրամաշնորհներ: Այս դրամաշնորհներից մենք սովորեցինք, որ մեր դրամաշնորհների տրամադրման հարցում առավել

deliver information targeted stakeholders, self-care and well-being support to grantee partners and communities, the engagement of government and service providers to access physical and mental health care, and emergency relief activities.

The Kaagapay Fund aimed to address the immediate needs of activists, communities, and organisations during the pandemic. However, learnings from the Fund's impact over time reflect the need for long-term grants after relief and recovery.

By recognising the importance of establishing sustainable support systems, WFA has developed a strategy to address emerging crises such as floods, insurgencies, and war and ensure the resilience of its grantee partners during crises.

The strategy implemented by WFA aims to provide immediate relief by allocating flexible funding to address urgent needs while focusing on the long-term strategies of the communities involved. This approach provides support during times of crisis but also fosters lasting change and ensures the resilience of the feminist movements that WFA resources.

Initiative Sankofa d’Afrique de l’Ouest (ISDAO):

Amid COVID-19, ISDAO introduced what they have coined the Resilience Grants to their LGBTQI partners in West Africa. These are non-competitive, non-publicised, short-term and flexible one-time grants made on invitation only to support organisational and movement resilience. The grants were intended to support ISDAO’s current and past grantee partners with needs or gaps to fill that required urgent funding.

This emergency response grant came as a feminist response to an emergency humanitarian

ճկունության կարիք կար, որը մտադիր ենք շտկել, երբ առաջ շարժվենք և իրականացնենք «Լենլենը»՝ մեր տասնամյա ռազմավարական շրջանակը:

Վերջերս՝ 2023 թվականի մայիսին, ԱԿՁՀ-ն ռեսուրսներ է տրամադրել Մալավիի, Մոզամբիկի, Չամբիայի և Չիմբաբվեի կանանց իրավապաշտպան կազմակերպություններին՝ ի պատասխան Ֆրեդի ցիկլոնի պատճառած ջրհեղեղի: Դրանք կարճաժամկետ դրամաշնորհներ էին՝ 5,000-ից մինչև 10,000 ԱՄՆ դոլար:

ԱԿՁՀ-ն նաև ներգրավված է եղել Սուդանի ճգնաժամի ընթացքում շարժումներին ռեսուրսների տրամադրման արդյունավետ ռազմավարություններ գտնելու գործում՝ «Սև ֆեմինիստական ակցիա Սուդանում» համագործակցության միջոցով, որը կազմակերպվել է Սև ֆեմինիստական հիմնադրամի և Հավասարության հիմնադրամի կողմից: Ավելին՝ որպես تحویل (Tahwil) | Կոմբոա | Reziste-ի մաս՝ ԱԿՁՀ-ն և իր ռազմավարական գործընկերները, այդ թվում՝ «Արևելյան Աֆրիկայի Սանկոֆա նախաձեռնությունը» (Initiative Sankofa d’Afrique de l’Ouest, ISDAO), Դորիա ֆեմինիստական հիմնադրամը, Purposeful-ը և Աֆրիկյան եղջյուրի (The Horn of Africa) կանանց համար ռազմավարական նախաձեռնությունը (SIHA), յուրաքանչյուրն իր ֆինանսավորման որոշ տոկոսն ուղղել է ճգնաժամերի արձագանքման հիմնադրամներին, որոնք նվիրված են իրենց կողմից ֆինանսավորվող գործընկերներին:

Ճգնաժամերի արձագանքման նորարարական մտեցումների ուսումնասիրություն, որոնք ադապտացվել են այլ ֆեմինիստական և կանանց հիմնադրամների կողմից

«Ասիայի կանանց հիմնադրամ» - Կաագապայ հիմնադրամ. Ի պատասխան 2020 թվականին ԶՈՎԻԴ-19 համավարակի՝ «Ասիայի կանանց հիմնադրամը (ԱԿՀ) ստեղծեց Կաագապայ

situation where ISDAO learned more about the importance of building strong and sustainable movements to withstand crises. The resilience grants also responded to the need to challenge the humanitarian sector's industrial, bureaucratic, and service provider complexities. These grants have allowed partner groups and organisations to obtain resources at times of uncertainty and decide for themselves the urgent questions the resources should answer during times of crisis.

The resilience grants allow ISDAO to provide critical support and resources that enable their partners to address specific, critical, time-limited administrative or community needs, e.g., launching a self-sustaining agri-business in Togo to contribute to the income of an LGBTQ-led organisation or providing urgent funds for rent and utilities for a trans-led organisation in Côte d'Ivoire.

In 2020, the resilience grants were provided to 9 groups: Ghana, Nigeria, Bénin, and Côte d'Ivoire. For 2021, ISDAO awarded 10 grants to organisations in Benin, Côte d'Ivoire, Ghana, Togo, and Nigeria, including one regional resilience grant.

ISDAO also developed a COVID-19 plan, which they reviewed and updated to identify and reflect the best ways to stay connected to their grantmaking and support with LGBTQI groups and organisations in West Africa. Their flexible approach and responsiveness enabled many of their partners to utilise the funding they received to provide direct assistance and services to the communities they worked with.

Furthermore, ISDAO launched the RESPOND Fund to provide safety, security and emergency needs for their grantee partners and the communities

հիմնադրամը՝ հատուկ դրամաշնորհային ծրագիր, որի նպատակն է աջակցել ճգնաժամի ժամանակ ֆեմինիստական դիմակայունությանը: Իր ստեղծման օրվանից մինչև 2022 թվականը Կաազապայ հիմնադրամը տրամադրել է 96 դրամաշնորհ՝ 1,146,359 ԱՄՆ դոլարի չափով:

Կաազապայ հիմնադրամը տրամադրում է ճկուն և առանց սահմանափակումների ֆինանսավորում: Այն թույլ է տալիս, որ դրամաշնորհառու գործընկերները տրամադրված միջոցներն օգտագործեն ավելի երկար ժամկետներում՝ հնարավորություն տալով նրանց հասցեագրելու իրենց հրատապ և երկարաժամկետ կարիքները: Կաազապայ հիմնադրամի միջոցով ԱԿՀ-ի կողմից աջակցություն ստացած ուղղությունների թվում են՝ կարողությունների զարգացումը, տարբեր նյութերի հրատարակությունները, շահերի պաշտպանությունը, իրազեկման և կրթական արշավները, արտիվիզմի օգտագործումը՝ թիրախային շահագրգիռ կողմերին տեղեկատվություն տրամադրելու համար, ինքնախնամքի և բարեկեցության աջակցությունը դրամաշնորհառու գործընկերներին և համայնքներին, կառավարության և ծառայություններ մատուցողների ներգրավումը՝ ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման համար, և հրատապ աջակցության միջոցառումների հասանելիությունը:

Կաազապայ հիմնադրամը նպատակ ուներ հասցեագրելու համավարակի ընթացքում ակտիվիստների, համայնքների և կազմակերպությունների հրատապ կարիքները: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում հիմնադրամի ազդեցությունից քաղված դասերը ցույց են փայլիս, որ հրատապ աջակցությունից և վերականգնումից հետո կարիք կա ավելի երկարաժամկետ դրամաշնորհների:

Գիտակցելով կայուն աջակցության համակարգերի ստեղծման կարևորությունը՝ ԱԿՀ-ն մշակել է ռազմավարություն՝ հասցեագրելու առաջացող

they serve. This fund is made in addition to all grantee partners in addition to the amount approved by an autonomous participatory body called the Activist Grant-Making Panel (AGMP). ISDAO believes in the importance of having residual emergency funds for local organisations in order to provide timely and effective responses when needed. The RESPOND fund has provided ISDAO with valuable insights on how giving communities the agency to determine what constitutes an emergency, safety, or security issue enables them to achieve a community response to such issues.

We Are Purposeful, and the Global Resilience Fund - Housed and facilitated by Purposeful and stewarded by the Women Win, the Global Resilience Fund was established in May 2020 in response to COVID-19 and the collective need for resourcing girls and young women, trans and non-binary people within the ecosystem. A cross-section of 25 funders launched the GRF as a temporary, experimental, rapid response fund to directly resource girls and young feminists' brave and transformative strategies. Rooted in the principles of trust, solidarity, and reciprocity and grounded in an ecosystem approach to funding, the fund has been able to disburse grants totalling USD1,461,930 from 2020 until 2022. It moves resources at speed and scale through models of shared power.

Since young activists show up across movements, sectors and regions, the GRF has created an opportunity for a diverse range of donors to come together and collaborate in new and transformative ways, leading to unprecedented possibilities.

Since its inception, Purposeful and GRF have

ճգնաժամերը, ինչպիսիք են՝ ջրհեղեղները, ապստամբությունները և պատերազմները, և ապահովելու իր դրամաշնորհառու գործընկերների դիմակայունությունը ճգնաժամերի ժամանակ:

Այժ կողմից իրականացվող ռազմավարությունը նպատակ ունի արտակարգ իրավիճակներում աջակցություն տրամադրելու՝ ճկուն ֆինանսավորում հատկացնելով հրատապ կարիքների հասցեագրման համար՝ միաժամանակ կենտրոնանալով ներգրավված համայնքների երկարաժամկետ ռազմավարությունների վրա: Այս մոտեցումը թույլ է տալիս աջակցություն ցուցաբերել ճգնաժամի ժամանակ, ինչպես նաև խթանել տևական փոփոխությունները և ապահովել ֆեմինիստական շարժումների դիմակայունությունը, որոնց ԱԿՀ-ն ռեսուրսներ է տրամադրում:

«Արևելյան Աֆրիկայի Սանկոֆա նախաձեռնությունը» (**«Sankofa d’Afrique de l’Ouest» նախաձեռնություն (ISDAO)**). ԶՈՎԻԴ-19-ի պայմաններում ISDAO-ն ներկայացրել է նախաձեռնության կողմից ստեղծված դիմակայունության դրամաշնորհները Արևմտյան Աֆրիկայում իրենց ԼԳԲՏԶ գործընկերներին: Դրանք ոչ մրցակցային, փակ, կարճաժամկետ և ճկուն մեկանգամյա դրամաշնորհներ են, որոնք տրվել են հրավերով՝ միայն կազմակերպական և շարժման դիմակայունությանն աջակցելու նպատակով: Դրամաշնորհները նախատեսված էին աջակցելու ISDAO-ի ներկայիս և նախկին դրամաշնորհառու գործընկերներին, որոնք ունեն կարիքներ կամ բացեր, որոնք լրացնելու համար անհրաժեշտ էր հրատապ ֆինանսավորում:

Արտակարգ իրավիճակների արձագանքման այս դրամաշնորհը եկավ որպես ֆեմինիստական արձագանք արտակարգ հումանիտար իրավիճակին, որտեղ ISDAO-ն ավելին իմացավ ճգնաժամերին դիմակայելու համար ուժեղ և կայուն շարժումներ կառուցելու կարևորության

resourced organisations and collectives led by girls, young women, trans or non-binary people under 30 years of age. From May to December 2020, the GRF supported 234 grassroots groups from 91 countries in their COVID-19 response and organising efforts. In 2021, the fund also moved resources to organisations and collectives experiencing the COVID-19 crisis within the context of other crises - to Afghanistan in partnership with MADRE, to Myanmar in partnership with Tharthi Myay Foundation, and directly to groups in Lebanon, Haiti, and the Occupied Territories of Palestine. The fund did this in recognition that, at times, the fund itself is not always the most suitable to work within the broader ecosystem of crisis funders that centre girls and young feminists. In 2022, the fund supported feminists fleeing from Ukraine, providing support to girls and young women affected by the flooding in Pakistan. Most recently, in 2023, the fund provided emergency rapid response grants to young women-led, trans youth and girl-centred groups directly impacted by and responding to the earthquakes in Turkey, Syria, and Lebanon. It is also mobilising resources to support organisations and collectives in response to the current and ongoing impacts of Storm Daniel in Libya and the earthquake that hit the South Western region of Marrakech, Morocco and further resourcing to support feminist movements in the Occupied Territories of Palestine.

As it resources girls and young women, trans and non-binary people during crises, the GRF has taken an accompaniment approach for its response to crises. Herein, GRF holds a deep understanding that organisations and collectives often need more than just money but a holistic and responsive young-activist-led accompaniment to nourish and build people's individual and

մասին: Դիմակայունության դրամաշնորհները նաև արձագանքեցին հումանիտար հատվածի արդյունաբերական, բյուրոկրատական և ծառայությունների մատուցման բարդությունները վիճարկելու անհրաժեշտությանը: Այս դրամաշնորհները թույլ տվեցին գործընկեր խմբերին և կազմակերպություններին ռեսուրսներ ձեռք բերել անորոշ ժամանակներում և ինքնուրույն որոշել այն հրատապ խնդիրները, որոնց վրա պետք է ուղղվեն ռեսուրսները ճգնաժամի ժամանակ:

Դիմակայունության դրամաշնորհները թույլ են տալիս ISDAO-ին տրամադրել կարևոր աջակցություն և ռեսուրսներ, որոնք հնարավորություն կտան իրենց գործընկերներին հասցեագրելու կոնկրետ, առանցքային, ժամանակային սահմանափակմամբ վարչական կամ համայնքային կարիքները, օրինակ՝ Տոգոյում հիմնել ինքնաբավ ագրոբիզնես՝ նպաստելու LԳԲՏԹԻ կողմից ղեկավարվող կազմակերպության եկամուտների գոյացմանը կամ Կոտ դ'Իվուարում գրանվող տրանս անձանց կողմից ղեկավարվող կազմակերպության վարձակալության և կոմունալ ծառայությունների համար հրատապ միջոցների ապահովմանը:

2020թ. դիմակայունության դրամաշնորհներ են տրամադրվել 9 խմբերի՝ Գանայում, Նիգերիայում, Բենինում և Կոտ դ'Իվուարում: 2021թ. համար ISDAO-ն 10 դրամաշնորհ է տրամադրել Բենինի, Կոտ դ'Իվուարի, Գանայի, Տոգոյի և Նիգերիայի կազմակերպություններին, այդ թվում՝ մեկ տարածաշրջանային դիմակայունության դրամաշնորհ:

ISDAO-ն նաև մշակել է ԶՈՎԻԴ-19 պլան, որը նրանք վերանայել և թարմացրել են՝ բացահայտելու և արտացոլելու լավագույն ուղիները՝ իրենց դրամաշնորհների տրամադրման և աջակցության ընթացքում կապ պահպանելու

collective resilience. GRF takes accompaniment quite literally - accompanying girls and young women to meet their needs as defined by them. This model is undertaken in collaboration with GRF's 34 global activist panel to support grantee partners in their collective path towards feminist liberation and social justice. It emphasises the importance of recognising and prioritising the needs, realities and expertise of grantee partners at the forefront and centre of the accompaniment.

The Doria Feminist Fund - Given its strategic location within the MENA region, Doria has recognised the need for emergency response in the dynamic and changing context of the region. Doria Feminist Fund has provided flexible Emergency Response Grants to new and existing grantee partners as well as feminist collectives and organisations within the ecosystem that urgently require short-term financial resourcing. These grants can be used for emergency response, disaster relief support, well-being and care initiatives, medical or health support, community aid, or to strengthen the resilience of organisations and initiatives in responding to the changing conditions of their context.

The first crisis the Fund responded to was the earthquake that affected Turkey and Syria in 2023. This response was executed in a participatory manner through an Advisory Activist Committee based in the area and identified grantee partners that would be well-placed to receive the funding and distribute it to the communities most affected by the earthquake. Herein, Doria Feminist Fund supported eight organisations and collectives working in or supporting operations in Northern Syria and other affected areas with flexible emergency response grants of between USD5,000 to USD 10,000 for six months to one year.

Արևմտյան Աֆրիկայում ԼԳԲՏՔԻ խմբերի և կազմակերպությունների հետ: Նրանց ճկուն մոտեցումն ու արձագանքելու կարողությունը հնարավորություն է տվել իրենց գործընկերներից շատերին օգտագործելու իրենց ստացած ֆինանսավորումը՝ ուղղակի օգնություն և ծառայություններ մատուցելու այն համայնքներին, որոնց հետ նրանք աշխատել են:

Ավելին, ISDAO-ն գործարկել է ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ հիմնադրամը՝ երաշխավորելու ապահովություն, անվտանգություն և հրատապ աջակցություն իրենց դրամաշնորհառու գործընկերների և նրանց կողմից սպասարկվող համայնքների համար: Այս հիմնադրամը ձևավորվել է բոլոր դրամաշնորհառու գործընկերների համար՝ ի լրումն ինքնավար մասնակցային մարմնի կողմից հաստատված գումարի, որը կոչվում է Ակտիվիստների դրամաշնորհների տրամադրման խումբ (ԱԴՏԽ): ISDAO-ն հավատում է տեղական կազմակերպությունների համար հրատապ պահուստային միջոցներ ունենալու կարևորությանը՝ անհրաժեշտության դեպքում ժամանակին և արդյունավետ արձագանքելու համար: ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ հիմնադրամը ISDAO-ին արժեքավոր պատկերացումներ է տվել այն մասին, թե ինչպես համայնքներին գործորդություն տալը՝ որոշելու, թե ինչն է արտակարգ իրավիճակ, ապահովության կամ անվտանգության խնդիր, թույլ է տալիս նրանց երաշխավորել համայնքահեն արձագանք նման խնդիրներին:

Մենք Purposeful-ն ենք և Գլոբալ դիմակայունության հիմնադրամը. Purposeful-ում տեղակայված և նրա կողմից աջակցվող և Women Win-ի կողմից կառավարվող Գլոբալ դիմակայունության հիմնադրամը ստեղծվել է 2020թ. մայիսին՝ արձագանքելու ՔՈՎԻԴ-19-ին և էկոհամակարգում գտնվող աղջիկների և երիտասարդ կանանց, տրանս և ոչ բինար անձանց ռեսուրսներ տրամադրելու կոլեկտիվ կարիքին:

When the Sudanese conflict erupted in 2023, Doria was one of the first funds to respond to the call for support. Doria is currently responding to the ongoing challenges of Sudanese feminist movements. The emergency response to Sudan seeks to support the feminist movements through rapid response support covering three main areas of need – advocacy and awareness raising, movement building, and crisis and humanitarian relief. Additionally, the Fund is developing a participatory review process by establishing an activist peer committee comprised of Sudanese activists to facilitate the review and selection of emergency grants.

Most recently, Doria has been working on resourcing the communities in the Occupied Territories of Palestine. Due to the sensitive nature of supporting activists who are currently enduring violence and facing threats, Doria is working diligently to identify trusted partners and networks of feminist activists and women human rights defenders to support in providing secure access to emergency response grants. Doria continues to work closely with its partners to conduct outreach to potential grantees safely. In its efforts, Doria will ensure that the grant process prioritises security and care for grantee partners.

Doria Feminist Fund has a responsibility to amplify the voices of activists who have been silenced and ensure that resources are directed to those most vulnerable and facing volatile situations.

As a feminist fund, Doria is uniquely positioned to connect across the region, map the current landscape of organising and support, and respond to the most pressing needs for funding to primarily underserved communities.

25 ֆինանսավորողներից բաղկացած խումբը գործարկեց ԳՂՀ-ն՝ որպես ժամանակավոր, փորձարարական, արագ արձագանքման հիմնադրամ՝ ուղղակիորեն ռեսուրսներ տրամադրելու աղջիկների և երիտասարդ ֆեմինիստների խիզախ և փոխակերպող ռազմավարություններին: Վստահության, համերաշխության և փոխադարձության սկզբունքների և ֆինանսավորման էկոհամակարգային մոտեցման վրա հիմնված հիմնադրամը կարողացել է տրամադրել 1,461,930 ԱՄՆ դոլար ընդհանուր չափով դրամաշնորհներ 2020-2022թթ.: Այն արագ և մասշտաբային կերպով տեղաշարժում է ռեսուրսները՝ օգտագործելով իշխանության բաշխման մոդելները:

Քանի որ երիտասարդ ակտիվիստները հայտնվում են տարբեր շարժումներում, ոլորտներում և տարածաշրջաններում, ԳՂՀ-ն հնարավորություն է ստեղծել մի շարք դոնորների համար՝ համախմբվելու և համագործակցելու նոր և փոխակերպող եղանակներով՝ ստեղծելով աննախադեպ հնարավորություններ:

Իր ստեղծման օրվանից Purposeful-ը և ԳՂՀ-ն ռեսուրսներ են տրամադրել կազմակերպություններին և կոլեկտիվներին, որոնք ղեկավարվում են մինչև 30 տարեկան աղջիկների, երիտասարդ կանանց, տրանս կամ ոչ բինար անձանց կողմից: 2020թ. մայիսից մինչև դեկտեմբեր ԳՂՀ-ն աջակցել է 91 երկրի 234 արմատաբուխ (grassroots) խմբերի՝ ԶՈՎԻԴ-19-ի արձագանքման և կազմակերպական ջանքերին: 2021թ. հիմնադրամը նաև ռեսուրսներ է ուղղել այն կազմակերպություններին և կոլեկտիվներին, որոնք վերապրում էին ԶՈՎԻԴ-19 ճգնաժամը այլ ճգնաժամերի պայմաններում՝ Աֆղանստանին՝ MADRE-ի հետ համագործակցությամբ, Մյանմարին՝ Tharthi Myay հիմնադրամի հետ համագործակցությամբ և ուղղակիորեն՝ Լիբանանի, Հաիթիի և Պաղեստինի օկուպացված

Doria recognises the need to provide feminist movements with long-term and consistent support as they navigate the unknown and long-term effects of the crisis on their communities. It also understands that there is a need for collaboration with feminist movements; hence, it connects with past applicants from previous grantmaking cycles who are already working in the affected areas to understand the best approaches in resourcing the communities they work in.

Doria Feminist Fund is currently in the process of developing an architecture that will allow them to have the needed resources to respond during emergencies, particularly within the movements they work with - pockets of flexible resources and funds set aside to allow them to respond during emergencies.

What Can We Learn from How Women's and Feminist Funds Have and Continue to Respond in Crises

- When responding to crises, movements and communities require **trust and flexibility** in the resources that are channelled in order for them to determine their needs and priorities. Balancing **accountability, trust, and effectiveness is beneficial** when resourcing is centred on and works for the movements.
- **Move Beyond Crisis** - Resource communities and movements in a manner that allows for **immediate relief and long-term resilience**. Communities and movements affected by crises require short and long-term strategies that address their needs and ensure relief and recovery.

տարածքների խմբերին: Հիմնադրամը դա արեց՝ գիտակցելով, որ երբեմն հիմնադրամն ինքը միշտ էլ, որ ամենահամապատասխանն է աշխատելու ճգնաժամային ֆինանսավորողների ավելի լայն էկոհամակարգում, որոնք կենտրոնանում են աղջիկների ու երիտասարդ ֆեմինիստների վրա: 2022թ. հիմնադրամն աջակցել է Ուկրաինայից բռնի տեղահանված ֆեմինիստներին, ինչպես նաև Պակիստանում ջրհեղեղից տուժած աղջիկներին և երիտասարդ կանանց: Բոլորովին վերջերս՝ 2023թ., հիմնադրամը արտակարգ իրավիճակի արձագանքման դրամաշնորհներ է տրամադրել երիտասարդ կանանց կողմից ղեկավարվող, տրանս երիտասարդների և աղջիկների վրա կենտրոնացող խմբերին, որոնք ուղղակիորեն ազդեցություն են կրել և արձագանքել են Թուրքիայում, Սիրիայում և Լիբանանում տեղի ունեցած երկրաշարժերին: Այն նաև ռեսուրսներ է մոբիլիզացնում՝ աջակցելու կազմակերպություններին և կոլեկտիվներին՝ արձագանքելու Լիբիայում Դանիել փոթորկի և Մարաբեշի հարավ-արևմտյան Մարոկկոյի շրջանը ցնցած երկրաշարժի ներկայիս և ընթացիկ ազդեցություններին, և շարունակում է ռեսուրսներ տրամադրել՝ աջակցելու Պաղեստինի օկուպացված տարածքներում ծավալվող ֆեմինիստական շարժումներին:

Քանի որ ԳԴՀ-ն ճգնաժամերի ժամանակ ռեսուրսներ է տրամադրում աղջիկներին և երիտասարդ կանանց, տրանս և ոչ բինար անձանց, այն որդեգրել է շարունակական աջակցման մոտեցումը՝ ճգնաժամերին արձագանքելու համար: Այստեղ, ԳԴՀ-ն խորապես գիտակցում է, որ կազմակերպություններին և կոլեկտիվներին հաճախ ավելի շատ անհրաժեշտ է ոչ թե պարզապես գումար, այլ երիտասարդ ակտիվիստների կողմից ղեկավարվող ամբողջական և արձագանքող ուղեկցում՝ մարդկանց անհատական և հավաքական դիմակայունությունը սնելու և զարգացնելու համար: ԳԴՀ-ն ուղեկցումն ընկալում է միանգամայն

- **Collaboration** is crucial in directing resources to the communities and movements that need them the most. This collaboration should involve **locally-led organisations** already working within and for the movements and communities they serve. The examples provided in this edition demonstrate how **women's and feminist funds have moved resources in crises, both urgently and without restrictions**, to the communities that need them the most in a manner that is based on **trust, authenticity, and flexibility**. This work was done through collaboration with the movements and communities on the ground.
- Consider taking an **accompaniment** approach when working with communities and movements in crises. This will involve actively engaging community leaders, activists and members to understand and establish the needs and priorities of the community and determine the support required by the community. By involving key stakeholders, we can ensure that the response is aligned with the communities and movements being served.
- Unlike emergency response funds or feminist funds that are dedicated to rapid response, such as the Urgent Action Funds, the women's and feminist funds noted in this edition have been **required to evolve with the changing context** and ensure that they respond to the needs of the feminist movements they work with and for in a manner that serves them. They have had to **adjust and centre their ways** of resourcing to ensure that they continue to be responsive to the needs of feminist movements; organisations and collectives have the resources to respond to crises.

բառացիորեն՝ ուղեկցել աղջիկներին և երիտասարդ կանանց՝ բավարարելու իրենց կարիքներն այնպես, ինչպես հենց իրենք են սահմանում դրանք: Այս մոդելն իրականացվել է ԳՌՀ 34 գլոբալ ակտիվիստների խմբերի հետ համագործակցելով՝ աջակցելու դրամաշնորհառու գործընկերներին իրենց հավաքական ճանապարհին դեպի ֆեմինիստական ազատագրում և սոցիալական արդարություն: Այն ընդգծում է ուղեկցման առաջնագծում և կենտրոնում գտնվող դրամաշնորհառու գործընկերների կարիքների, իրողությունների և փորձի ճանաչման և առաջնահերթության կարևորությունը:

Դորիա ֆեմինիստական հիմնադրամ. Հաշվի առնելով իր ռազմավարական դիրքը Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի (ՄԱՀԱ) տարածաշրջանում, Դորիան գիտակցել է արտակարգ իրավիճակների արձագանքման անհրաժեշտությունը տարածաշրջանի դինամիկ և փոփոխվող համատեքստում: Դորիա ֆեմինիստական հիմնադրամը տրամադրել է արտակարգ իրավիճակների արձագանքման ճկուն դրամաշնորհներ նոր և գործող դրամաշնորհառու գործընկերներին, ինչպես նաև էկոհամակարգի ֆեմինիստական կոլեկտիվներին և կազմակերպություններին, որոնք շտապ պահանջում են կարճաժամկետ ֆինանսական ռեսուրսներ: Այս դրամաշնորհները կարող են օգտագործվել արտակարգ իրավիճակների արձագանքման, աղետների ժամանակ հրատապ աջակցության, բարեկեցության և հոգատարության նախաձեռնությունների, բժշկական կամ առողջապահական աջակցության, համայնքային օգնության կամ կազմակերպությունների և նախաձեռնությունների դիմակայումության բարձրացման համար՝ արձագանքելու իրենց միջավայրի փոփոխվող պայմաններին:

Առաջին ճգնաժամը, որին հիմնադրամն արձագանքեց, 2023թ. երկրաշարժն էր, որից տուժեցին Թուրքիան և Սիրիան: Այս արձագանքն իրականացվել է մասնակցային եղանակով՝ տեղում գործող

- Women's and Feminist Funds **respond to an array of crises**, not just typical humanitarian crises, and reach historically excluded communities that traditional funders are not able to reach who respond to crises in traditional and in new and innovative ways. They are, therefore, **filling in a much-needed gap** in the ecosystem.

Ակտիվիստների խորհրդատվական կոմիտեի միջոցով: Կոմիտեն բացահայտել է այն դրամաշնորհառու գործընկերներին, որոնք առավել համապատասխան կլինեին ֆինանսավորումը ստանալու և աջակցությունը երկրաշարժից առավել տուժած համայնքներին բաժանելու համար: Այստեղ Դորիա Ֆեմինիստական հիմնադրամն աջակցություն է ցուցաբերել ութ կազմակերպությունների և կոլեկտիվների, որոնք աջակցում էին Հյուսիսային Սիրիայում և այլ տուժած շրջաններում իրականացվող գործողություններին՝ տրամադրելով արտակարգ իրավիճակների արձագանքման դրամաշնորհներ վեց ամսից մինչև մեկ տարի ժամկետով՝ 5,000-ից մինչև 10,000 ԱՄՆ դոլարի սահմաններում:

Երբ 2023թ. բռնկվեց Սուդանի հակամարտությունը, Դորիան առաջին հիմնադրամներից էր, որ արձագանքեցին աջակցության կանչին: Դորիան այժմ արձագանքում է Սուդանի ֆեմինիստական շարժումների շարունակական մարտահրավերներին: Սուդանին ուղղված արտակարգ իրավիճակների արձագանքը միտված է աջակցելու ֆեմինիստական շարժումներին արագ արձագանքման աջակցության միջոցով, որն ընդգրկում է աջակցության կարիք ունեցող երեք հիմնական ոլորտներ՝ շահերի պաշտպանություն և իրազեկման բարձրացում, շարժման զարգացում և ճգնաժամային ու մարդասիրական օգնություն: Բացի այդ՝ հիմնադրամը մշակում է մասնակցային գնահատման գործընթաց՝ ստեղծելով ակտիվիստ գործընկերների կոմիտե, որը բաղկացած է սուդանցի ակտիվիստներից՝ դյուրացնելու արտակարգ իրավիճակների արձագանքման դրամաշնորհների վերանայման և ընտրության գործընթացը:

Վերջերս Դորիան աշխատում էր Պաղեստինի օկուպացված տարածքների համայնքներին ռեսուրսներ տրամադրելու ուղղությամբ: Հաշվի առնելով ներկայում բռնության և սպառնալիքների

դեմ պայքարող ակտիվիստներին աջակցելու զգայուն բնույթը՝ Դորիան ջանքեր է գործադրում՝ հայտնաբերելու վստահելի գործընկերներին և ֆեմինիստ ակտիվիստներին, ինչպես նաև կին իրավապաշտպանների ցանցերը, որոնք կնպաստեն արտակարգ իրավիճակների արձագանքման դրամաշնորհների ապահով հասանելիության երաշխավորմանը: Դորիան շարունակում է սերտորեն համագործակցել իր գործընկերների հետ՝ ապահով կերպով կապ հաստատելու հնարավոր դրամաշնորհառուների հետ: Դորիան ջանքեր է գործադրում՝ ապահովելու, որ դրամաշնորհային գործընթացում առաջնահերթությունը տրվի դրամաշնորհառու գործընկերների անվտանգությանն ու նրանց մասին հոգածությանը:

Դորիա ֆեմինիստական հիմնադրամը պատասխանատվություն է ստանձնել ուժեղացնելու ակտիվիստների ձայները, որոնք լռեցվել են, և ապահովելու, որ ռեսուրսներն ուղղվեն առավել խոցելի և անկայուն իրավիճակներին:

Որպես ֆեմինիստական հիմնադրամ՝ Դորիան եզակի դերակատարում ունի՝ ամբողջ տարածաշրջանը փոխկապակցելու, կազմակերպական և աջակցության ներկայիս միջավայրը քարտեզագրելու և առաջին հերթին անապահով համայնքների ֆինանսավորման ամենահրատապ կարիքներին արձագանքելու հարցում:

Դորիան գիտակցում է ֆեմինիստական շարժումներին երկարաժամկետ և հետևողական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունը, երբ նրանց համայնքները բախվում են ճգնաժամերի անհայտ և երկարաժամկետ ազդեցություններին: Այն նաև հասկանում է, որ կա ֆեմինիստական շարժումների հետ համագործակցության կարիք. հետևաբար, այն կապ է հաստատում դրամաշնորհային նախորդ շրջափուլերի

հայտատուների հետ, որոնք արդեն աշխատում են ազդակիր վայրերում՝ հասկանալու լավագույն մոտեցումները՝ ռեսուրսներ տրամադրելու այն համայնքներին, որտեղ իրենք աշխատում են: Դորիա Ֆեմինիստական հիմնադրամը ներկայումս մշակում է մեխանիզմներ, որոնք թույլ կտան նրանց ունենալ անհրաժեշտ ռեսուրսներ հրատապ արձագանքման համար, հատկապես այն շարժումների շրջանակներում, որոնց հետ նրանք աշխատում են, ճկուն ռեսուրսներ և միջոցներ, որոնք հատկացվում են արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար:

Ինչ կարող ենք սովորել այն փորձառությունից, թե ինչպես են կանանց և ֆեմինիստական հիմնադրամները արձագանքել և շարունակում արձագանքել ճգնաժամերին

- ճգնաժամերին արձագանքելիս շարժումներին և համայնքներին անհրաժեշտ է **վստահություն և ճկունություն** ռեսուրսների հարցում, որոնք ուղղվում են, որպեսզի նրանք որոշեն իրենց կարիքներն ու առաջնահերթությունները: **Հաշվետվողականության, վստահության և արդյունավետության հավասարակշռումը օգտակար է**, երբ ռեսուրսները կենտրոնանում և գործում են շարժումների համար:
- **Ճգնաժամից անդին**. Ռեսուրսներ տրամադրեք համայնքներին ու շարժումներին այնպես, որ դրանք ապահովեն **հրատապ օգնություն և երկարաժամկետ դիմակայունություն**: Ճգնաժամերից տուժած համայնքներին ու շարժումներին անհրաժեշտ են կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարություններ, որոնք հասցեագրում են նրանց կարիքները և ապահովում օգնություն և վերականգնում:
- **Համագործակցությունն** առանցքային է ռեսուրսներն ուղղելիս այն համայնքներին և շարժումներին, որոնք դրանց կարիքն ամենաշատն

ունեն: Այս համագործակցությունը պետք է ներգրավի **տեղական կազմակերպություններին**, որոնք արդեն աշխատում են շարժումների և համայնքների ներսում և նրանց համար, որոնց ծառայում են: Այս նյութում բերված **օրինակները** ցույց են տալիս, թե ինչպես են կանանց և ֆեմինիստական հիմնադրամները ճգնաժամային իրավիճակներում շտապ և առանց սահմանափակումների ռեսուրսներ փոխանցել այն համայնքներին, որոնք դրանց կարիքն ամենաշատն ունենին՝ հիմնվելով **վստահության, անկեղծության և ճկունության** վրա: Այս աշխատանքն իրականացվել է տեղական շարժումների և համայնքների հետ համագործակցության միջոցով:

- ճգնաժամային իրավիճակներում գտնվող համայնքների և շարժումների հետ աշխատելիս դիտարկեք **աջակցման (accompaniment)** մոտեցում որդեգրելը: Սա ենթադրում է համայնքի ղեկավարների, ակտիվիստների և անդամների ակտիվ ներգրավումը՝ հասկանալու և սահմանելու համայնքի կարիքներն ու առաջնահերթությունները, ինչպես նաև որոշելու համայնքին անհրաժեշտ աջակցությունը: Հիմնական շահագրգիռ կողմերին ներգրավելով՝ կարող ենք ապահովել, որ արձագանքը համապատասխանի համայնքներին և շարժումներին, որոնց ծառայում ենք:
- Ի տարբերություն հրատապ արձագանքման հիմնադրամների կամ ֆեմինիստական հիմնադրամների, որոնք միտված են արագ արձագանքմանը, օրինակ՝ Շտապ գործողությունների հիմնադրամները (Urgent Action Funds), այս հոդվածում նշված կանանց և ֆեմինիստական հիմնադրամներից պահանջվել է հարմարվել փոփոխվող միջավայրին և համոզվել, որ նրանք արձագանքում են ֆեմինիստական շարժումների կարիքներին, որոնց հետ և համար նրանք աշխատում են այնպես, որ առավելագույնս ծառայեն նրանց կարիքներին: Նրանք ստիպված են եղել **հարմարեցնել և կենտրոնացնել ռեսուրսների**

¹AWDF awards the Zinariya Grants (youtube.com)

²<https://awdf.org/lemlem-awdf-strategic-framework/>

Read more on ADF



տրամադրման իրենց ուղիները՝ ֆեմինիստական շարժումների կարիքների արձագանքման շարունակականությունն ապահովելու համար, որպեսզի կազմակերպությունները և կոլեկտիվները ռեսուրսներ ունենան՝ ճգնաժամերին արձագանքելու համար:

- Կանանց և ֆեմինիստական հիմնադրամներն **արձագանքում են մի շարք ճգնաժամերի**, ոչ միայն տիպային հումանիտար ճգնաժամերի, և կապ են հաստատում պատմականորեն բացառված համայնքների հետ, որոնց ավանդական ֆինանսավորողները չեն կարողանում հասնել, որոնք ճգնաժամերին արձագանքում են ավանդական և նոր ու նորարարական ձևերով: Դրանք, հետևաբար, լրացնում են էկոհամակարգի **անչափ կարևոր բացը**:

¹AWDF awards the Zinariya Grants (youtube.com)

²<https://awdf.org/lemlem-awdf-strategic-framework/>

Կարդալ ավելին ԱԿԶԶ-ի մասին



Feminist Solidarity

Fondo Alquimia

Alquimia Fund (Fondo Alquimia) is a Chilean women's fund with over twenty years of experience mobilizing, delivering resources, and supporting organizations, activists, and human rights defenders. We work from principles of solidarity, transparency, and mutual support. In these years, and in collaboration with the organizations and movements we work with, we have built the concept of 'Feminist Solidarity' for ourselves. This article shares some of our actions and reflections on this topic.

In recent years, multiple crises have emerged simultaneously, intersecting more than one area of people's lives. Some examples are the rise of authoritarian governments, conservative and anti-rights groups, the amplification of political emergencies such as institutional crises, armed conflicts, civil wars, the worsening of the climate crisis and natural disasters, and global or regional health emergencies. In a good number of these cases, the management of governments, the mass media, and some international organizations is carried out through repressive measures that violate human rights, mainly affecting women, sexual and gender dissent, advocates for children's rights and environmental defenders, among others.

For this reason, and from work in collaboration with grassroots organizations and networks, we raise the following reflection:

if we want to survive and prosper, we need a radically transformative and coordinated response to crises based on intersectional feminist principles that focus on justice, healing, liberation, and the redistribution of economic, structural, and symbolic powers. This is what we define and encompass as 'Feminist Solidarity'.

Ֆեմինիստական համերաշխություն

Ալքիմիա հիմնադրամ

Ալքիմիա հիմնադրամը (Fondo Alquimia) կանանց չիլիական հիմնադրամ է, որն ունի մոբիլիզացնելու, ռեսուրսներ տրամադրելու և կազմակերպություններին, ակտիվիստներին և իրավապաշտպաններին աջակցելու ավելի քան քսան տարվա փորձ: Մենք աշխատում ենք այնպիսի սկզբունքներով, ինչպիսիք են համերաշխությունը, թափանցիկությունը և փոխադարձ աջակցությունը: Այս տարիների ընթացքում մեզ հետ աշխատող և կազմակերպությունների, և շարժումների հետ համագործակցությամբ կառուցել ենք «Ֆեմինիստական համերաշխության» մեր հայեցակարգը: Այս հոդվածը ներկայացնում է մեր որոշ գործողություններն ու մտորումները այս թեմայի շուրջ:

Վերջին տարիներին միաժամանակ բազմաթիվ ճգնաժամեր են առաջացել, որոնք ազդել են մարդկանց կյանքի մեկից ավելի ոլորտների վրա: Դրանց օրինակներից են՝ ավտորիտար կառավարությունների, պահպանողական և հակաիրավական խմբերի աճը, քաղաքական արտակարգ իրավիճակների ուժգնացումը, ինչպիսիք են՝ ինստիտուցիոնալ ճգնաժամերը, զինված հակամարտությունները, քաղաքացիական պատերազմները, կլիմայական ճգնաժամի և բնական աղետների վատթարացումը և գլոբալ կամ տարածաշրջանային առողջապահական արտակարգ իրավիճակները: Այս դեպքերից շատերում կառավարությունների, զանգվածային լրատվության միջոցների և որոշ միջազգային կազմակերպությունների գործունեությունն իրականացվում է ռեպրեսիվ միջոցների կիրառմամբ, որոնք խախտում են մարդու իրավունքները՝ հիմնականում ազդելով կանանց, սեռական և գենդերային այլախոհության, մանկության և շրջակա միջավայրի իրավապաշտպանների վրա՝ ի թիվս այլևի:

Նենց այս պատճառով և արմատաբուխ (grassroots) կազմակերպությունների և ցանցերի հետ հավասար աշխատանքից ելնելով՝ գալիս ենք հետևյալ եզրահանգմանը.

Եթե ցանկանում ենք գոյատևել և բարգավաճել, ապա մեզ անհրաժեշտ է արմատապես փոխակերպող և համակարգված արձագանք ճգնաժամերին՝ հիմնված

The work of Fondo Alquimia in the face of crises

Our actions are framed by the work of women's funds, which maintain close relationships with local organizations, movements, and communities. We deliver resources based on trust in women's, feminist, and dissident organizations that act in the face of crises, which is even more critical if we consider that the vast majority of humanitarian aid is delivered vertically and rarely considers affected communities as an organizational force that can also mobilize and distribute resources.

The cornerstone of our work is to follow the leadership of local feminist communities and activists to understand needs and respond with flexible funding, both immediate and medium-term.

Along this journey, we have provided support during the multiple crises that the country has suffered, such as the 2012 Earthquake and the social and political crises of the social revolt of 2019, among others. These experiences have given us a deep understanding of the urgent and complex needs of communities and territories in emergencies. In this context, feminist solidarity becomes even more relevant, offering inclusive and transformative responses to our challenges.

In addition to the actions aimed at taking care of the immediate situation through the mobilization of resources, we have been concerned with generating instances of meeting and reflection among activists after the crises to review our strengths and learnings and project ourselves as a living and coordinated, capable of responding to the emergency and that is adding various organizations and activist people in its trajectory. An example of this was the second meeting and

փոխհարվող ֆեմինիստական սկզբունքների վրա, որոնք կենտրոնանում են արդարության, ամիքման, ազատագրման և փնտեսական, կառուցվածքային և խորհրդանշական ուժերի վերաբաշխման վրա: Սա այն է, ինչ մենք սահմանում և ըմբռնում ենք որպես «ֆեմինիստական համերաշխություն»:

Ալքիմիա հիմնադրամի աշխատանքը ճգնաժամերի պայմաններում

Մեր գործողությունները սահմանվում են կանանց հիմնադրամների աշխատանքով, որոնք սերտ հարաբերություններ են պահպանում տեղական կազմակերպությունների, շարժումների և համայնքների հետ: Մենք տրամադրում ենք ռեսուրսներ հիմնվելով կանանց, ֆեմինիստական և այլախոհական կազմակերպությունների նկատմամբ վստահության վրա, որոնք գործում են ճգնաժամերի պայմաններում, ինչն առավել կարևոր է, եթե հաշվի առնենք, որ մարդասիրական օգնության ճնշող մեծամասնությունը տրամադրվում է ուղղահայաց կերպով, իսկ տուժած համայնքները հազվադեպ են համարվում կազմակերպական ուժ, որը նույնպես կարող է մոբիլիզացնել և բաշխել ռեսուրսները: Մեր աշխատանքի անկյունաքարը տեղական ֆեմինիստական համայնքների և ակտիվիստների առաջնորդությանը հետևելն է՝ հասկանալու նրանց կարիքները և արձագանքելու ճկուն ֆինանսավորմամբ՝ ինչպես հրատապ, այնպես էլ միջնաժամկետ:

Այս ճանապարհին մենք աջակցություն ենք ցուցաբերել երկրում տիրող բազմաթիվ ճգնաժամերի ժամանակ, ինչպիսիք են 2012թ. երկրաշարժը և 2019թ. սոցիալական ապստամբության հետևանքով առաջացած սոցիալական և քաղաքական ճգնաժամերը՝ ի թիվս այլնի: Այս փորձառությունները մեզ խորքային պատկերացում են տվել արտակարգ իրավիճակներում համայնքների

conversation for Feminist Solidarity held in the Valparaíso region during 2023.

In February 2024, unfortunately, in the same region of Valparaíso, an unprecedented challenge occurred. From the hills of Playa Ancha to the neighborhoods of Cerro Barón, a mega forest fire consumed more than 1,000 hectares of land and housing, considered one of the most significant catastrophes in the country in the last 30 years. A disaster of great magnitude, where the rapid action of the emergency services added to the solidarity of the organizations and the local community, offered a ray of hope amid adversity. As the city recovers and rebuilds, the resilient spirit of its communities shines brightly, demonstrating that mutual work and solidarity allow us to overcome the most difficult challenges.

We implemented our Emergency Fund, which corresponds to flexible contributions to emergencies and crises like this one. More than 13 direct contributions of USD 500 were given to organizations active in the affected areas. These funds will continue to be delivered to support the medium-term reconstruction and repair processes through our 2024 annual call. In this regard, we have learned that it is crucial not only to address the immediate emergency but also to make efforts in the restoration of hundreds of affected lives, where a mental health crisis and minimum sanitary conditions to be able to live persist.

Some reflections

The movements we work with are committed to the rights of people who have experienced greater marginalization and oppression in crises. They guarantee inclusive, culturally relevant, and transformative work in gender relations, which

և տարածքների հրատապ և բարդ կարիքների մասին: Այս համատեքստում ֆեմինիստական համերաշխությունը դառնում է առավել արդիական՝ առաջարկելով ներառական և փոխակերպող արձագանքներ մեր մարտահրավերներին:

Ի լրումն ռեսուրսների մոբիլիզացման միջոցով անմիջական իրավիճակի հասցեագրմանն ուղղված գործողություններին, մենք մտահոգ ենք եղել ճգնաժամից հետո ակտիվիստների միջև հանդիպումների և մտորումների հնարավորության ստեղծմամբ՝ վերանայելու մեր ուժեղ կողմերն ու գիտելիքները և պատկերելու ինքներս մեզ որպես կենդանի և համակարգված անձնավորություն, որն ունակ է արձագանքելու արտակարգ իրավիճակին, և որն իր հետագծին է ավելացնում տարբեր կազմակերպությունների և ակտիվիստների: Սրա օրինակն էր «Ֆեմինիստական համերաշխության» երկրորդ հանդիպումն ու գրույցը, որը տեղի ունեցավ Վալպարաիսո շրջանում 2023 թվականին:

2024 թվականի փետրվարին, ցավոք, նույն Վալպարաիսոյի շրջանում աննախադեպ մարտահրավեր ծագեց: Պլայա Անչայի բլուրներից մինչև Սերրո Բարոնի թաղամասեր հսկայական անտառային հրդեհը խլեց ավելի քան 1000 հեկտար հող և բնակարաններ, որը համարվում է վերջին 30 տարվա ընթացքում երկրի ամենանշանակալի աղետներից մեկը. խոշոր մասշտաբի աղետ, որտեղ արտակարգ իրավիճակների ծառայությունների արագ գործողություններին ավելացավ կազմակերպությունների և տեղական համայնքի համերաշխությունը, ինչից հույսի շող ծագեց դժբախտության պայմաններում: Մինչ քաղաքը վերականգնվում և վերակառուցվում է, նրա համայնքների տոկոսն ոգին փայլատակում է՝ ցույց տալով, որ փոխադարձ աշխատանքն ու համերաշխությունը թույլ են տալիս մեզ հաղթահարել անգամ ամենածանր մարտահրավերները:

has been shown to lead to long-term changes in cultural norms.

We consider mobilizing local resources an effective strategy for generating reciprocity networks. Building community, jointly making the context visible, and managing the obtaining of economic resources requires full knowledge among activists and the creation of ties and alliances that last after the crisis.

We believe that, given the current context of uncertainty and paradigm shifts worldwide, it is necessary and urgent to continue the exchange of experiences among peers and design co-constructive processes about our visions and strategies for sustainability and fundraising, which are aimed at defending human rights and the sustainability of communities and their territories.

Below, we present five key organizations that acted in the fire emergency in the Valparaíso region, Chile, in February 2024:

1. **AFRODITA**
They provided assistance in Quilpué and Viña del Mar to collaborate on the ground with their sisters affected by the fires. Claudia (a member of the organization) and her family were in Monte Sinaí, in the Miraflores sector, and Claudia and Cristina (also a member of Afrodita) in the Pompeya Sur sector. Both went to Villa Independencia and collaborated with their partners from Circo Timoteo (the first openly trans circus in Chile).
2. **ANAMURI (The National Association of Rural and Indigenous Women)**
The National Association of Rural and Indigenous Women (ANAMURI) is a Chilean non-profit civil

Մենք գործադրեցինք մեր Արտակարգ իրավիճակների հիմնադրամը, որը ճկուն միջոցներ է տրամադրում նման արտակարգ իրավիճակների և ճգնաժամերի ժամանակ: Ավելի քան 13 ուղղակի ֆինանսավորում՝ 500 ԱՄՆ դոլարի չափով, տրվել է տուժած տարածքներում գործող կազմակերպություններին: Այս միջոցները շարունակելու են տրամադրվել 2024 թվականի մեր ամենամյա կանչի միջոցով՝ միջնաժամկետ վերակառուցման և վերանորոգման գործընթացներին աջակցելու նպատակով: Այս առումով մենք սովորեցինք, որ կարևոր է ոչ միայն արտակարգ իրավիճակին անմիջապես արձագանքելը, այլև ջանքեր գործադրելը տուժած հարյուրավոր կյանքերի վերականգնման համար, որտեղ շարունակում են պահպանվել հոգեկան առողջության ճգնաժամը և ապրելու համար նվազագույն սանիտարական պայմանները:

Որոշ մտորումներ

Շարժումները, որոնց հետ մենք աշխատում ենք, միտված են այն մարդկանց իրավունքների պաշտպանությանը, ովքեր ավելի մեծ մարգինալացման և ճնշումների են ենթարկվել ճգնաժամերի ժամանակ: Դրանք երաշխավորում են գենդերային հարաբերություններում ներառական, մշակութային նշանակություն ունեցող և փոխակերպող աշխատանք, որը հանգեցրել է մշակութային նորմերի երկարաժամկետ փոփոխությունների:

Մենք տեղական ռեսուրսների մոբիլիզացումը համարում ենք փոխադարձ ցանցեր ստեղծելու արդյունավետ ռազմավարություն: Համայնք կառուցելը, համատեքստը համարել կերպով տեսանելի դարձնելը և փոփոխական ռեսուրսների ձեռքբերումը կառավարելը պահանջում է ակտիվիստների համապարփակ գիտելիքներ և կապերի ու դաշինքների ստեղծում, որոնք հարապրում են ճգնաժամից հետո:

organization founded in 1998 in Buin. Its mission is to organize and promote the development of rural and indigenous women in Chile by stimulating and strengthening their organization. ANAMURI is part of the Latin American Coordination of Rural Organizations and La Via Campesina, the International Peasant's Movement. With their action, they supplied three community kitchens: Entre Cerros, El Surco, and Remu Rayen, providing approximately 900 servings of food daily.

3. **PÁJARX ENTRE PÚAS (Bird Among Spikes)**
The organization positions itself within popular, community, and anti-prison feminists, working through pedagogy, the body, art, and memory with incarcerated women and gender dissidents. The organization helped supply and purchase household items, food, basic supplies, etc., for direct family members of their community who were affected by the fires in Valparaiso.
4. **COORDINADORA FEMINISTA 8 DE MARZO VALPARÍSO (8th of March Feminist Coordinator Valparaíso)**
They are composed of self-convened individuals, members of social, territorial, migrant, student organizations, unions, and guilds that call for actions against all forms of violence and life precariousness through community gatherings, organization of feminist public demonstrations, interventions, socio-cultural activities, and political advocacy. During the wildfires, they set up and supplied community kitchens in the affected territories.
5. **MESA REGIONAL DE LAS MUJERES DE MAR Y CONEXAS QUINTA REGIÓN VALPARAÍSO (Regional Table of Women of the Sea and Allied, Fifth Region Valparaíso)**
The women's fishing organization aims to contribute to gender equity in the artisanal fishing

Մենք հավատացած ենք, որ, հաշվի առնելով անորոշության և հարացույցերի փոփոխության ներկայիս համատեքստն ամբողջ աշխարհում, հույժ կարևոր է շարունակել փորձի փոխանակումը համախոհների միջև և մշակել համատեղ կառուցողական գործընթացներ կայունության և ֆոնդահայթայթման մեր տեսլականի և ռազմավարությունների համար, որոնք ուղղված են մարդու իրավունքների պաշտպանությանը և համայնքների և նրանց տարածքների կայունությանը:

Ստորև ներկայացնում ենք հինգ հիմնական կազմակերպություններ, որոնք գործել են Չիլիի Վալպարաիսո շրջանում 2024 թվականի փետրվարին տեղի ունեցած հրդեհային արտակարգ իրավիճակի ընթացքում:

1. **ԱՖՐՈՂԻՏՍՍ**
Նրանք օգնություն են ցուցաբերել Քուիլպետում և Վինյա դել Մարում՝ տեղում համագործակցելու հրդեհներից տուժած իրենց քույրերի հետ: Կլաուդիան (կազմակերպության անդամ) և Նրա ընտանիքը գտնվում էին Մոնտե Սինաիում՝ Միրաֆլորես հատվածում, իսկ Կլաուդիան և Քրիստինան (նույնպես Աֆրոլիտայի անդամ)՝ Պոմպեյա Սուր հատվածում: Երկուսն էլ գնացին Վիլլա Ինդեպենդենսիա և համագործակցեցին Սիրկո Տիմոտեյի իրենց գործընկերների հետ (առաջին բացահայտ տրանս կրկեսը Չիլիում):
2. **ԱՆԱՄՈՒՐԻ (Գյուղաբնակ և բնիկ կանանց ազգային ասոցիացիա)**
Գյուղաբնակ և բնիկ կանանց ազգային ասոցիացիան (ԱՆԱՄՈՒՐԻ) չիլիական շահույթ չհետապնդող քաղաքացիական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998 թվականին Բուինում: Նրա առաքելությունն է կազմակերպել և խթանել գյուղաբնակ և բնիկ կանանց զարգացումը Չիլիում՝ խթանելով և ամրապնդելով նրանց կազմակերպումը: ԱՆԱՄՈՒՐԻ-ն մաս է կազմում Լատինական

sector and promote and provide informational, technical, legal, training, and educational services for its members. Following the fires, a fried fish sale was organized as a fundraising activity for the eight organization members who lost their homes.

Ամերիկայի գյուղական կազմակերպությունների համակարգման և La Via Campesina՝ Գյուղացիական միջազգային շարժման: Իրենց գործողությամբ նրանք մատակարարում են ապահովեցին երեք համայնքային խոհանոցի՝ Էնտրե Սերրոս, Էլ Սուրկո և Ռեմու Ռայեն՝ տրամադրելով օրական մոտավորապես 900 բաժին սնունդ:

3. PÁJARX ENTRE PÚAS (Bird Among Spikes)(Թռչունը սեպերի մեջ)

Կազմակերպությունը դիրքավորվում է պոպուլյար, համայնքային և հակաբանտային ֆեմինիստների շրջանում՝ աշխատելով բանտարկված կանանց և գենդերային այլախոհների հետ մանկավարժության, մարմնի, արվեստի և հիշողության միջոցով: Կազմակերպությունն օգնել է մատակարարել և գնել կենցաղային իրեր, սնունդ, հիմնական պարագաներ և այլն, նրանց համայնքի անդամների անմիջական ընտանիքների համար, ովքեր տուժել էին Վալպարաիսոյի հրդեհներից:

4. COORDINADORA FEMINISTA 8 DE MARZO VALPARÍSO (Մարտի 8-ի ֆեմինիստական համակարգող Վալպարաիսոյում)

Նրանք կազմված են ինքնաբուխ հավաքված անհատներից, սոցիալական, տարածքային, միգրանտների, ուսանողական կազմակերպությունների, միությունների և գիլդիաների անդամներից, որոնք կոչ են անում գործողություններ ձեռնարկել ընդդեմ բռնության բոլոր ձևերի և կյանքի անկայունության՝ համայնքային հավաքների, ֆեմինիստական ցույցերի կազմակերպման, միջամտությունների, սոցիալ-մշակութային գործունեության և քաղաքական ջատագովության միջոցով: Անտառային հրդեհների ժամանակ նրանք տուժած տարածքներում հիմնել և սպասարկել են համայնքային խոհանոցներ:

5. MESA REGIONAL DE LAS MUJERES DE MAR Y CONEXAS QUINTA REGIÓN VALPARAÍSO

(Վալպարաիսոյի հինգերորդ շրջանի ծովային և դաշնակից կանանց տարածաշրջանային սեղան)

Կանանց ձկնորսական կազմակերպությունը նպատակ ունի նպաստելու գենդերային հավասարությանը արհեստագործական ձկնորսության ոլորտում, ինչպես նաև խթանելու և մատուցելու տեղեկատվական, տեխնիկական, իրավական, ուսուցման և կրթական ծառայություններ իր անդամներին: Հրդեհներից հետո կազմակերպվել է տապակած ձկան վաճառք՝ որպես դրամահավաք գործողություն իրենց տները կորցրած կազմակերպության ութ անդամների համար:

Read more on Fondo Alquimia



Կարդալ ավելին Fondo Alquimia-ի մասին



Resilience and Struggle: The Women's Fund Armenia's Response to Crisis

Yelena Sargsyan
Women's Fund Armenia

Women in crisis and war situations

At the end of September 2023, I was in Iran for a study tour on women's rights issues. In Iran, I had almost no access to the Internet and other means of communication, due to the restrictions in that country. I was briefly informed that there is tension on the border in Armenia and that there is talk everywhere about the forced displacement of the people of Artsakh (Nagorno-Karabakh). I received terrible news from my journalist friends and other sources, which could not be publicized or published: they were mainly about cases of violence against women and making their personal data public. I could not perceive or feel anything in the first days. "And again women, it's always women who suffer the most," was the only sentence that kept repeating in my head.

Before returning to Armenia, I already was there with my thoughts. I was in Goris, among the ranks of people who left their homes and hopes far away and stood hopelessly at the checkpoints. I was in Yerevan, I was in our office, where my colleagues tried to quickly respond to the basic needs of forcibly displaced women. To say that I felt guilty for automatically leaving them alone in that difficult and critical moment is an understatement. Feeling guilty for things you are not guilty of is probably a syndrome among Armenian women that is passed down from our mothers and grandmothers: we are not good enough, we are not helpful or useful enough, we are not working, protecting, helping and caring enough, we aren't always enough... And these approaches become greater in crisis situations.

Arriving in Armenia and seeing the tired and desperate looks of people on the way, I realized that people are simply tired of continuous wars, deaths, losses and do not even have the strength to suffer or cry.

Դիմակայունություն և պայքար. Հայաստանում կանանց հիմնադրամի արձագանքը ճգնաժամին

Ելենա Սարգսյան
Հայաստանում կանանց Հիմնադրամ

Կանայք ճգնաժամային և պատերազմական իրավիճակներում

2023-ի սեպտեմբերի վերջին Իրանում էի՝ կանանց հիմնահարցերի վերաբերյալ ուսումնասիրական նպատակներով: Իրանում ինտերնետին և այլ կապի միջոցներին գրեթե հասանելիություն չունեի՝ այդ երկրում եղած սահմանափակումների պատճառով: Հպանցիկ տեղեկանում էի, որ Հայաստանում սահմանին լարվածություն է, և որ ամենուրեք խոսվում է Արցախի (Լեռնային Ղարաբաղի) բնակչության բռնի տեղահանության լուրերի մասին: Լրագրող ընկերներից ու այլ աղբյուրներից սարսափելի լուրեր էի ստանում, որոնք հանրայնացման ու հրապարակման ենթակա չէին. դրանք հիմնականում կանանց նկատմամբ տեղի ունեցող բռնության դեպքերի ու նրանց անձնական տվյալները հանրայնացնելու մասին էին: Ունակ չէի որևէ բան ընկալելու կամ զգալու առաջին օրերին: «Նորից կանայք, նորից կանայք, միշտ կանայք են տուժում ամենաշատը»,- սա այն միակ նախադասությունն էր տեղի ունեցողի մասին, որն անդադար պտտվում էր իմ գլխում:

Մինչև Հայաստան վերադառնալը մտքերով այնտեղ էի. Գորիսում էի՝ իրենց տունն ու հույսերը հեռվում թողած ու անցակետերում հուսահատ կանգնած մարդկանց շարքերում, Երևանում էի, մեր գրասենյակում էի, որտեղ գործընկերուհիներս շփոթված փորձում էին արագ արձագանք տալ բռնի տեղահանված կանանց առաջին անհրաժեշտության կարիքներին: Ասել, որ ինձ մեղավոր էի զգում այդ դժվար ու ճգնաժամային պահին ինքնըստինքյան նրանց մենակ թողնելու համար, նշանակում է ոչինչ չասել: Մեղավոր զգալ բաների համար, որոնցում մեղք չունես, երևի, սինդրոմ է Հայաստանում ապրող կանանց շրջանում, որ փոխանցվում է մեր մայրերից ու տատերից. բավականաչափ լավը չենք, բավականաչափ օգտակար չենք, բավականաչափ չենք աշխատում, պաշտպանում, օգնում, հոգ տանում... Եվ այս մոտեցումներն ավելի են թափ հավաքում ճգնաժամային իրավիճակներում:

In the evening, already at home, I wanted to understand how I can be useful before the morning finally dawns and I can go to work. Looking for community initiatives, self-organized groups, I searched on Facebook events to join them for helping forcibly displaced people. There was an interesting trend on Facebook: political analyses, accusations, insults, patriotic and pathetic speeches, mostly by men, and announcements about collecting data of shelters and houses, warm clothes and food by women.

Those “emotional” women who know everyone’s needs and are able to feel others’ pain as their own, those “emotional” women who are more rational and practical in crisis situations than those who label them as ‘too emotional’ and say that it’s a key reason for not involving them in political, negotiation and decision-making processes (as a result of which this crisis and devastating situation was created).

The experience of quick response of the Women’s Fund Armenia in a crisis situation

In the uncertain days of the beginning, the Women’s Fund Armenia was in constant contact with partner organizations and individuals in the marzes. We also received many calls from our partners and strangers asking for support or charity.

Quick response conversations and calls could last more than 30 minutes, during which people shared their feelings and described the terrible situation in the Syunik region: people simply slept outside, had no warm clothes, and were hungry for several days. There were stories of people dying, having heart attacks in the long traffic queues. In the most difficult situation, of course, women were the ones who remained in the shadows silently

Համենից էլ Հայաստան ու ճանապարհին տեսնելով մարդկանց հոգնած ու ընդարմացած հայացքները, հասկանացա, որ մարդիկ պարզապես հոգնել են անդադար պատերազմներից, մահերից, կորուստներից ու ուժ չունեն անգամ տառապելու կամ լացելու:

Երեկոյան արդեն տանը ուզում էի հասկանալ՝ ինչպես կարող եմ օգտակար լինել, մինչև առավոտը վերջապես կբացվի, և կգնամ աշխատանքի: Հասարակական նախաձեռնությունների, ինքնակազմակերպվող խմբերի փնտրտուքներով մտա Ֆեյսբուք՝ հասկանալու համար, թե որ խմբին կարող եմ միանալ՝ բռնի տեղահանված մարդկանց օգնելու համար: Հետաքրքիր տենդենց էր. քաղաքական վերլուծություններ, փնովանքներ, մեղադրանքներ հայհոյանքներ, հայրենասիրական պաթետիկ ճառեր՝ հիմնականում տղամարդկանց կողմից և ապաստարանների, տաք հագուստների ու սնունդի հավաքագրման մասին հայտարարություններ՝ կանանց կողմից:

Այն «Էմոցիոնալ» կանանց, որ գիտեն բոլորի կարիքները և կարողանում են ապրումակցել, այն «Էմոցիոնալ» կանանց, որ ճգնաժամային իրավիճակներում ավելի ռացիոնալ են և գործնական, քան նրանք, ովքեր կանանց հորջորջում են «Էմոցիոնալ»՝ նրանց ջնդրագրավելով այն քաղաքական, բանակցային գործընթացներում և որոշումների կայացման մեջ, որի արդյունքում սրտեղծվել էր այդ ճգնաժամային ցավալի վիճակը:

Հայաստանում կանանց հիմնադրամի արագ արձագանքման փորձը ճգնաժամային իրավիճակում

Հայաստանում կանանց հիմնադրամը սկզբի անորոշ օրերին անդադար կապի մեջ էր մարզերի գործընկեր կազմակերպությունների ու անհատների հետ: Մենք նաև ստանում էինք բազում զանգեր մեր գործընկերներից ու անծանոթ մարդկանցից, որոնք

and tirelessly carrying their burdens and worries, taking care of children, old or sick family members. Difficulties were doubled in the case of pregnant and breastfeeding women.

In such situations, we at the Fund realized that although those terrible details will not change anything at this moment (however painful it may sound) and that it is necessary to approach the issue more practically and start talking about what we should do, and engage in actual actions, but we also understood, that our partners who are in direct contact and communicate with the forcibly displaced people on a daily basis, see the pain and suffering of them, just need a safe and reliable space where they could be heard, where they could allow themselves to despair, cry, or to say that they

can no longer carry that burden. The people who listened and helped the displaced people day and night without any rest, they themselves needed to at least be heard and understood. So we listened to them as much as they needed.

A few days later, when there was already some clarity about what was happening and what the outcome of it all would be, the Women's Fund Armenia already launched a humanitarian rapid response program, including our partners in the communities where, according to our preliminary data on relocation of the forcibly displaced people.



դիմում էին աջակցություն ստանալու համար: Արագ արձագանքման զրույցներն ու զանգերը կարող էին տևել 30 րոպեից ավել, որոնց հիմնական ժամանակահատվածում մարդիկ պատմում էին իրենց ապրումները, նկարագրում էին սարսափելի իրավիճակը Սյունիքի մարզում. մարդիկ քնում էին դրսում, տաք շորեր չունեին, օրերով սոված էին մնացել: Պատմում էին դեպքեր, որ երկար ձգվող ճանապարհային հերթերի մեջ մարդիկ են մահացել, սրտի կամ ուղեղի կաթված ստացել: Ամենադժվար իրավիճակում, իհարկե, կանայք էին, որոնք այդ օրերին էլ ստվերում մնալով՝ լուռ ու անխոնջ տանում էին իրենց բեռն ու հոգսերը՝ խնամելով երեխաներին, ընտանիքի ծեր կամ հիվանդություններ ունեցող անդամներին: Կրկնակի էին դժվարությունները հղի և կրծքով կերակրող կանանց դեպքում:

Նման իրավիճակներում Հիմնադրամում գիտակցում էինք, որ թեպետ այդ տխուր մանրամասներն այս պահին որևէ բան չեն փոխելու (ինչքան էլ որ ցավալի հնչի), և որ անհրաժեշտ է առավել գործնական մոտենալ հարցին և սկսել խոսել մեր անելիքներից, ու բուն գործողություններով զբաղվել, բայց նաև, այնուամենայնիվ, հասկանում էինք, որ մեր գործընկերուհիները, որոնք անմիջական կապի մեջ են ու ամենօրյա ռեժիմով շփվում են բռնի տեղահանվածների հետ, տեսնում տեղահանվածների ցավն ու տառապանքը, պարզապես կարիք ունեն ապահով ու վստահելի մի տարածքի, որտեղ իրենց պարզապես կլսեն, որտեղ կարող են իրենք իրենց թույլ տալ հուսալքվել, լացել կամ ասել, որ այլևս չեն կարող այդ բեռը տանել: Մարդիկ, որոնք գիշեր-ցերեկ առանց հանգստի լսում ու օգնում էին տեղահանվածներին, հենց իրենք ունեին կարիք գոնե միայն լաված ու հասկացված լինելու: Ուստի մենք լսում էինք նրանց այնքան, ինչքան պետք էր:

Մի քանի օր անց, երբ արդեն որոշակի հստակություններ կային, թե ինչ է կատարվում,

We set ourselves the task of supporting our partners in every possible way and implementing all mechanisms to alleviate their already burdensome workload as much as possible. Adhering to its principles, the Fund was as flexible as possible while working with partner organizations during that period (and not only), taking on all the bureaucratic and technical parts, which, as our experience shows, always take the most resources and energy in the non-governmental sector.

We received feedback about the flexibility and effective cooperation of the Fund from the very beginning. Partners regularly mentioned during the conversations that it is easy to work with us, we are very flexible and do not make their work and life difficult. The words of one of the partners are very interesting: "It is pleasant to work with the WFA even in this unpleasant crisis situation." Of course, this may cause dissonance, however, we can say that we somehow managed to solve the problem in front of us, having as a background our previous experience during the 2020 war and Covid-19.

Thus, the first response of the Women's Fund was to provide basic necessities. Working and consulting with our partners, we decided to provide them with sub-grants because they had done a rapid needs assessment and based on that, would provide more targeted support. Later, we realized from the feedback of our partners that it was perhaps the best solution made at that time. Our partners also received support from other local and international foundations and organizations, which, however, were in the form of food and goods, which did not always serve the purpose: the packages contained items that the forcibly displaced people did not need at that

և որն է լինելու այդ ամենի հանգուցալուծումը, Հայաստանում կանանց հիմնադրամն արդեն ձեռնարկեց հումանիտար արագ արձագանքման ծրագիր՝ ներառելով այն համայնքների մեր գործընկերներին, որտեղ, մեր նախնական տվյալներով, ամենաշատն էին բռնի տեղահանվածները:

Մենք մեր առաջ խնդիր էինք դրել հնարավոր բոլոր ձևերով աջակցելու մեր գործընկերներին և գործադրելու բոլոր մեխանիզմները նրանց՝ առանց այն էլ ծանրաբեռնված աշխատանքը հնարավորինս թեթևացնելու համար: Հիմնադրամը, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, այդ ժամանակահատվածում (և ոչ միայն) գործընկեր կազմակերպությունների հետ աշխատելիս եղել է հնարավորինս ճկուն՝ իր վրա վերցնելով ողջ բյուրոկրատական և տեխնիկական մասերը, որոնք, ինչպես ցույց է տալիս մեր փորձը, մշտապես ամենաշատ ռեսուրսն ու էներգիան են խլում հասարակական ոլորտում աշխատող կազմակերպություններից ու անհատներից:

Հիմնադրամի ճկունության ու արդյունավետ համագործակցության մասին ֆիդբեքեր մենք ստանում էինք հենց սկզբից: Գործընկերները գրույցների ընթացքում պարբերաբար նշում էին, որ մեզ հետ հեշտ է աշխատելը, մենք շատ ճկուն ենք և չենք դժվարացնում նրանց աշխատանքն ու կյանքը: Հետաքրքրական է գործընկերներից մեկի խոսքը, թե «Հիմնադրամի հետ հաճելի է աշխատել նույնիսկ այս տհաճ ճգնաժամային իրավիճակում»: Սա, իհարկե, դիտոնանս կարող է առաջացնել, սակայն կարող ենք ասել, որ այս մասով մեր առջև դրված խնդրի լուծման հարցում ինչ-որ կերպ հաջողել ենք՝ աշխատանքի հետևում ունենալով նաև մեր նախորդ փորձառությունները Քովիդ-19-ի և 2020-ի պատերազմի ժամանակ:

Այդպես, Կանանց հիմնադրամի առաջին արձագանքը

moment, or food that they did not manage to use and expired.

It was an important and principled point for us to keep in the center of attention the forcibly displaced various marginalized groups, which were perhaps the most vulnerable and neglected during that period. Thus, the financial distribution was made considering those groups as well. During that time, we worked with organizations that specialize in working with specific groups of people, for example, people with HIV/AIDS.

During the entire period of implementation of the programs, the Women's Fund held consultations with partners, guiding them and pointing out the problems and needs that are specific to the displaced women. As a result of all this, in the first rapid response packages, all our partners included products corresponding to the specific needs of women: feminine hygiene and care items, including pads, panties, etc.

From the feedback of our partners, we understand that it was a pleasant surprise for all forcibly displaced women when they saw the contents of the packages. Many people were touched by this woman-centered approach, and some said that they had never received such a special treatment.

And indeed, now that we look back, we realize that it is not really a question of a few boxes of support (which in the case of a large family, are used up in a matter of days), but a question of delicate and sensitive approaches and attitudes towards women who are constantly overlooked. Those women came from a society that was militarized for decades, where the military was honored, its role was glorified and absolute, and perhaps the violence and wrong actions committed by the

եղավ առաջին անհրաժեշտության փաթեթների տրամադրումը: Աշխատելով ու խորհրդակցելով մեր գործընկերների հետ՝ մենք որոշեցինք նրանց տրամադրել ենթադրամաշնորհներ, քանի որ նրանք կատարել էին արագ կարիքների գնահատում և ելնելով դրանից՝ առավել թիրախային աջակցություն կցուցաբերեին: Հետագայում մեր գործընկերների հետադարձ կապից հասկացանք, որ դա այդ պահին արված, թերևս, լավագույն լուծումն էր: Մեր գործընկերները ստացել էին աջակցություն նաև այլ հիմնադրամներից և կազմակերպություններից, որոնք, սակայն, եղել են պարենի և իրերի տեսքով, ինչը միշտ չէ, որ ծառայել է բուն նպատակին. փաթեթներում եղել են իրեր, որոնց կարիքն այդ պահին չեն ունեցել բռնի տեղահանված մարդիկ, կամ սնունդ, որը նրանք չեն հասցրել օգտագործել, և ժամկետն անցել է:

Հիմնադրամի համար կարևոր և սկզբունքային կետ էր ուշադրության կենտրոնում պահել նաև բռնի տեղահանված տարբեր մարզինալ խմբերին, որոնք այդ ժամանակահատվածում, թերևս, ամենախոցելի էին ու անտեսվածը: Այդպիսով, ֆինանսական բաշխվածությունը կատարվել է՝ հաշվի առնելով նաև այդ խմբերին: Այդ ժամանակահատվածում աշխատել ենք այն կազմակերպությունների հետ, որոնք մասնագիտացված են կոնկրետ մարդկանց խմբերի հետ աշխատանքներում, օրինակ՝ ՄԻԱԿ/ՁԻԱՀ ունեցող մարդկանց հետ:

Ծրագրերի իրականացման ողջ ժամանակահատվածում Հայաստանում կանանց հիմնադրամը խորհրդատվություններ է անցկացրել գործընկերների հետ՝ ուղղորդելով նրանց և մատնանշելով այն խնդիրներն ու կարիքները, որոնք հատուկ են տեղահանված կանանց: Այդ ամենի արդյունքում արագ արձագանքման առաջին փաթեթներում մեր բոլոր գործընկերները ներառել էին հատուկ կանանց կարիքներին համարժեք ապրանքներ՝ կանացի հիգիենայի և խնամքի

latter were ignored or even worse, forgiven.

Those women came from a society where the interests of the army and the state always came first in all cases and circumstances. Those women have always been in a passive position. They did not make any decision, but they were always the main and direct bearers of the results of those decisions. They came from a society where they were asked to have many children, where their loved ones, their husbands, their 18-year-old sons were taken from them irrevocably, and only their bodies were returned (or even the bodies were not returned). They were born and brought up in a society where they were forced to be both father and mother, unpaid housewives, low paid workers, and unwitting border guards while cultivating their lands and gardens ...

... And suddenly, you simply show those oppressed and suffering women a little support according to their physiological and gender requirements, and it has a revolutionary effect on them. Their perceptions begin to change. They begin to feel important, they realize that their specific needs as women are important and superior, that the help is not only for their children or the elderly they care for, but also for themselves.

WFA has received hundreds of similar responses and comments, which are both heartening and profoundly binding for us.

After the first wave of the crisis: How to live and what to do?

Every third or fourth person in Armenia has a loss due to the military and border conflicts that happened in the last three decades and unfortunately this process is still going on. After this last unexpected and terrible event,

պարագներ, այդ թվում՝ միջադիրներ, վարտիքներ և այլն:

Մեր գործընկերներից ստացած արձագանքներից հասկանում ենք, որ բռնի տեղահանված բոլոր կանանց համար հաճելի անակնկալ է եղել, երբ տեսել են փաթեթների պարունակությունը: Շատերին հուզել է այդ կնակենտրոն մոտեցումը, ոմանք էլ ասել են, որ նման հատուկ վերաբերմունքի երբեք չեն արժանացել:

Եվ, իսկապես, հիմա երբ հետահայաց նայում ենք, հասկանում ենք, որ իրականում հարցը մի քանի տուփ աջակցությունը չէ, որը մեկ մեծ ընտանիքի դեպքում սպառվում է հաշված օրերի ընթացքում, այլ հարցը նրբանկատ ու զգայուն մոտեցումներն ու վերաբերմունքն են այն կանանց նկատմամբ, որոնք միշտ անտեսված են եղել իրենց համայնքում, որոնց կարիքները միշտ երկրորդական կամ երրորդական պլան են մղվել:

Այդ կանայք գալիս էին մի հասարակությունից, որը տասնյակ տարիներ եղել է ռազմականացված, որտեղ մեծարվել է զինվորականը, փառաբանվել ու բացարձակեցվել է նրա դերը, գուցե նաև անտեսվել ու ներվել են վերջինի գործած բռնարարներն ու սխալ գործողությունները: Այդ կանայք գալիս էին մի հասարակությունից, որտեղ բանակի ու պետության շահը միշտ գերակա է եղել բոլոր դեպքերում ու հանգամանքներում: Այդ կանայք միշտ կրավորական դիրքում են եղել. որևէ որոշում չեն կայացրել, բայց միշտ եղել են այդ որոշումների արդյունքում առաջացած խնդիրների հիմնական ու անմիջական կրողները: Այդ կանայք եկել էին մի վայրից, որտեղ նրանց առաջ միշտ դրված են եղել պահանջներ ու պարտավորություններ: Նրանք գալիս էին մի հասարակությունից, որտեղ նրանցից պահանջվել է ունենալ շատ երեխաներ, որտեղ նրանցից խլել են անվերադարձ իրենց սիրելիներին, ամուսիններին, 18-ամյա որդիներին ու վերադարձրել միայն նրանց

many people in Armenia are downhearted and discouraged. It can be said that the society is now in a state of mental paralysis, because all the resources that could help to overcome and get out of this state have been exhausted during these years. In the background of serious existential multifaceted questions, you are trying to find an answer to two simple questions: how to live and what to do now? We all understand that we need to act, but where to start, many are uncertain and indecisive.

In such situations, when you fall and reach the zero point, you have to start to stand up again with basic steps, even starting to learn to walk again. And we also condition our steps on that principle. Well-being and resilience is one of the primary and important directions of the Fund's activity, and in this difficult situation, they become perhaps the most important and primary principle.

After the initial intense phase of the crisis in Armenia subsided, and forcibly displaced people were temporarily provided with shelter and basic necessities, we made the decision to allocate our resources toward programs with longer-term effects. These initiatives are aimed at healing, empowering, and integrating forcibly displaced women into their new communities.

The Women's Fund Armenia attaches importance to the participation of the community in the decision-making process. Being faithful to our principles, we are guided by the opinions of our partner and ally organizations and individuals in making our decisions, taking into account their experience and knowledge. All our partners agree that there is a need for healing, empowerment and social integration programs for forcibly displaced women. Many highlight the creation of

մարմինները (կամ մարմինն էլ չեն վերադարձրել): Նրանք ծնվել և մեծացել են մի հասարակությունում, որտեղ ստիպված են եղել լինել և հայր, և մայր, և չվճարվող տնային տնտեսուհի, և ցածր վարձատրվող աշխատող, և ակամայից սահմանների պաշտպան՝ իրենց հողերն ու արտերը մշակելիս, և այս ցանկը կարելի է շատ երկար շարունակել...

... Եվ հանկարծ այդ ճնշված ու չարչարված կանանց դու պարզապես ցուցաբերում ես իրենց ֆիզիոլոգիական ու գենդերային պահանջներին համապատասխան մի չնչին աջակցություն, և դա նրանց մոտ հեղափոխական ազդեցություն է ունենում: Նրանց պատկերացումները սկսում են փոխվել: Նրանք սկսում են իրենց կարևոր զգալ, գիտակցում են, որ իրենց առանձնահատուկ կարիքները որպես կին կարևոր և գերակա են, որ օգնությունը միայն իրենց երեխաներինը կամ իրենց կողմից խնամվող ծերերինը չէ, այլ նաև՝ իրենցը:

Հիմնադրամը ստացել է նմանատիպ հարյուրավոր արձագանքներ ու մեկնաբանություններ, որոնք մեկը մյուսից հուզիչ են ու միևնույն ժամանակ՝ շատ պարտավորեցնող:

Տգնաժամի առաջին ալիքից հետո. ինչպե՞ս ապրել և ինչ անել

Հայաստանում ամեն երրորդ կամ չորրորդ մարդն ունի կորուստ վերջին երեք տասնամյակում տեղի ունեցած ռազմական, սահմանային բախումների պատճառով և, ցավոք, այս գործընթացը դեռ շարունակվում է: Այս վերջին անսպասելի ու սարսափելի իրադարձությունից հետո Հայաստանում այժմ շատերն են թևաթափ ու հուսալքված. կարելի է ասել՝ հասարակությունն այժմ հոգեկան պարալիզացման մեջ է, քանի որ այս տարիների ընթացքում սպառվել են բոլոր ռեսուրսներն ու պաշարները, որոնք կօգնեին հաղթահարել ու դուրս գալ այս վիճակից: Լուրջ էքզիստենցիալ

safe spaces for women. “Women overcome their problems more easily in a women’s environment,” said one of our partners.

In addition to the above, the well-being of the representatives of our partner organizations is also very important for us. After working with forcibly displaced people for months and experiencing their pain firsthand, many of our partners state that their staff is now in burnout. Considering this circumstance, the Women’s Fund Armenia has adopted a method that has never been used in Armenian practice: a mandatory action has been added to the sub-grant programs, which implies allocating a small part of the grant to the well-being and healing of the staff, through which they can have the opportunity to simply recharge, relax and/or hold sessions with psychologists or other specialists.

It is interesting that in the beginning, this new practice was very unusual and incomprehensible for almost everyone, and many understood by it the acquisition of some useful items, goods for the office, or training for the development of their skills. All of that gives us a lot to think about and these reflections show the status of women in our society that need changes. Our women don’t know what it means to rest, they don’t know what it means to spend any resources on themselves, and when you urge them to think and take care of themselves, they imagine all this in terms of work productivity and being useful to others.

Now the Fund is getting a lot of positive feedback about this innovation. All our partners state that they have never been treated like this by any donor and our partner relations eliminate the classic and patriarchal approaches to donor-grantee relations that exist in our country and outside.

բազմաբնույթ հարցերի ֆոնին փորձում ես գտնել երկու պարզ հարցի պատասխան՝ ինչպե՞ս ապրել ու ի՞նչ անել: Բոլորս հասկանում ենք, որ պետք է գործել, բայց թե որտեղից պետք է սկսել, շատերը չգիտեն ու չեն կողմնորոշվում:

Նման իրավիճակներում, երբ ընկնում ես ու հասնում գրոյական կետին, պետք է սկսես տարրական քայլերով նորից ոտքի կանգնել՝ ինչ-որ տեղ նույնիսկ նորից սկսելով սովորել քայլել: Եվ մենք նույնպես մեր քայլերը պայմանավորում ենք այդ սկզբունքով: Հիմնադրամի գործունեության առաջնահերթ և կարևոր ուղղություններից է ամօքումը և այս դժվարին իրավիճակում ամօքումը և դիմակայունությունը թերևս ամենակարևոր և առաջնային սկզբունքն է դառնում:

Երբ Հայաստանում ճգնաժամի առաջին ուժեղ ալիքն անցավ, և բռնի տեղահանված մարդիկ գոնե որոշ ժամանակով ապահովված էին տանիքով և սննդի ու հագուստի որոշակի պաշարով, մենք որոշեցինք մեր ռեսուրսները կենտրոնացնել առավել երկարաժամկետ ազդեցություն ենթադրող ծրագրերի վրա, որոնք ուղղված կլինեն բռնի տեղահանված կանանց ամօքմանը, զորեղացմանն ու նոր հասարակությունում ինտեգրմանը:

Հայաստանում կանանց հիմնադրամը ցանկացած որոշման կայացման հարցում կարևորում է համայնքի մասնակցությունը: Հավատարիմ լինելով մեր սկզբունքներին՝ մեր որոշումների կայացման հարցում այս դեպքում ևս մենք առաջնորդվում ենք մեր գործընկեր և համախոհ կազմակերպությունների ու անհատների կարծիքներով՝ հաշվի առնելով նրանց փորձը և գիտելիքները: Մեր բոլոր գործընկերները միաձայն նշում են, որ բռնի տեղահանված անձանց համար այժմ անհրաժեշտ են զորեղացման և հասարակության մեջ ինտեգրվելուն ուղղված ծրագրեր: Շատերը առանձնացնում են կանանց համար ապահով տարածքների ստեղծումը:

There is a good Armenian proverb that says that in times of difficulty and distress you learn who your true friends are.

And, indeed, it is so: as a result of these crises and difficulties that have been happening continuously in recent years, you start to review your life, your values, principles and all the ideas and beliefs that you are fighting for. In such situations, you understand that there is nothing more precious and valuable than human life. In such situations, every resource or object loses its former value, only simple human connections, care and love for one another remain, which can bring fantastic changes. And in this case, the role of the Women's Fund Armenia was not so much material but it was reflected in love, care and solidarity.

In those days, WFA became the symbolic bridge that brought together women with different experiences and destinies, it became an abstract safe space where one could despair, cry, share emotions, sympathize, gather strength and move forward. The Women's Fund became the space where many women felt important and understood that their needs, pains, feelings and emotions are important. The Fund also became a space where you could help and get the help you need without feeling under pressure.

After those disasters and the trials that may come in the future, you understand that everything is temporary (even pain and desperation) and there is one constant thing: love seasoned with selfless care, the ability to listen and understand, real actions that show that you are important and that you are not alone.

«Կանայք իրենց խնդիրներն ավելի հեշտ են հաղթահարում կանանց միջավայրում»,- ասել է մեր գործընկեր կազմակերպություններից մեկի ղեկավարը:

Բացի վերոնշյալը՝ մեզ համար նաև շատ կարևոր և առանցքային նշանակություն ունի հենց մեր գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների բարօրությունը: Ամիսներ շարունակ աշխատելով տեղահանված անձանց հետ և կրելով անմիջապես նրանց ցավը՝ մեր շատ գործընկերները նշում են, որ իրենց աշխատակազմն այժմ մասնագիտական այրման մեջ է: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Հայաստանում կանանց հիմնադրամը որդեգրել է հայաստանյան պրակտիկայում երբևէ չկիրառված մի մեթոդ. դրամաշնորհային ծրագրերում ավելացվել է ծրագրային գործողությունների մի կարևոր մաս, որն իրենից ենթադրում է դրամաշնորհի մի փոքր հատված հատկացնել աշխատակազմի բարօրությանը և ամրապնդել, որի միջոցով նրանք հնարավորություն կունենան պարզապես լիցքաթավելու, հանգստանալու և/կամ անցկացնելու հանդիպումներ հոգեբանների կամ այլ մասնագետների հետ:

Հետաքրքիր է, որ սկզբնական շրջանում գրեթե բոլորի համար այս նոր պրակտիկան շատ անսովոր ու անհասկանալի էր, և շատերը դրա տակ հասկանում էին գրասենյակի համար ինչ-որ օգտակար իրերի ձեռքբերում կամ իրենց կարողությունների ու հմտությունների զարգացման թրեյնինգների իրականացում: Այդ ամենը շատ մտածելու տեղիք է տալիս մեզ, և այդ պատկերացումները արտացոլում են մեր հասարակության մեջ կանանց կարգավիճակը. կանայք չգիտեն՝ ինչ է նշանակում հանգստանալ, չգիտեն՝ ինչ է նշանակում որևէ ռեսուրս իրենց վրա ծախսել, և երբ նրանց հորդորում են մտածել և հոգ տանել իրենց մասին, նրանք այդ ամեն ինչը պատկերացնում են աշխատանքային

արդյունավետության և մյուսներին օգտակար լինելու տեսանկյունից:

Այժմ Հիմնադրամը ստանում է բազմաթիվ դրական արձագանքներ մեր այս նորամուծության վերաբերյալ: Մեր բոլոր գործընկերները նշում են, որ իրենք երբեք որևէ դոնորի կողմից նման վերաբերմունքի չեն արժանացել, և որ մեր գործընկերային հարաբերությունները վերացնում են այն դասական և հայրիշխանական մոտեցումները դոնոր-ենթադրամաշնորհառու հարաբերությունների վերաբերյալ, որոնք կան մեր երկրում և անգամ մեր երկրի սահմաններից դուրս:

Հայկական մի լավ ասացվածք կա, որն ասում է, թե դժվարության և նեղության պահերին ես իմանում, թե ովքեր են քո իսկական ընկերները: Եվ, իսկապես, դա այդպես է. վերջին տարիներին անդադար տեղի ունեցող այս ճգնաժամերի ու դժվարությունների արդյունքում սկսում ես վերանայել քո կյանքը, քո արժեհամակարգը, սկզբունքները և բոլոր այն պատկերացումներն ու համոզմունքները, որոնց համար պայքարում ես: Նման իրավիճակներում հասկանում ես, որ մարդկային կյանքից թանկ ու արժեքավոր ոչինչ չկա: Նման իրավիճակներում ամեն ռեսուրս կորցնում է իր երբեմնի արժեքը, մնում են միայն պարզ մարդկային կապերը, միմյանց հանդեպ հոգատարությունն ու սերը, որը ֆանտաստիկ փոփոխություններ կարող է բերել: Եվ այս պարագայում Հայաստանում կանանց հիմնադրամի դերակատարումն, իմ կարծիքով, ոչ այնքան նյութական էր, որքան սիրո, հոգատարության և սոլիդարության մարմնացումը:

Հիմնադրամն այդ օրերին դարձավ այն սիմվոլիկ կամուրջը, որը համախմբեց տարբեր փորձառություններ ու ճակատագրեր ունեցող կանանց, այն դարձավ վերացական ապահով տարածքը, որտեղ կարելի էր հուսալքվել, լացել, կիսվել էմոցիաներով, կարելի էր ամոքվել, հավաքել

Read more on WFA



ուժերը ու շարժվել առաջ: Հիմնադրամը դարձավ այն տարածքը, որտեղ շատ կանայք իրենց կարևոր զգացին ու հասկացան, որ կարևոր են իրենց կարիքները, ցավերը, ապրումներն ու հույզերը: Հիմնադրամը նաև դարձավ մի տարածք, որտեղ դու քեզ կարևոր ու պիտանի էիր զգում, որտեղ դու կարողանում ես օգնել և առանց ճնշված զգալու ստանալ քեզ ցանկալի օգնությունը:

Այդ արհավիրքներից հետո և այն փորձությունները, որոնք, գուցե, գան ապագայում, հասկանում ես, որ ամեն ինչ անցողիկ ու ժամանակավոր է, և կա մեկ հաստատուն բան՝ սերը՝ համեմված անշահախնդիր հոգատարությամբ, լսելու ու հասկանալու կարողությամբ, իրական գործողություններով, որոնք ցույց են տալիս, որ դու կարևոր ես, որ դու միայնակ չես:

Կարդալ ավելին ՀԿՀ-ի մասին



Zooming in and out: 'Foreign Agents Law' with National and Regional Dimensions of Crisis in Georgia

Ekaterine Danelia, Nurjan Estebe, Nino Ugrekhelidze / Dalan Fund

After the dissolution of the Soviet Union and its Communist Block in 1991, some Western political elites were celebrating 'the End of History' and the inevitable victory of liberal democracy worldwide. However, the political events over the last three decades in Central and Eastern Europe, Caucasus, Central and North Asia (CEECCNA) regions (and not only) have demonstrated the opposite, as the democratization process of the post-soviet countries has been caught at the crossroads of democratic development and authoritarianism.

Due to their common past, these regions are often portrayed as a monolithic entity of post-Soviet or post-Communist states, nonetheless their political trajectories have been diverse and complex. However, these regions do have a particular characteristic in common: an accumulated crisis that re-emerges and manifests in various shapes and defines the current moment and future aspirations and hopes for democratic changes in these regions. These are invisibilized crises that go unnoticed by the international communities, especially when they impact the historically excluded communities across the CEECCNA regions.

The past two decades have witnessed a significant decline¹ in global democracy. According to the Civicus Monitor², which tracks civic space across the world, there are five major tactics that governments are using to repress the civic space: intimidation, detaining protestors, censorship, protest disruption, and restrictive laws. Based on the Civicus Monitor 2023 report³, the CEECCNA countries are

Հայացք մոտիկից և հեռվից. Վրաստանում «օտարերկրյա գործակալների մասին օրենքի» պատճառով ստեղծված ճգնաժամի ազգային և տարածաշրջանային չափումները

Եկատերինե Դանելիա, Նուրջան Էստեբես, Նինո Ուգրեխելիձե / «Դալան» հիմնադրամ

1991 թվականին Խորհրդային Միության և դրա կոմունիստական բլոկի լուծարումից հետո որոշ արևմտյան երկրների քաղաքական վերնախավը տոնում էր «Պատմության ավարտը» և ամբողջ աշխարհում լիբերալ ժողովրդավարության անխուսափելի հաղթանակը: Այնուամենայնիվ, վերջին երեք տասնամյակների ընթացքում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի (անգլ.՝ CEECCNA) տարածաշրջաններում (և ոչ միայն) հակառակն ապացուցեցին: Հետխորհրդային երկրների ժողովրդավարացման գործընթացը կանգնած է ժողովրդավարական զարգացման և ավտորիտարիզմի խաչմերուկում:

Հաշվի առնելով ընդհանուր անցյալ ունենալու հանգամանքը՝ այս տարածաշրջանները հաճախ ներկայացվում են որպես հետխորհրդային կամ հետկոմունիստական պետությունների միաձուլյ միավոր: Բայց և այնպես նրանց անցած քաղաքական ուղին եղել է տարբեր և խրթին: Այնուամենայնիվ, այս տարածաշրջաններն ունեն մեկ ընդհանրություն՝ կուտակված ճգնաժամ, որը վերստին երևան է գալիս և դրսևորվում տարբեր ձևերով՝ սահմանելով այս տարածաշրջաններում ժողովրդավարական փոփոխությունների ներկան, ինչպես նաև ապագա նկրտումները և հույսերը: Սրանք անտեսանելի ճգնաժամեր են, որոնք աննկատ են մնում միջազգային հանրությունների կողմից, հատկապես, երբ վերաբերում են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի տարածաշրջանների՝ պատմականորեն բացառված համայնքներին:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում աշխարհում

categorized as follows:

Closed: Russia, Belarus, Azerbaijan, Uzbekistan, Turkmenistan, Tajikistan;

Repressed: Kazakhstan and Kyrgyzstan;

Obstructed: Ukraine, Poland, Hungary;

Narrowed: Armenia, Georgia, Moldova, Romania, Slovakia.

All the above-listed tactics are widespread among CEECCNA countries, however, adopting the restrictive laws to shrink the civic space further has been one of the major trends across these regions since 2012. Over the past two decades, eight countries within the CEECCNA geographies, either adopted or attempted to adopt Russian-style “Foreign Agent” law. In certain cases, such as Belarus, the law may not be enacted officially, but the practice of repressions persists. The most recent cases of establishing new restrictive measures over independent civil society organizations and media have been tracked in Slovakia, Kyrgyzstan, and Georgia.

Imposing legal restrictions on civil society is a common approach to restrict funding for civil society organizations (CSOs) and independent media by implementing foreign influence registry laws⁴. These anti-democratic legislative shifts lead to a broad spectrum of human rights crises, fueled by massive propaganda machinery to polarize societies further. The adoption of the ‘Foreign Agent’ style laws breaches the self-determination, universal human rights, and freedoms of people, and leads to the crackdown of democracies, including brutal human rights violations, unlawful arrests, and complete closure of civic space.

Ժողովրդավարության զգալի անկում¹ է գրանցվել: Համաձայն Civicus Monitor² գործիքի, որը գրանցում է քաղաքացիական միջավայրի վիճակը ողջ աշխարհում, տարբեր երկրների իշխանություններ օգտագործում են 5 մարտավարություն՝ միտված քաղաքացիական մասնակցությունը ճնշելուն: Դրանք են՝ ահաբեկումը, ցուցարարներին բերման ենթարկելը, գրաքննությունը, բողոքի ակցիաներին խոչընդոտելը և սահմանափակող օրենսդրության ընդունումը: Civicus Monitor-ի 2023թ. զեկուլցում³ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի երկրները դասակարգվում են հետևյալ կերպ.

Արգելափակված (closed)՝ Ռուսաստան, Բելառուս, Ադրբեջան, Ուզբեկստան, Թուրքմենստան, Տաջիկստան,

Ճնշված (repressed)՝ Ղազախստան և Ղրղզստան,

Խոչընդոտներով (obstructed)՝ Ուկրաինա,

Լեհաստան, Հունգարիա,

Սահմանափակված (narrowed)՝ Հայաստան,

Վրաստան, Մոլդովա, Ռումինիա, Սլովակիա:

Վերոնշյալ բոլոր մարտավարությունները լայնորեն տարածված են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի երկրներում, սակայն քաղաքացիական մասնակցության լրացուցիչ սահմանափակմանն ուղղված համապատասխան օրենքների ընդունումը 2012 թվականից ի վեր ավելի ակնառու գործելակերպ է դարձել այս տարածաշրջաններում: Վերջին երկու տասնամյակների ընթացքում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի ութ երկրներ կամ ընդունել են, կամ փորձել են Ռուսաստանի օրինակով ընդունել այսպես կոչված օտարերկրյա գործակալների մասին օրենքը: Որոշ դեպքերում (օրինակ՝ Բելառուսում), օրենքը կարող է և պաշտոնապես ընդունված չլինել, սակայն բռնաճնշումների պրակտիկան համատարած է: Անկախ քաղաքացիական հասարակության

Human Rights Crisis in Georgia: National and Regional Dimensions

The adoption of the law on ‘Transparency of Foreign Influence’ in Georgia exemplifies the commonalities among the countries of CEECCNA regions, influenced by the Russian imperialist playbook. After an initial attempt in 2023, in March 2024, Georgian Dream⁵, the ruling party, re-introduced the Law on Transparency of Foreign Influence.

In February 2023⁶, the same bill was withdrawn due to public outrage for what it meant to Georgian sovereignty, democracy, and freedom. Any Georgian-language media, broadcaster, and non-governmental organization (NGO) registered in Georgia will be directly affected by the law if over 20% of their annual income comes from overseas. Such media and NGOs will be forced to register on a ‘Foreign Influence Agents Registry’ and disclose foreign funding. If they fail or resist doing so, they will risk fines up to 25,000 Georgian Lari (US \$9,400), which is not a one-time measure but will be followed by a series of fines until the organization registers or goes bankrupt.

Hundreds of thousands of Georgians have taken to the streets to fight against the draft law in Tbilisi since April 2024. The actions taken by the local civil society, students, academics, and youth have mobilized the wider international communities and solidarity.

Regardless of the pushback, the Georgian Parliament adopted the law which will come into full force as of early August.

In addition to this, the ruling party initiated a new draft law on anti-LGBT propaganda⁷, has already canceled gender quotas⁸ in the parliament in April 2024, announced intended restrictions on abortion,

կազմակերպությունների և լրատվամիջոցների նկատմամբ նոր սահմանափակող միջոցների կիրառման ամենավերջին դեպքերը գրանցվել են Սլովակիայում, Ղրղզստանում և Վրաստանում:

Քաղաքացիական հասարակության նկատմամբ իրավական սահմանափակումների կիրառումը համատարած մոտեցում է: Օտարերկրյա ազդեցության գրանցման մասին օրենքների⁴ ընդունմամբ փորձ է արվում սահմանափակել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և անկախ լրատվամիջոցների ֆինանսավորումը: Այս հակաժողովրդավարական օրենսդրական փոփոխությունները հանգեցնում են մարդու իրավունքների իրացման ճգնաժամերի, ինչին էլ գումարվում է հասարակությունների բևեռացմանն ուղղված քարոզչամեթոդային զանգվածային օգտագործումը: Այսպես կոչված օտարերկրյա գործակալների մասին օրենքների ընդունումը խախտում է անձանց կամարտահայտման իրավունքը, մարդու համընդհանուր իրավունքները և ազատությունները և հանգեցնում ժողովրդավարական համակարգերի ձախողման՝ ներառյալ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ապօրինի ձերբակալությունների և քաղաքացիական մասնակցության ամբողջական արգելափակման:

Վրաստանում մարդու իրավունքների իրացման ճգնաժամի ազգային և տարածաշրջանային չափումները

Վրաստանում «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի ընդունումը վկայում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի տարածաշրջանների երկրների միջև առկա ընդհանրությունների մասին, քանի որ դրանք իրենց վրա կրում են Ռուսաստանի կայսերապաշտական ռազմավարության ազդեցությունը: 2023 թվականի

and amended the tax law allowing so-called offshore money to be laundered⁹ in Georgia. This authoritarian turn of the government compromises Georgia's democratic course, sovereignty, and freedom.

It is critical to note that the impact of the Georgian 'Foreign Influence' law is wider than a single country issue as it directly affects not only Georgian civil society and independent media but also the activists and organizations from Eastern Europe, Caucasus, and Central and North Asia that had sought what seemed like a safe refuge in Georgia.

Due to the regressive and authoritarian regimes (e.g. Azerbaijan, Belarus, Russia, Kyrgyzstan, Turkmenistan) and the ongoing war in Ukraine, activists and physically and/or fiscally relocated organizations also face direct impact of these legislative shifts.

Russia¹⁰ was one of the first countries, acting as a regional trendsetter, to adopt the law on foreign agents in 2012. For more than ten years, it has been a tool for Putin's authoritarian regime instrumentalizing the law for mass detentions of protestors, shut down of CSOs, and criminalization of pro-democratic organizing. Russian activists and journalists, similarly to Belarussian¹¹, have fled to various parts of Europe, many of whom chose Georgia as their point of destination.

Georgia has also been a place of refuge for Azerbaijani¹² journalists and human rights activist. From 2013 to 2015, the Azerbaijani government adopted repressive laws targeting NGOs, resulting in the imprisonment of many activists, travel bans, and the freezing of bank accounts. Due to Georgia's proximity, lenient immigration policies, and developed civil society, many activists settled in Georgia to continue their organizing in exile.

ձախողված փորձից հետո՝ 2024 թվականի մարտին⁵, իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը կրկին շրջանառության մեջ դրեց «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի նախագիծը:

2023 թվականի փետրվարին⁶ նույն օրինագիծը հետ էր կանչվել հանրային վրդովմունքի պատճառով, որի հիմքում Վրաստանի ինքնիշխանության, ժողովրդավարության և ազատության հետ կապված մտահոգություններն էին: Վրաստանում գրանցված վրացալեզու ցանկացած լրատվամիջոց, հեռարձակող և հասարակական կազմակերպություն (ՀԿ) ուղղակիորեն ընկնելու է այս օրենքի կարգավորման տակ, եթե նրանց տարեկան եկամտի 20%-ից ավելին ստացվում է արտերկրից: Նման լրատվամիջոցները և հասարակական կազմակերպությունները ստիպված են լինելու գրանցվել «Օտարերկրյա ազդեցության գործակալների ռեգիստրում» և բացահայտել իրենց օտարերկրյա ֆինանսավորումը: Եթե այդ կազմակերպությունները դա չանեն կամ դիմադրեն, նրանք կարող են տուգանվել մինչև 25,000 վրացական լարի (9,400 ԱՄՆ դոլար) գումարով, ինչը միանգամայն կիրառման տուգանք չէ, այն է՝ կազմակերպությունը տուգանվելու է այնքան ժամանակ, մինչև կգրանցվի կամ կանանկանա:

2024 թվականի ապրիլից Թբիլիսիում հարյուր հազարավոր վրացիներ դուրս են եկել փողոց՝ պայքարելու օրենքի նախագծի դեմ: Տեղի քաղաքացիական հասարակության, ուսանողների, ակադեմիական ոլորտի ներկայացուցիչների և երիտասարդության կողմից ձեռնարկված գործողությունները համախմբել են միջազգային հանրությանը՝ արժանանալով վերջինիս համերաշխությանը:

Այնուամենայնիվ, Վրաստանի խորհրդարանն ի վերջո ընդունեց օրենքը, որն ուժի մեջ կմտնի օգոստոսի սկզբից:

Hoping for a safer space, Georgia was a go-to for Kyrgyz activists who fled their country due to the recent adoption of a Russian-style foreign agent law in April 2024. First introduced in 2014, after a decade of erosion of human rights and government-orchestrated propaganda against civil society, Kyrgyzstan has already detained journalists¹³ and liquidated independent media outlets, as well as non-governmental organizations.

Before the initiation of these regressive legislative shifts, there are early signs in the rhetorics of the governments, and their strategic communications to detect the crises emerging on the horizon. There are common threads and strategies from the Russian authoritarian playbook commonly used by repressive governments across CEECCNA:

- Authoritarian turns do not happen overnight: the decline in democracy, violation of freedom of speech, and discrimination against LGBTQI activists started long before the adoption of the foreign agent laws. It's a well-calculated process that gradually shrinks space for democracy and access to human rights for all;
- These regressive legislative turns do not stop at Foreign Agent's Laws only, it come as a full package: it is followed by the adoption of laws criminalizing queer people by banning the spread of information about LGBTQI people, rights, and identities among minors;
- Governments use propaganda

Բացի այդ՝ իշխող կուսակցությունը նախաձեռնել է ընդդեմ ԼԳԲՏ համայնքի քարոզչության մասին օրենքի նոր նախագիծ⁷, 2024 թվականի ապրիլին չեղյալ է հայտարարել խորհրդարանում գենդերային քվոտաները,⁸ հայտարարել է հղիության արհեստական ընդհատման իրավունքի նախատեսվող սահմանափակումների մասին և փոփոխել հարկային օրենսդրությունը, ինչը թույլ կտա, որ այսպես կոչված օֆշորային գումարները լվացվեն⁹ Վրաստանում: Իշխող ուժի կողմից անցումն այս ավտորիտար քաղաքականությանը մարտահրավեր է նետում Վրաստանի ժողովրդավարական ուղղվածությանը, ինքնիշխանությանը և ազատությանը:

Այստեղ կարևոր է նշել, որ «օտարերկրյա ազդեցության մասին» վրացական օրենքը միայն այդ երկրի խնդիրը չէ, քանի որ այն ուղղակիորեն ազդում է ոչ միայն Վրաստանի քաղաքացիական հասարակության և անկախ լրատվամիջոցների, այլև Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի տարածաշրջանների երկրներում գործող ակտիվիստների և կազմակերպությունների վրա, քանի որ այս կազմակերպություններից շատերը Վրաստանը որպես ապահով ապաստան էին դիտարկում:

Հեղափոխական և ավտորիտար ռեժիմների (ինչպիսիք են՝ Ադրբեջանը, Բելառուսը, Ռուսաստանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը) և Ուկրաինայում շարունակվող պարերազմի պարճառով ակտիվիստները և ֆիզիկապես կամ ֆիսկալ առումով տեղափոխված կազմակերպությունները նույնպես ենթակա են այս օրենսդրական փոփոխությունների անմիջական ազդեցությանը:

Ռուսաստանը¹⁰ դարձավ տարածաշրջանում համապատասխան միտումներ ձևավորող առաջին երկրներից, երբ 2012 թվականին

and derogatory language as tools to create a divisive narrative in society, where those who oppose the government are labeled as agents of foreign influence;

- Governments widely use the concepts of ‘transparency of foreign influence’ and ‘anti-colonial’ stance towards the West to build a strategic narrative around the state sovereignty, statehood, and non-interference of foreign powers in domestic politics;
- Anti-gender, anti-democracy, and anti-right organizers are given fertile soil, and authoritarian regimes instrumentalize them to attack civil society and independent media, etc.

The laws have major consequences for building collective power among grassroots organizers, movements, trade unions, and community-based initiatives. Cross-regional and cross-movement solidarity is at stake and needs deep strategizing among human rights funders globally, and social justice organizers and movements on the ground. These conversations need to center sustainability of grassroots organizing, and the prevention of the domino effect of spreading these laws in other parts of the regions and the world.

Building a Funding Response and Preparedness

Social justice movements are holding the line for democracy and freedom. They scan the horizon and local contexts, pass a signal when crises are

ընդունեց օտարերկրյա գործակալների մասին օրենքը: Ավելի քան տասը տարի այն օգտագործվել է Պուտինի ավտորիտար ռեժիմի կողմից՝ ցուցարարներին զանգվածաբար բերման ենթարկելու, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ փակելու և ժողովրդավարական կազմակերպությունների գործունեությունը քրեականացնելու նպատակով: Ռուս, ինչպես նաև բելառուս¹¹ ակտիվիստներն ու լրագրողները փախել են Եվրոպայի տարբեր երկրներ: Շատերը որպես վերջնականապես հաստատվելու վայր ընտրել են հենց Վրաստանը:

Վրաստանում են ապաստանել նաև ադրբեջանցի¹² լրագրողներ և իրավապաշտպաններ: 2013-2015 թվականներին Ադրբեջանի կառավարությունն ընդունել է ՀԿ-ներին թիրախավորող ճնշող օրենքներ, ինչի հետևանքով բազմաթիվ ակտիվիստներ բանտարկվել են, նրանց նկատմամբ կիրառվել է երկրից բացակայելու արգելքը, նրանց բանկային հաշիվներն են սառեցվել: Հաշվի առնելով Վրաստանի մոտ գտնվելը՝ այդ երկրում մեղմ միգրացիոն քաղաքականությունը և զարգացած քաղաքացիական հասարակություն ունենալու հանգամանքը՝ շատ ակտիվիստներ հաստատվել են Վրաստանում՝ շարունակելու իրենց գործունեությունը աքսորի մեջ:

2024 թվականի ապրիլին Ղրղզստանը Ռուսաստանի օրինակով ընդունեց այսպես կոչված օտարերկրյա գործակալների մասին օրենքը, ինչից հետո շատ ղրղզ ակտիվիստներ, ավելի ապահով տարածք գտնելու ակնկալիքով, լքեցին իրենց երկիրը և հաստատվեցին Վրաստանում: Այն առաջին անգամ ներդրվել էր 2014 թվականին, ինչին հետևել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում հետընթացի մի ամբողջ տասնամյակ: Ղրղզստանն արդեն հասցրել է ձերբակալել մի շարք լրագրողների¹³ և լուծարել անկախ լրատվամիջոցներ, ինչպես նաև հասարակական կազմակերպություններ:

emerging, and are the first ones, and best placed to respond. As an activist-led funding intermediary, at Dalan Fund¹⁴, we know how critical it is to provide timely and flexible resources not only for emergencies but mid- and long-term responses, but we are on a mission to mainstream crisis preparedness.

Throughout crisis funding in Georgia, we observed a pattern of needs re-emerging in local organizing and movement-led crisis response simultaneously addressing the level of preparing for diverse scenarios, developing alternative legal, fiscal, and physical infrastructure, and most importantly, building infrastructure of care and mutual aid:

- **Physical and Digital Security, and Psycho-Social Support:** Given that smear campaigns, physical and digital attacks, and intimidation of activists are common strategies, holistic safety of activists is critical such as temporary relocation efforts, personal data protection, collective care, psychological support;
- **Legal Support and Administrative Costs:** Legal assistance, advice, and consultation on exploring alternatives for relocating or mitigating risks, legal documentation of human rights violations, and Organizing, mobilization, administrative costs, and any other needs identified by groups;

Մինչ այս ռեգրեսիվ օրենսդրական փոփոխությունները նախաձեռնելը, իշխանությունների հռետորաբանության և ռազմավարական հաղորդակցության մեջ նկատվում են վաղ նշաններ, որոնք թույլ են տալիս կանխատեսել գալիք ճգնաժամերը: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի երկրների ռեպրեսիվ իշխանությունները հաճախ կիրառում են Ռուսաստանի ավտորիտար ռազմավարության մի շարք հնարքներ.

- Դեպի ավտորիտարիզմ շրջադարձերը մեկ գիշերվա ընթացքում չեն լինում. ժողովրդավարական հետընթացը, խոսքի ազատության խախտումները և ԼԳԲՏԻ ակտիվիստների նկատմամբ խտրականությունը սկսվել են օտարերկրյա գործակալների մասին օրենքների ընդունումից շատ ավելի առաջ: Սա լավ հաշվարկված գործընթաց է, որն աստիճանաբար նվազեցնում է ժողովրդավարության և մարդու իրավունքների հասանելիությունը:
- Այս օրենսդրական հետընթացները չեն սահմանափակվում միայն օտարերկրյա գործակալների մասին օրենքներով, այլ ամբողջական փաթեթի մաս են կազմում: Դրանց հաջորդում են քվիր անձանց քրեականացնող օրենքները, որոնցով արգելվում է անչափահասների շրջանում ԼԳԲՏԻ անձանց, նրանց իրավունքների և ինքնության

- **Strategic communications and narrative change:** Media campaigning, debunking counter-narratives, address disinformation and misinformation led by government;
- **Coordination and alliances:** Mobilizing cross-sectorial response and strategies to address various scenarios in the rapidly changing context, etc.

To effectively respond to the crisis in Georgia and across the CEECCNA regions, a multifaceted funding and organizing approach is needed that would center on financial flexibility, capacity building, strategic communications, knowledge production, narrative change, and building collective power and advocacy campaigns.

It is foundational to acknowledge that on the one hand, the regions are experiencing rapidly rising authoritarianism, and on the other hand, the regions are deprioritized by the funding ecosystem. While CEECCNA movements fight against authoritarian regimes,¹⁵ the data from the HRFN's latest report *The Trust Gap*¹⁶ shows that in 2019, \$4.1 billion was distributed to human rights around the world but only \$89 million (2%) was allocated to Eastern Europe and Central Asia.

As the research on *Where is the Money for CEECCNA Regions* (to be published in Fall 2024) highlights, it is time for philanthropy to show up for us and with us, in a different way.¹⁷ Here are key recommendations that can move a needle towards better-resourced movements in their work against emerging crises:

մասին տեղեկատվության տարածումը:

- Իշխանություններն օգտագործում են քարոզչական հնարքներ և արժանապատվությունը նվաստացնող բառապաշար՝ ստեղծելու հասարակությանը պառակտող պատմություններ, որոնց շրջանակում նրանք, ովքեր դեմ են իշխանություններին, պիտակվում են որպես օտարերկրյա ազդեցության գործակալներ:
- Իշխանությունները լայնորեն կիրառում են «արտաքին ազդեցության թափանցիկություն» և «Արևմուտքի նկատմամբ հակազաղութային դիրքորոշում» հասկացությունները՝ զարգացնելու ռազմավարական նարատիվը պետության ինքնիշխանության, պետականության և ներքին քաղաքականությանը արտաքին ուժերի չմիջամտելու վերաբերյալ:
- Հակազենդերային, հակաժողովրդավարական և ընդդեմ իրավունքների շարժումների կազմակերպիչների համար պարարտ հող է ստեղծվում, իսկ ավտորիտար ռեժիմները նրանց օգտագործում են քաղաքացիական հասարակության և անկախ լրատվամիջոցների վրա իրենց հարձակումներում:

- **Trust the people in and from the regions:** “Just one in 10 grant dollars for Eastern Europe and Central Asia is granted directly to in-region recipients as flexible support”. Fund mechanisms and funds created for, and by the people from the regions.
- **Fund boldly and creatively:** Give unrestricted long-term funding to mechanisms and the funds in, for, and in front of the regions to make decisions on how, to whom, and in what shape the funds get distributed.
- **Respect diverse forms of organizing and advocacy:** Understand that visibility and success may look different in various contexts. In more authoritarian regimes, creative and discreet forms of resistance are crucial for the safety and effectiveness of activists. As a Central Asian activist shared, “Underground work is invisible, but the more authoritarian the regime, the more creative our ways of resistance”.

The struggle for democracy and human rights in the CEECCNA regions, as exemplified by the recent developments in Georgia, underscores the urgent need for global solidarity and strategic funding.

Now more than ever, it is imperative for philanthropists and human rights organizations

Այս օրենքները լուրջ հետևանքներ ունեն արմատաբուխ շարժումների, արհմիությունների և համայնքային նախաձեռնությունների՝ հավաքական ուժ ձևավորելու կարողության տեսանկյունից: Տարածաշրջանների և շարժումների միջև համերաշխությունը վտանգված է, և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի ֆինանսավորողները պետք է համաշխարհային մակարդակով ռազմավարություններ մշակեն, իսկ սոցիալական արդարության համար պայքարող շարժումներն էլ դա անեն տեղական մակարդակով: Այս քննարկումները պետք է շեշտադրեն արմատաբուխ շարժումների կայունությունը և այս տարածաշրջաններում, և աշխարհի այլ մասերում դոմինոյի էֆեկտի սկզբունքով այս օրենքների տարածման կանխարգելումը:

Ֆինանսավորման տեսքով արձագանքում և պատրաստվածություն

Հանուն սոցիալական արդարության շարժումները ժողովրդավարության և ազատության պաշտպանության առաջնագծում են: Դրանք դիտարկում են համատեքստը, ճգնաժամերի ի հայտ գալու դեպքում համապատասխան ազդանշան են փոխանցում և իրավիճակին առաջին արձագանքողն են: Որպես ակտիվիստների կողմից ղեկավարվող և ֆինանսավորման տրամադրումն ապահովող միջնորդ կազմակերպություն՝ «Դալան» հիմնադրամում¹⁴ մենք գիտենք, թե որքան կարևոր է ժամանակին և ճկուն մոտեցմամբ ռեսուրսների տրամադրումը ոչ միայն արտակարգ իրավիճակներում, այլև միջնաժամկետ և երկարաժամկետ արձագանքման համար: Մեր առաքելությունն է աջակցել ճգնաժամերին համակարգված պատրաստվածությանը: Վրաստանում ճգնաժամային ֆինանսավորման ամբողջ ընթացքում մենք նկատում էինք օրինաչափություն, այն է՝ տեղական մակարդակում աշխատող շարժումներն ունեին կրկնվող կարիքներ:

to prioritize the CEECCNA regions, ensuring that activists on the front lines have the resources and support they need to continue their vital work.

Այդ կարիքներից են՝ տարբեր սցենարներին պատրաստված լինելը, այլընտրանքային իրավական, հարկաբյուջետային և ֆիզիկական ենթակառուցվածքներ զարգացնելը և ամենակարևորը՝ խնամքի և փոխօգնության ենթակառուցվածքներ ստեղծելը:

- **Ֆիզիկական և թվային անվտանգություն, հոգեոցիալական աջակցություն.** Հաշվի առնելով այն, որ զրպարտիչ արշավները, ֆիզիկական և թվային հարձակումները և ակտիվիստների ահաբեկումը համատարած ռազմավարություններ են, խիստ կարևոր է աջակցել ակտիվիստների համապարփակ անվտանգության ապահովմանը: Այդպիսի միջոցառումներից են՝ ժամանակավորապես տեղափոխվելը, անձնական տվյալների պաշտպանությունը, կոլեկտիվ խնամքը, հոգեբանական աջակցությունը:
- **Իրավաբանական աջակցություն և վարչական ծախսեր.** Իրավաբանական օգնություն և խորհրդատվություն՝ կապված տեղափոխման այլընտրանքների ուսումնասիրման կամ ռիսկերի նվազեցման, մարդու իրավունքների խախտումների իրավական փաստագրման հետ, ինչպես նաև խմբերի վերհանած կազմակերպչական, վարչական ծախսերի և այլ կարիքների հետ:

— **Ռազմավարական հաղորդակցություն և նարատիվների փոփոխություն.**

Մեդիա արշավներ, կեղծ նարատիվների պսակազերծում, իշխանությունների կողմից տարածվող դիտավորյալ և ոչ դիտավորյալ ապատեղեկատվության հասցեագրում:

— **Համակարգում և դաշինքների ստեղծում.** Միջուրտային արձագանքների և ռազմավարությունների մոբիլիզացում՝ հասցեագրելու տարբեր սցենարներ արագ փոփոխվող իրավիճակներում, և այլն:

Վրաստանում և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի երկրների տարածաշրջաններում ճգնաժամերին արդյունավետ արձագանքելու համար անհրաժեշտ է ֆինանսավորման և կազմակերպման բազմակողմ մոտեցում, որը շեշտը կդնի ֆինանսական ճկունության, կարողությունների զարգացման, ռազմավարական հաղորդակցության, գիտելիքի ստեղծման, նարատիվների փոփոխության և հավաքական ուժի և շահերի պաշտպանության արշավների վրա:

Շատ կարևոր է գիտակցել, որ մի կողմից տարածաշրջաններում գլուխ է բարձրացնում ավտորիտարիզմը, իսկ մյուս կողմից էլ այդ տարածաշրջանների երկրների ֆինանսավորումն այլևս առաջնահերթություն չի համարվում: Մինչ այդ երկրներում տարբեր շարժումներ պայքարում են ավտորիտար ռեժիմների դեմ,⁵ Մարդու իրավունքների հիմնադրամների ցանցի (HRFN) The

Trust Gap¹⁶ զեկույցում տեղ գտած տվյալները ցույց են տալիս, որ 2019 թվականին ամբողջ աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին հատկացվել է 4,1 միլիարդ դոլար, սակայն Արևելյան Եվրոպային և Կենտրոնական Ասիային հատկացվել է ընդամենը 89 միլիոն դոլար (այդ գումարի 2%-ը):

Ինչպես նշվում է Where is the Money for CEECCNA Regions (Ուրտեղ են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի տարածաշրջանների համար նախատեսված գումարները) թեմայով հետազոտության մեջ, որը հրապարակվելու է 2024 թվականի աշնանը, ժամանակն է, որ ֆիլանթրոպիան մեզ համար և մեզ հետ աշխատելու նոր սկզբունքներ որդեգրի:¹⁷ Ստորև ներկայացված են հիմնական առաջարկությունները, որոնք կարող են նպաստել, որ ի հայտ եկող ճգնաժամերի պայմաններում շարժումները պատշաճ ռեսուրսներ ունենան.

- **Վստահե՛ք տվյալ տարածաշրջաններում գործունեություն ծավալող անձանց.** «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի համար դրամաշնորհի տեսքով տրամադրվող յուրաքանչյուր 10 դոլարից ընդամենը մեկն է ուղղակիորեն տրամադրվում տարածաշրջանի «ներսիններին»՝ որպես ճկուն աջակցություն»: Ֆինանսավորե՛ք այն մեխանիզմները կամ հիմնադրամներին, որոնք ստեղծվել են տարածաշրջանների բնակչության համար կամ նրանց կողմից:

- **Ֆինանսավորման հարցում որդեգրե՛ք համարձակ և**

ստեղծարար մոտեցում.

Տրամադրեք անսահմանափակ երկարաժամկետ ֆինանսավորում հիմնադրամներին և մեխանիզմների ստեղծման համար, որպեսզի տարածաշրջաններն իրենք որոշումներ կայացնեն, թե ինչպես, ում շրջանում և ինչ ձևով են բաշխվելու միջոցները:

- **Հարգեք կազմակերպման և քառագույնի տարբեր ձևերը.** Հասկացեք, որ տեսանելիությունը և հաջողությունը կարող են տարբեր համատեքստերում տարբեր կերպ արտահայտվել: Ավելի ավտորիտար ռեժիմների դեպքում դիմադրության ստեղծագործ և զուսպ ձևերը վճռորոշ նշանակություն ունեն ակտիվիստների անվտանգության և նրանց գործունեության արդյունավետության համար: Ինչպես նշել է Կենտրոնական Ասիայում գործող ակտիվիստներից մեկը՝ «Ընդհատակյա աշխատանքն անտեսանելի է, բայց որքան ռեժիմն ավտորիտար է, այնքան ավելի ստեղծագործ են մեր դիմադրության մեթոդները»:

Ինչպես Վրաստանում փեղի ունեցած վերջին զարգացումները ցույց տվեցին, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի փարածաշրջաններում հանուն ժողովրդավարության և մարդու իրավունքների պայքարում հաջողելու համար անհրաժեշտ է համաշխարհային մակարդակով

համերաշխության և ռազմավարական ֆինանսավորման ապահովում:

Ավտորիտար ռեժիմների կենսունակությունը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դեմ սահմանափակող օրենքների ընդունումը ընդգծում են արմատաբուխ շարժումների և միջազգային աջակցության ցանցերի կարևոր դերը ազատությունների պաշտպանության գործում:

Այժմ, առավել քան երբևէ, բարերարները և իրավապաշտպան կազմակերպությունները պետք է առաջնահերթություն տան Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական և Հյուսիսային Ասիայի տարածաշրջաններին՝ ապահովելով, որ առաջնագծում գտնվող ակտիվիստներն ունենան անհրաժեշտ ռեսուրսներ և աջակցություն իրենց կենսական աշխատանքը շարունակելու համար:

¹ <https://freedomhouse.org/article/new-report-authoritarian-violence-drives-20th-consecutive-year-decline-democratic>

² https://monitor.civicus.org/globalfindings_2023/

³ <https://civicsmonitor.contentfiles.net/media/documents/GlobalFindings2023.pdf>

⁴ <https://www.icnl.org/wp-content/uploads/2024.04-Foreign-Influence-Laws-and-Civil-Society-Report-vf.pdf>

⁵ <https://oc-media.org/georgias-foreign-agent-law-live-offshore-law-veto-to-be-overturned/>

⁶ <https://www.opendemocracy.net/en/odr/georgia-foreign-agent-law-protest-crisis/>

⁷ <https://oc-media.org/georgian-dream-to-introduce-queerphobic-legislation/>

⁸ <https://civil.ge/archives/590165>

⁹ <https://oc-media.org/georgian-dream-eliminates-taxes-on-offshore-assets-brought-to-georgia/>

¹⁰ <https://www.hrw.org/world-report/2016/country-chapters/russia>

¹¹ <https://www.libereco.org/en/report-belarusian-civil-society-in-exile/>

¹² <https://neweasterneurope.eu/2017/10/27/tbilisi-exiled-members-azerbaijans-civil-society/>

¹ <https://freedomhouse.org/article/new-report-authoritarian-violence-drives-20th-consecutive-year-decline-democratic>

² https://monitor.civicus.org/globalfindings_2023/

³ <https://civicsmonitor.contentfiles.net/media/documents/GlobalFindings2023.pdf>

⁴ <https://www.icnl.org/wp-content/uploads/2024.04-Foreign-Influence-Laws-and-Civil-Society-Report-vf.pdf>

⁵ <https://oc-media.org/georgias-foreign-agent-law-live-offshore-law-veto-to-be-overturned/>

⁶ <https://www.opendemocracy.net/en/odr/georgia-foreign-agent-law-protest-crisis/>

⁷ <https://oc-media.org/georgian-dream-to-introduce-queerphobic-legislation/>

⁸ <https://civil.ge/archives/590165>

⁹ <https://oc-media.org/georgian-dream-eliminates-taxes-on-offshore-assets-brought-to-georgia/>

¹⁰ <https://www.hrw.org/world-report/2016/country-chapters/russia>

¹¹ <https://www.libereco.org/en/report-belarusian-civil-society-in-exile/>

¹² <https://neweasterneurope.eu/2017/10/27/tbilisi-exiled-members-azerbaijans-civil-society/>

¹³ <https://rsf.org/en/kyrgyzstan-arrests-11-journalists-who-exposed-corruption-rsf-denounces-purge-investigative>

¹⁴ <https://dalan.fund/>

¹⁵ <https://www.alliancemagazine.org/blog/regimes-and-resistance-in-ceecna-regions-a-few-puzzle-pieces/>

¹⁶ <https://www.hrfn.org/trust-gap/>

¹⁷ <https://www.alliancemagazine.org/blog/all-eyes-on-georgia-its-time-philanthropy-showed-up-for-us-and-with-us-in-a-different-way/>

Read more on Dalan Fund



¹³ <https://rsf.org/en/kyrgyzstan-arrests-11-journalists-who-exposed-corruption-rsf-denounces-purge-investigative>

¹⁴ <https://dalan.fund/>

¹⁵ <https://www.alliancemagazine.org/blog/regimes-and-resistance-in-ceecna-regions-a-few-puzzle-pieces/>

¹⁶ <https://www.hrfn.org/trust-gap/>

¹⁷ <https://www.alliancemagazine.org/blog/all-eyes-on-georgia-its-time-philanthropy-showed-up-for-us-and-with-us-in-a-different-way/>

Կարդալ ավելին Դալան հիմնադրամի մասին



From Surviving to Organizing to Thrive in Times of Crisis: Stories of Solidarity Among Mexican Women Looking for their Missing Loved Ones¹

Fondo Semillas

In this text we reflect on our experience as a national Feminist Fund accompanying groups of women looking for their missing family members in the times of a crisis of enforced disappearance in Mexico. It is calculated that about 112 thousand people have disappeared in the country since 1964 (U.N. Committee on Enforced Disappearances, 2023).

Most have disappeared since 2006, when the then-President declared a “War on Drugs,” mobilizing the armed forces and unleashing a wave of violence. Since 2007 the disappearances have increased, reaching an alarming number of 14 missing persons every day (Unidad de Investigación Aplicada, Mexicanos Unidos contra la Corrupción, 2022). Thousands of bodies remain unidentified, many of them sitting in government morgues. There is an ongoing rise of the number of searchers collectives. The applications of these groups for funding have one of the highest increases in our current open call in comparison to our last call in 2022.

We will begin by telling the story of how we started our journey in this accompaniment. It began when Movimiento Migrante Mesoamericano No nos vamos was our grantee in 2017. The group, which fights for migrants’ rights, supported the Caravan of Central American Mothers, which found 269 disappeared migrants in Mexico and was working in the search for their missing relatives. That was our first direct contact with this movement. Then, we started receiving proposals from collectives of searching mothers.

Գոյատևումից մինչև ինքնակազմակերպում՝ ճգնաժամի ժամանակ բարգավաճելու համար. իրենց անհետ կորած սիրելիներին փնտրող մեքսիկացի կանանց համերաշխության պատմություններ¹

«Սեմիլիաս» հիմնադրամ

Այս տեքստում մենք անդրադառնում ենք մեր փորձառությանը՝ որպես ազգային ֆեմինիստական հիմնադրամ, որն աջակցում է կանանց խմբերին, որոնք որոնում են Մեքսիկայում բռնի անհետացումների ճգնաժամի ժամանակ իրենց ընտանիքի անհետ կորած անդամներին: Հաշվարկվում է, որ 1964 թվականից ի վեր երկրում անհետացել է մոտ 112 հազար մարդ (ՄԱԿ-ի բռնի անհետացումների կոմիտե, 2023թ.):

Մեծ մասն անհետացել է 2006 թվականից ի վեր, երբ այն ժամանակվա Նախագահը հայտարարեց «Պատերազմ ընդդեմ թմրանյութերի»՝ մոբիլիզացնելով զինված ուժերը և սանձազերծելով բռնության ալիք: 2007 թվականից անհետացումների թիվն աճեց՝ հասնելով տազնապալի թվի՝ օրական 14 անհետ կորած (Unidad de Investigación Aplicada, Mexicanos Unidos contra la Corrupción, 2022): Հազարավոր դիեր մնում են չնույնականացված՝ մեծամասամբ մնալով պետական դիահերձարաններում: Նկատվում է որոնող կոլեկտիվների թվի շարունակական աճ: Ֆինանսավորման համար այս խմբերի հայտադիմումներն ամենաբարձր աճն են գրանցել մեր ընթացիկ բաց կանչի շրջանակում՝ ի համեմատ 2022թ. մեր վերջին կանչի:

Մենք կսկսենք պատմելով, թե ինչպես ենք սկսել մեր ուղին աջակցման գործում: Այն սկսվեց, երբ Movimiento Migrante Mesoamericano No nos vamos-ը դարձավ մեր դրամաշնորհառուն 2017 թվականին: Միգրանտների իրավունքների համար պայքարող այս խումբն աջակցում էր Կենտրոնական Ամերիկայի մայրերի քարավանին, որը գտել էր 269 անհետացած միգրանտների Մեքսիկայում և զբաղվում էր նրանց անհետ կորած հարազատների որոնմամբ: Դա մեր առաջին

1. The Crisis and the Resilience

The women's searching group faces structural racism, poverty, and systemic marginalization prior to the disappearance. Families feel they must do a tremendous amount of work if they are to have any hope of finding their missing loved ones. They face a confusing and often inaccessible forensic system where data about the dead and missing is disorganized and a nightmarish quagmire where science and technology are often inaccessible, information is inaccurate and forensic systems are fragmented and inconsistent (Reineke, 2022). Often authorities refuse to provide information or assist in any way.

The women's searching group faces impunity, lack of punishment or the lack of investigation by the state (Reineke, 2022). There are only 37 sentences for the 112 thousand cases mentioned before. Families mistrust police. They are turned away by authorities but also by society, who frequently stigmatizes them.

The collectives of mothers do such things as gatherings to remember their loved ones, mourning together, they also hold ceremonies and honor the families' wishes. In addition, they



organize memorial events, search for their relatives in hospitals and prisons, advocate for the authorities fulfill their duty in helping

անմիջական շփումն էր այս շարժման հետ: Հետո սկսեցինք հայտեր ստանալ որոնող մայրերի կոլեկտիվներից:

1. ճգնաժամ և դիմակայունություն

Որոնող կանայք մինչ անհետացումը բախվում են համակարգային ռասիզմի, աղքատության և համակարգային մարգինալացման: Ընտանիքները համոզված են, որ պետք է հսկայական աշխատանք կատարեն, եթե ցանկանում են գտնել իրենց անհետացած սիրելիներին: Նրանք բախվում են շփոթեցնող և հաճախ անհասանելի դատաբժշկական համակարգին, որտեղ մահացածների և անհետ կորածների մասին տվյալներն անկանոն են և մղձավանջային, որտեղ գիտությունն ու տեխնոլոգիան հաճախ հասանելի չեն, տեղեկատվությունը ճշգրիտ չէ, իսկ դատաբժշկական համակարգերը մասնատված են ու անհետևողական (Ռեյնեկե, 2022թ.): Հաճախ իշխանությունները հրաժարվում են տեղեկատվություն տրամադրել կամ որևէ կերպ աջակցել:

Որոնող կանայք առերեսվում են անպատժելիությանը, պատժի կամ պետության կողմից հետաքննության բացակայությանը (Ռեյնեկե, 2022): Վերը նշված 112 հազար դեպքի համար սահմանվել է ընդամենը 37 պատիժ: Ընտանիքները չեն վստահում ոստիկանությանը: Ոչ միայն իշխանություններն են երես թեքում՝ նրանցից, այլև հասարակությունը, որը հաճախ պիտակավորում է նրանց:

Մայրերի կոլեկտիվները կազմակերպում են այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են հավաքները՝ հիշելու իրենց սիրելիներին, միասին սգալու, արարողություններ անցկացնելու և հարգելու ընտանիքների ցանկությունները, նրանք իրականացնում են ոգեկոչման



Mural to remember Viridiana, daughter of Angélica, at her university. Angelica is one of the leaders of Regresando a Casa Morelos, our ex grantee.

Որմնակար՝ ոգեկոչելու Անխելիկայի դստերը՝ Կիրիդիանային, իր համայնարանում: Անխելիկան Regresando a Casa Morelos-ի մեր նախկին դրամաշնորհառուի առաջնորդներից մեկն է:

locate their missing family members, demand justice in street organizing, look for remains in the field and in clandestine graves, do direct intervention with forensics, collect DNA from family members, engage with humanitarian organizations, police agencies, genetic laboratories and forensic authorities to identify them, deliver the news to the families.

The women's searching group mostly does all this work without receiving any remuneration and investing their own money and resources. While the work of forensic authorities is visible, the press sometimes omits the labor of the families.

As a Feminist Fund, we never doubted that in a growing disappearance crisis we had to support this movement of mothers who lead the searches.

միջոցառումներ, որոնում են իրենց հարազատներին հիվանդանոցներում և բանտերում, իրականացնում են ջատագովություն, որպեսզի իշխանությունները կատարեն իրենց գործը՝ օգնելու գտնել իրենց ընտանիքի անհետ կորած անդամներին, դուրս են գալիս փողոց՝ արդարություն պահանջելու, մասունքներ են փնտրում դաշտում և գաղտնի գերեզմանատներում, ուղղակիորեն միջամտում են դատաբժշկական փորձաքննությանը, ընտանիքի անդամներից հավաքում են ՌԻԹ, համագործակցում են մարդասիրական կազմակերպությունների, ոստիկանական կառույցների, գենետիկական լաբորատորիաների և դատաբժշկական մարմինների հետ՝ նույնականացնելու նրանց և լուրը հասցնելու ընտանիքներին:

Որոնող կանայք հիմնականում կատարում են այս ամբողջ աշխատանքն առանց վարձատրության և սեփական գումարների ու ռեսուրսների հաշվին: Մինչ դատաբժշկական մարմինների աշխատանքը տեսանելի է, մամուլի ուշադրությունից երբեմն վրիպում է ընտանիքների աշխատանքը:

Որպես ֆեմինիստական հիմնադրամ՝ մենք երբեք չենք կասկածել, որ անհետացումների աճող ճգնաժամի պայմաններում պետք է աջակցենք որոնումները ղեկավարող մայրերի այս շարժմանը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ էր հաշվի առնել լրացուցիչ հանգամանքներ՝ առաջնահերթություն տալ կոլեկտիվ խնամքին այն խմբերի համար, որոնք ապրում են ծանր հոգեւոցիալական սթրեսի պայմաններում, որոնք խորը տառապանքների մեջ են, վրդովված և իրենց չլսված են զգում, ինչպես նաև մեր թիմի համար, երբ ներգրավվում են նման ցավոտ թեմայի մեջ:

Կին որոնողների աշխատանքը կապված է մեծ և մշտական ռիսկի հետ. կա կոռուպցիա և դավադրություն իշխանությունների կողմից, որոնք հետապնդում են նրանց: Կանանցից

Nevertheless, it required additional things to take into consideration to prioritize collective care for not only those groups living with severe psychosocial stress, who are in deep suffering, outraged and feel unheard but also for our team when involving in such a painful subject.

The work of the women searchers comes with high and constant risk: there is corruption and collusion with authorities, who chase them. Many of the women work in territory run by violent cartels, they are surveillanced by cartel lookouts, death threats are common, and some of them have suffered attempted kidnappings.

Since 2010, 15 searching mothers have been murdered. These murders feel like a warning that any searching mother could be next.

It was in our 2020 grant cycle when we first had mother searchers as our grantees. For two grant cycles, we have had eight women searchers grantees: four in Guanajuato, one in Morelos, two in the northern border and one in Chiapas, in the southern border. Now we want to share our experience on how we are building capacities to thrive for these collectives and on the lessons we have learned promoting movement building among women searchers.

2. **Supporting the movement**

Violence against women and girls is a pervasive, widespread, and grave human rights violation with immediate and long-term repercussions for women and girls, families, and societies. In recent times, there has been an alarming increase in opposition to women's rights and a backlash against feminist movements globally. Shrinking spaces for women and girls, along with escalating and protracted conflicts and other overlapping crises, continue to put the lives and bodies of women and girls at increased risk of violence.

In response to this grave situation, the UN Trust Fund to End Violence against Women (UN Trust Fund), managed by UN Women on behalf of the UN system, is supporting 191 projects aimed at preventing and responding to violence against women and girls in 68 countries and territories, across five regions, with grants totalling \$92.1 million. It is also evolving and adapting to ensure the organizational sustainability and resilience of grantee organizations. Since the fund was established in 1996, it has provided grants worth a total of \$225,837,268 to 670 initiatives across 140 countries and territories.

Impact of multiple crises

The compounding impacts of global, regional, and national crises, including climate emergencies, violent conflicts and economic shocks, have significantly increased the need for humanitarian assistance, including life-saving protection from gender-based violence. In 2022, an estimated 406.6 million people needed humanitarian assistance, with the vast majority (83 per cent) living in contexts of protracted crisis. This has a disproportionate impact on women and girls, who have experienced an intensification of different forms of violence and an increased risk of violence. For

Դիմակայունության և համերաշխության պատմություններ. Ղեկավարի ուսումնասիրություն

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության ՄԱԿ-ի
հավատարմագրային հիմնադրամ

Կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների համատարած և լուրջ խախտում է, որն անմիջական և երկարաժամկետ հետևանքներ է ունենում կանանց և աղջիկների, ընտանիքների և հասարակությունների վրա: Վերջերս նկատվում է աճող դիմադրություն կանանց իրավունքների պաշտպանության օրակարգին, ինչպես նաև հակազդեցություն համաշխարհային ֆեմինիստական շարժումների դեմ: Կանանց և աղջիկների համար նեղացող տարածքները, ինչպես նաև աճող և ձգձգվող հակամարտությունները և այլ ճգնաժամեր շարունակում են բռնության ենթարկվելու վտանգի առաջ կանգնեցնել կանանց և աղջիկներին:

Ի պատասխան այս ծանր իրավիճակի՝ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամը (ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամ), որը կառավարվում է ՄԱԿ-ի համակարգում գործող «ՄԱԿ-Կանայք» կառույցի կողմից, աջակցություն է տրամադրում թվով 191 ծրագրերի շրջանակում, որոնք ուղղված են 68 երկրներում և տարածքներում կանանց և աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելմանը և դրան արձագանքմանը: Դրամաշնորհների ընդհանուր գումարը կազմում է 92,1 միլիոն ԱՄՆ դոլար: Հիմնադրամը նաև զարգանում և համապատասխան հարմարեցումներ է անում՝ դրամաշնորհ ստացող կազմակերպությունների կազմակերպչական կայունությունն ու ճկունությունն ապահովելու համար: 1996 թվականին հիմնադրվելուց ի վեր՝ Հիմնադրամը տրամադրել է ընդհանուր առմամբ 225,837,268 ԱՄՆ դոլարի դրամաշնորհներ 670 նախաձեռնությունների 140 երկրներում և տարածքներում:

Բազմակի ճգնաժամերի ազդեցությունը

Համաշխարհային, տարածաշրջանային և ազգային ճգնաժամերի (ինչպես, օրինակ, բնական աղետները, բռնի հակամարտությունները

instance, in crisis settings, 70 percent of women experience gender-based violence, compared with 35 percent of women worldwide. Civil society and women's rights organizations, which are at the forefront of providing life-saving interventions and preventing violence in crisis situations, comprise over half of the UN Trust Fund's active grantees, with grants totalling \$55.5 million.

As crises continue to unfold around the world, the need for long-term, core and flexible funding to support civil society and women's rights organizations in addressing gender-based violence and meeting the needs of women and girls remains vital.

Critical role of front-line organizations

The UN Trust Fund's experience underscores the adaptability and resilience of front-line local and community organizations when it comes to leading efforts to prevent and respond to violence against women and girls, regardless of whether it occurs in a humanitarian, peace or development context. Front-line civil society and women's rights organizations are critical to supporting women and girls and have shown remarkable flexibility in navigating rapidly evolving and complex situations while maintaining a focus on interventions to prevent and end this egregious human rights violation.

Investing in strengthening women-led, feminist and women's rights organizations at various levels, whether in one country or many, is essential. Such support equips these organizations to effectively prepare for, respond to and recover from the dynamic and overlapping challenges present in today's world.

և տնտեսական ցնցումները) ազդեցությունները զգալիորեն մեծացրել են մարդասիրական օգնության, ինչպես նաև գենդերային բռնությունից պաշտպանության կարիքը: 2022 թվականի դրությամբ մոտ 406,6 միլիոն մարդ մարդասիրական օգնության կարիք ուներ, ընդ որում՝ ճնշող մեծամասնությունը (83 տոկոսը) ապրում է երկարատև ճգնաժամի պայմաններում: Սա անհամաչափ ազդեցություն է ունենում կանանց և աղքիկների վրա, ում նկատմամբ ավելացել է բռնության տարբեր ձևերի կիրառումը: Օրինակ՝ ճգնաժամային իրավիճակներում կանանց 70 տոկոսը ենթարկվում է գենդերային բռնության՝ համեմատած ամբողջ աշխարհում կանանց 35 տոկոսի հետ: Քաղաքացիական հասարակությունը և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները, որոնք կյանքեր փրկող միջամտությունների իրականացման և ճգնաժամային իրավիճակներում բռնության կանխարգելման առաջնագծում են, կազմում են ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի ակտիվ դրամաշնորհառուների կեսից ավելին, (դրամաշնորհների ընդհանուր գումարը՝ 55,5 միլիոն դոլար):

Քանի որ ճգնաժամերը շարունակում են տեղի ունենալ ամբողջ աշխարհում, երկարաժամկետ, հիմնարար և ճկուն ֆինանսավորումը կենսական նշանակություն ունի՝ աջակցելու քաղաքացիական հասարակությանը և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին գենդերային բռնության դեմ պայքարում և հասցեագրելու կանանց և աղքիկների կարիքները:

Առաջնագծում աշխատող կազմակերպությունների կարևոր դերը

ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի փորձը ցույց է տալիս, որ առաջնագծում աշխատող տեղական և համայնքային կազմակերպությունները

These organizations are critical to safeguarding women and girls from all forms of violence across the humanitarian-development-peace nexus.

Additional support for grantees working in crisis situations

The UN Trust Fund has included measures to support grantees coping with unprecedented changes resulting from the COVID-19 pandemic, the increased backlash against women's rights, and escalating conflicts, among other crises. Such measures include providing contingency funding, as well as resourcing practices related to self-care and collective care while increasing access to flexible and core funding.

For example, in Ukraine, the non-governmental organization Club Eney, a UN Trust Fund grantee, is leading a project to prevent gender-based violence and the spread of HIV among women who use drugs, self-identified women sex workers, women living with HIV, and internally displaced women. In response to the war, Club Eney adapted its screening and intervention tool to guide women at risk through risk assessments and safety planning, and provided allowances for evacuation, food and medication for project staff and beneficiaries. It also provided supplies for internally displaced women to help them grow vegetables and improve food security. To address the rise in violence against women due to the war-related humanitarian crisis, which puts increased pressure on women and families, Club ENEY provided 315 women with food, medication, and informational support with reallocated funds from the UN Trust Fund.

ցուցաբերել են հարմարվողականություն և դիմակայունություն կանանց և աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելմանը և արձագանքմանն ուղղված ջանքերում՝ լինի դա մարդասիրական, խաղաղաշինական, թե՛ զարգացման համատեքստում: Առաջնագծում աշխատող քաղաքացիական հասարակության և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները կարևոր դեր ունեն կանանց և աղջիկներին աջակցելու հարցում և ցուցաբերել են ուշագրավ ճկունություն արագ զարգացող և բարդ իրավիճակներում՝ միաժամանակ կենտրոնանալով այս մարդու իրավունքների սարսափելի խախտումները կանխելուն և վերջ դնելուն ուղղված միջամտությունների վրա:

Կենսական կարևորություն ունի կանանց կողմից ղեկավարվող, ֆեմինիստական և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հզորացմանն ուղղված աշխատանքներում ներդրումներ կատարելը: Նման աջակցությունը հնարավորություն է տալիս այդ կազմակերպություններին արդյունավետորեն նախապատրաստվելու, արձագանքելու այսօրվա աշխարհում առկա դինամիկ մարտահրավերներին և վերականգնվելու դրանցից:

Այս կազմակերպությունները կարևոր նշանակություն ունեն կանանց և աղջիկներին բռնության բոլոր ձևերից պաշտպանելու հարցում:

Լրացուցիչ աջակցություն ճգնաժամային իրավիճակներում աշխատող դրամաշնորհառուներին

ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամը ձեռնարկել է միջոցներ՝ աջակցելու դրամաշնորհառուներին, որպեսզի վերջիններս հաղթահարեն ԶՈՎԻԴ-19 համավարակի հետևանքով առաջացած աննախադեպ փոփոխությունները, կանանց

Analysing the challenges

In 2023, the UN Trust Fund commissioned and published a scoping study to examine how humanitarian action operates in the context of increasingly complex crises, focusing in particular on how these crises affect the prevention of and response to violence against women and girls. The study found that women-led organizations and women's rights organizations are chronically underfunded and often lack sufficient recognition by donors. It also found that the UN Trust Fund can play a key role in supporting platforms for women's rights and civil society organizations to foster partnerships with larger organizations that influence humanitarian work. In addition, the UN Trust Fund supports civil society and women's rights organizations in building organizational capacities through long-term investments, which are crucial to enable them to act in rapidly changing crisis contexts.

Also in 2023, the UN Trust Fund analysed its conceptual framework approach to organizational resilience through data collection and simultaneous dialogue with grantee organizations, creating new practice-based knowledge around the subject. The UN Trust Fund has been investing in grantee organizational resilience for 15 years including through flexible budget provisions, improvements to flexible and core funding, and capacity enhancement, among other measures. The study found that these provisions, coupled with long-term strategies and planning and supportive work environments such as feminist leadership and community engagement were key to having a resilient organization. Key findings include that CSOs/WROs persist and endure challenges to deliver interventions to prevent and end violence against women and girls, despite

իրավունքների դեմ աճող հակազդեցությունը և սրվող հակամարտությունները՝ ի թիվս այլ ճգնաժամերի: Նման միջոցները ներառում են չնախատեսված ծախսերի ֆինանսավորում, ինչպես նաև ինքնախնամքի և կոլեկտիվ խնամքի համար ռեսուրսների հատկացում՝ միաժամանակ ավելացնելով ճկուն և հիմնական ֆինանսավորման հասանելիությունը:

Օրինակ՝ Ուկրաինայում Club Eney հասարակական կազմակերպությունը, որը ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի դրամաշնորհառուներից է, ղեկավարում է գեղերային բռնության և ՄԻԱՎ-ի տարածման կանխարգելման ծրագիրը, որի շահառուներն են թմրանյութեր օգտագործող կանայք, կին սեքս աշխատողները, ՄԻԱՎ-ով ապրող կանայք և ներքին տեղահանված կանայք: Պատերազմի մեկնարկից հետո կազմակերպությունը փոփոխել է իր բուժօգնության և միջամտության գործիքը՝ ուղղորդելու կանանց ռիսկերի գնահատման և պլանավորման փուլերում, ինչպես նաև ծրագրի անձնակազմին և շահառուներին տրամադրել է գումար տարհանման, սնունդ և դեղորայք ձեռք բերելու համար: Կազմակերպությունը նաև աջակցել է ներքին տեղահանված կանանց բանջարեղեն աճեցնելու համար անհրաժեշտ պարագաների տրամադրման միջոցով: Պատերազմի հետևանքով առաջացած հումանիտար ճգնաժամի պատճառով և կանանց նկատմամբ բռնության աճի դեմ պայքարի շրջանակում Club ENEY կազմակերպությունը 315 կանանց տրամադրել է սնունդ, դեղորայք և տեղեկատվական աջակցություն ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի կողմից վերաբաշխված միջոցներով:

Մարտահրավերների վերլուծություն

2023 թվականին ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամը պատվիրել և հրապարակել է

challenges including active resistance and insufficient funding.

“It is about adaptability, malleability, that organizations can move to be resilient and face the waves ... we need to face the waves of crises, whether the war in Ukraine, migration, the earthquake in Haiti, so many things that hit us every day, so it would be logical that we are moving from one side [to] the next, but also to find the capacity to face these needs without losing the essence of the organization” – focus group participant, South America

Investing in organizational resilience in times of crisis

The examples below highlight the impact and changes in the lives of women and girls led by the efforts and response of grantees. While navigating rapid and complex contextual changes, grantees adapted to make organizational changes that showed tangible results and resilience.

Grantees act as first responders to the rising risks of violence against women and girls in increasingly complex crises and uncertain contexts.

Building resilience involves organizational efforts to adapt risk management systems that can withstand challenges created by rapidly changing contexts. It also involves donor adaptation in grant-giving practices that acknowledge initiatives by civil society and women’s rights organizations in prioritizing women’s safety and empowerment in all circumstances.

Grantees’ strengthened their organizational resilience, which helped them to adapt and pivot their response to women’s and girls’ needs in

ուսումնասիրություն, որի նպատակն էր պարզել, թե ինչպես են մարդասիրական միջամտություններն աշխատում գնալով ավելի բարդացող ճգնաժամերի համատեքստում՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և աղքիկների նկատմամբ բռնության կանխարգելման և արձագանքման համատեքստում այդ ճգնաժամերի ազդեցության վրա: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կանանց կողմից ղեկավարվող կազմակերպությունները և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները մշտապես ֆինանսավորման պակաս ունեն և հաճախ դոնորների շրջանում բավարար ճանաչելի չեն: Ուսումնասիրության արդյունքները նաև ցույց են տվել, որ ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամը կարող է առանցքային դեր խաղալ կանանց իրավունքների հարթակների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների միջև համագործակցությունը խթանելու հարցում: Բացի այդ՝ ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամն աջակցում է քաղաքացիական հասարակությանը և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին երկարաժամկետ ներդրումների միջոցով կազմակերպության կարողությունները զարգացնելու գործում, որպեսզի վերջիններս կարողանան պատշաճորեն գործել արագ փոփոխվող ճգնաժամերի համատեքստում:

2023 թվականին ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամը նաև վերլուծության ենթարկեց կազմակերպությունների դիմակայունությանն ուղղված իր հայեցակարգային շրջանակային մոտեցումը՝ տվյալների հավաքագրման և դրամաշնորհառու կազմակերպությունների հետ երկխոսության միջոցով, ինչը թույլ տվեց թեմայի վերաբերյալ պրակտիկայի վրա հիմնված գիտելիք ձեռք բերել: ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամն արդեն 15 տարի ներդրումներ է կատարում դրամաշնորհառուների

the context of crises, including the COVID-19 pandemic.

For example, in Eswatini, UN Trust Fund grantee Swatini Action Group Against Abuse (SWAGAA) enhanced its support for survivors of violence through community-driven initiatives, specifically targeting adolescent girls and young women living with disabilities and refugees. It reached 3,240 adolescent girls and young women, 69 per cent of whom reported feeling safer and more protected from violence at the end of the project. The organization reported that access to learning resources from the UN Trust Fund helped them design more inclusive interventions such as incorporating sign language interpretation. Further, SWAGAA strengthened their organizational systems on programme management, which equipped them to improve their gender-based violence prevention framework. The organization also utilized additional funding for institutional strengthening to embed emergency response readiness in their programmes to ensure project continuity, which included making their free hotline digital.

Grantees' experiences of effective adaptation highlight the value of localized interventions and their ability to rapidly pivot to the needs of women and girls in changing contexts.

Innovative solutions to improve organizational resilience

Grantees creatively used improved technology-facilitated solutions born out of the COVID-19 pandemic to increase both outreach and access to services. They also recognized that co-creation with community members had proved to be

կազմակերպությունների դիմակայունության ապահովման ուղղությամբ, այդ թվում՝ ճկուն բյուջետավորման, հիմնական ֆինանսավորման բարելավման և կարողությունների զարգացման միջոցով: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ եթե այս միջոցառումները զուգորդվեն երկարաժամկետ ռազմավարություններով և ծրագրերով, ինչպես նաև բարենպաստ աշխատանքային միջավայրով, ինչպես, օրինակ, ֆեմինիստական առաջնորդությունը և համայնքի ներգրավվածությունը, ապա հնարավոր կլինի ունենալ դիմակայուն կազմակերպություն: Ուսումնասիրության հիմնական բացահայտումն այն է, որ ԶՀԿ-ները, կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները կարողանում են դիմակայել մարտահրավերներին և իրականացնել կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը կանխելուն և դրա դեմն առնելուն ուղղված միջամտություններ՝ չնայած ակտիվ դիմադրությանը և անբավարար ֆինանսավորմանը՝ ի թիվս այլ խնդիրների:

«Սա հարմարվողականության, ճկունության մասին է, որ կազմակերպությունները կարողանան շարժվել, լինեն ճկուն և դիմակայեն ալիքներին... մենք պետք է դիմակայենք ճգնաժամերի ալիքներին՝ լինի դա Ուկրաինայի պատերազմը, միգրացիան, թե երկրաշարժը Հաիթիում, այնքան շարժիրադարձություններ, որ ամեն օր հարվածում են մեզ: Ուստի փրամաբանական է, որ մենք մի կողմից [մյուսը] շարժվենք, բայց նաև գտնենք կարողություն՝ անդադրառնալու այդ կարիքներին՝ առանց զրհբերելու կազմակերպության էությունը», –Ֆոկուս խմբային քննարկման մասնակից, Հարավային Ամերիկա:

Ներդրումներ՝ ուղղված կազմակերպության դիմակայունության ապահովմանը ճգնաժամերի ժամանակ

Ստորև բերված օրինակները ցույց են տալիս

catalytic for enhancing collective preparedness and institutional changes.

Rising food insecurity and economic injustice prompted adaptations to address the intersection between women's economic empowerment and violence against women and girls.

Finally, investment in collective and self-care emerged as an effective way to enable reflection and analysis of their organization's resilience needs.

For example, in the Democratic Republic of Congo, the grantee Dynamique des Femmes Juristes (DFJ) operated in a context of multiple, overlapping crises in North Kivu province. These included: the COVID-19 pandemic, which paralysed all institutions, including courts and tribunals; a state of siege (similar to a state of emergency) in the project area that replaced civilian authorities with military authorities and civilian courts with military courts; the 2021 eruption of the Nyiragongo volcano near the provincial capital, Goma, which damaged infrastructure, impacting women and girls; and the ongoing war between the M23 armed group and the national army, which left women and girls at increased risk of violence and with very limited access to justice.

Recognizing that organizational resilience and crisis preparedness are key to long-term sustainability beyond the project, DFJ adapted its policies, procedures, practices and systems. This included promoting mobile court hearings and training magistrates and court officers to ensure an appropriate judicial response during multiple crises. This practice was replicated elsewhere and has improved access to justice for survivors of violence against women and girls.

դրամաշնորհառուների գործունեության արդյունքում կանանց և աղջիկների կյանքում տեղի ունեցած փոփոխությունները: Արագ փոփոխվող միջավայրում դրամաշնորհառուները կարողացել են կազմակերպական փոփոխություններ կատարել, ինչն էլ բերել է շոշափելի արդյունքների և դիմակայունության բարձրացման:

Դրամաշնորհառուներն առաջինն են արձագանքում կանանց և աղջիկների դեմ բռնությանը, ճգնաժամերին և անորոշ իրավիճակներին:

Դիմակայունությունը պահանջում է կազմակերպչական ջանքեր՝ ապահովելու ռիսկերի կառավարման համակարգեր, որոնք կդիմակայեն արագ փոփոխվող իրավիճակների պատճառով ստեղծված մարտահրավերներին: Այն նաև պահանջում է դրամաշնորհների տրամադրման հարցում ճկուն մոտեցում դոնորների կողմից, որպեսզի վերջիններս ընդունեն քաղաքացիական հասարակության և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների մոտեցումը՝ անկախ հանգամանքներից առաջնահերթություն տալու կանանց անվտանգությանը և հզորացմանը:

Դրամաշնորհառուներն ամրապնդել են իրենց կազմակերպությունների դիմակայունությունը, ինչը նրանց օգնել է արձագանքման գործողություններն ուղղել կանանց և աղջիկների կարիքներին ճգնաժամերի, այդ թվում՝ ՔՈՎԻԴ-19 համավարակի համատեքստում:

Օրինակ՝ Էսվատինիում՝ ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի դրամաշնորհառու Swatini Action Group Against Abuse կազմակերպությունը ավելացրել է իր աջակցությունը բռնությունից տուժած անձանց համայնքային նախաձեռնությունների միջոցով՝ հատկապես թիրախավորելով հաշմանդամություն ունեցող դեռահաս աղջիկներին և երիտասարդ կանանց և փախստականներին:

Overall, through investment in the organizational resilience and preparedness of civil society and women's rights organizations, the UN Trust Fund enables organizations to continue operating in crisis settings while pursuing a localized feminist agenda.

Այդ աջակցությունը հասել է 3240 դեռահաս աղջիկների և երիտասարդ կանանց, որոնց 69 տոկոսը հայտնել է, որ ծրագրի ավարտին իրենց ավելի ապահով և բռնությունից պաշտպանված էին զգում: Կազմակերպությունը հայտնել է, որ ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի ուսումնական նյութերի հասանելիությունն օգնել է նրանց մշակել ավելի ներառական միջամտություններ, ինչպիսին է ժեստերի լեզվի թարգմանության ապահովումը: Ավելին՝ կազմակերպությունն ամրապնդել է իր ծրագրերի կառավարման համակարգերը, ինչը նրանց թույլ է տվել բարելավել գենդերային հիմքով բռնության կանխարգելման շրջանակը: Կազմակերպությունը նաև օգտագործել է լրացուցիչ ֆինանսավորում ինստիտուցիոնալ հզորացման համար՝ ներառելով արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը իր ծրագրերում և թվայնացնելով իր անվճար թեժ գիծը:

Դրամաշնորհառուների վերոնշյալ փորձը ընդգծում է տեղայնացված միջամտությունների կարևորությունը և փոփոխվող միջավայրերում կանանց և աղջիկների կարիքներին արագորեն արձագանքելու կարողությունը:

Նորարար լուծումներ՝ բարձրացնելու կազմակերպության դիմակայունությունը

Դրամաշնորհառուները շատ ստեղծարար մտեցմամբ կարողացել են օգտագործել ԶՈՎԻԴ-19 համավարակի հետևանքով ստեղծված տեխնոլոգիական լուծումները՝ բարձրացնելու ծառայությունների հասանելիությունը: Նրանք նաև հասկացել են, որ համայնքի ներկայացուցիչների ներգրավումը նպաստում է հավաքական պատրաստվածությանը և ինստիտուցիոնալ փոփոխություններին:

Պարենային անապահովության և տնտեսական անարդարության աճը ստիպել են, որ

կազմակերպությունները համապատասխան
հարմարեցումներ անեն՝ ապահովելու կանանց տնտեսական
հզորացումը և, համապատասխանաբար, հասցեագրելու
կանանց և աղջիկների նկատմամբ բռնության խնդիրը:

Վերջապես, ինքնախնամքին և կոլեկտիվ խնամքին
ուղղված ներդրումները դրական արդյունքների
են բերել՝ հնարավորություն տալով մտորելու
կազմակերպության դիմակայունությանն առնչվող
կարիքների շուրջ:

Օրինակ՝ Կոնգոյի Դեմոկրատական
Հանրապետությունում Dynamique des Femmes
Juristes դրամաշնորհառու կազմակերպությունը
աշխատել է Հյուսիսային Կիվու նահանգում առկա
բազմաթիվ ճգնաժամերի համատեքստում: Այդ
ճգնաժամերն էին՝ ԶՈՎԻԴ-19 համավարակը, որը
կաթվածահար արեց բոլոր ինստիտուտները՝
ներառյալ դատարաններն ու տրիբունալները,
պաշարման մեջ գտնվելու վիճակը (որը նման
էր արտակարգ դրության), ինչի արդյունքում
քաղաքացիական իշխանություններին
փոխարինեցին զինվորական մարմինները, իսկ
քաղաքացիական դատարաններին՝ զինվորական
դատարանները, 2021 թվականին՝ Նիրագոնգո
հրաբխի ժայթքումը Գոմա քաղաքի շրջակայքում,
որի արդյունքում վնասվեցին ենթակառուցվածքներ,
և M23 կոչվող զինված խմբի և ազգային բանակի
միջև շարունակվող պատերազմը, ինչը հանգեցրել
է կանանց և աղջիկների՝ բռնության ենթարկվելու
ավելի մեծ վտանգի և արդարադատության շատ
սահմանափակ հասանելիության:

Ընդունելով, որ կազմակերպության
դիմակայունությունը և ճգնաժամային
իրավիճակներին պատրաստվածությունը
առանցքային կարևորություն ունեն ծրագրից
անդին երկարաժամկետ կայունություն ապահովելու
համար, կազմակերպությունը փոփոխել է իր

¹ Former Swaziland

*Read more on UN Trust Fund to
End Violence against Women*



քաղաքականությունը, ընթացակարգերը, գործելակերպը և համակարգերը: Սա ներառում էր մոբիլ դատական լուսմներ և դատավորների և դատարանի աշխատակիցների վերապատրաստում՝ ճգնաժամերին պատշաճորեն արձագանքելու համար: Այս պրակտիկան կրկնվել է այլ համատեքստերում և բարելավել է արդարադատության հասանելիությունը բռնությունից տուժած կանանց և աղջիկների համար:

Քաղաքացիական հասարակության և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների դիմակայունության և պատրաստվածության մեջ ներդրումներ անելու միջոցով ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամը կազմակերպություններին հնարավորություն է տալիս շարունակելու գործել ճգնաժամային պայմաններում՝ միաժամանակ հավատարիմ մնալով տեղայնացված ֆեմինիստական օրակարգին:

¹ Նախկին՝ Սվազիլենդ

*Կարդալ ավելին ՄԱԿ-ի Հավատարմագրային
հիմնադրամի մասին*



Extract from Chapter 11. Ukrainian Feminists Have Lessons to Teach Us about War, pp. 160-164. "Twelve Feminist Lessons of War"

Cynthia Enloe,
University of California Press, 2023

Reprinted with the written agreement from the author, with a foreword to the article by Marta Chumalo who is featured in the extract.

The war became a great test of our resilience. From the first days of the war, we encountered human pain, sorrow, and suffering. It was sometimes very hard to bear.

In the first days of the war, thousands of people passing through Lviv were going west - to peaceful Europe. Many women were in a very vulnerable state - without documents, without money, without knowledge of the language, very often without even a change of clothes. We deployed support points and gave women the opportunity to stay in decent conditions, rest, and often even stay in our shelters.

From the first days of the war, we felt help and solidarity. Every day I received dozens and hundreds of messages from my friends and colleagues from all over the world: "How are you?", "How can I help you?", "We are with you!", "If you decide to come, my home is open for you!" - these are the words that gave strength and understanding that as long as I can - I will stay.

It was and still is scary. But we learned to live and work during the war.

«Գլուխ 11. Ուկրաինացի ֆեմինիստները մեզ կարող են դասեր տալ պատերազմի մասին» (հատված), էջ 160-164: «Տասներկու ֆեմինիստական դաս պատերազմի մասին»

Սինթիա Էնլո,
Կալիֆոռնիայի համալսարանի հրատարակչություն, 2023թ.

Վերահրապարակվել է հեղինակի գրավոր համաձայնությամբ: Հոդվածի նախաբանը՝ Մարթա Չումալոյի, ում մտորումները ներկայացված են գրքի այս հատվածում:

Պատերազմը մեծ փորձություն էր մեր դիմակայունության համար: Պատերազմի առաջին օրերից ականադես եղանք մարդկային ցավի, վշտի և տառապանքի: Երբեմն շատ դժվար էր դիմանալ դրան:

Առաջին օրերին Լվովով անցնող հազարավոր մարդիկ գնում էին դեպի արևմուտք՝ դեպի խաղաղ Եվրոպա: Շատ կանայք խոցելի վիճակում էին՝ առանց փաստաթղթերի, առանց գումարի, առանց լեզվի իմացության, շատ հաճախ՝ նույնիսկ առանց փոխնորդ հագուստի: Մենք աջակցության կետեր ստեղծեցինք և կանանց հնարավորություն տվեցինք արժանավայել պայմաններ ունենալու, հանգստանալու և հաճախ նույնիսկ՝ մնալու մեր ապաստարաններում:

Պատերազմի առաջին օրերից մենք վայելել ենք օգնության և համերաշխության մթնոլորտը: Ամեն օր տասնյակ ու հարյուրավոր հաղորդագրություններ էի ստանում աշխարհի փարբեր ծայրերում բնակվող իմ ընկերներից և գործընկերներից: Ինձ հարցնում էին՝ «Ինչպե՞ս ես», «Ինչպե՞ս կարող եմ քեզ օգնել», «Մենք քեզ հետ ենք», «Եթե որոշես գալ, իմ տան դռները բաց են քո առաջ»: Սրանք այն խոսքերն են, որ ուժ էին տալիս և օգնում գիտակցել, որ քանի դեռ կարող եմ, մնալու եմ:

We started a humanitarian direction. We - the "Centre "Women's Perspectives" - a human rights organization - began delivering food kits to places of mass concentration of IDPs, sending clothes and basic necessities for women to areas close to the contact line, opening shelters for IDP women, helping elderly women, women with disabilities, women with children, women with mental disorders, single women and many other people from particularly vulnerable categories who found it much more difficult to survive during the war than others.

War is often a test of humanity, sensitivity and dignity. We have seen a lot of different things during these two and a half years of Russia's full-scale invasion of the territory of Ukraine. But the readiness to help other people, kindness, openness, optimism was very inspiring.

Since the first months of the war, we have resumed our human rights activities. We have seen that violence is increasing and we have continued our support for women affected by violence. Now we have almost stopped our humanitarian component, as large humanitarian funds and organizations have come to Ukraine and have undertaken humanitarian support.

Now we see a lot of fatigue around us. People have been working at their limits for a very long time. But we also see more and more problems that arise. Conflict-related sexual violence, psychiatric disorders, violence by the military, domestic violence, child abuse - these are the problems that are acute in Ukraine today.

Already during the war in June 2022, Ukraine ratified the Istanbul Convention. For us, this was the end of a big stage in the direction of ensuring

Հաճախ վախենում էի ու դեռ վախենում եմ: Բայց մենք սովորեցինք ապրել ու աշխատել պատերազմի պայմաններում:

Մենք մարդասիրական նոր ուղղություն սկսեցինք: Մենք՝ «Կանանց հեռանկարներ» կենտրոն իրավապաշտպան կազմակերպությունը, սկսեցինք աննդի փաթեթներ մատակարարել ներքին տեղահանված անձանց մեծ կուտակումներ ունեցող վայրեր, կանանց համար հագուստ և առաջին անհրաժեշտության իրեր ուղարկել շփման գծին մոտ գտնվող տարածքներ, ապաստարաններ ստեղծել ներքին տեղահանված կանանց համար, օգնել տարեց կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց, երեխաներ ունեցող կանանց, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կանանց, միայնակ կանանց և հատկապես խոցելի խմբերին պատկանող շատ այլ մարդկանց, ում համար, այլոց համեմատ, պատերազմի ընթացքում գոյատևելը շատ ավելի բարդ էր:

Պատերազմը հաճախ մարդասիրության, զգայունության և արժանապատվության փորձություն է: Ուկրաինայի տարածք Ռուսաստանի լայնամասշտաբ ներխուժմանը հետևած երկուսուկես տարվա ընթացքում մենք շատ բաներ ենք տեսել: Բայց այլոց օգնելու պատրաստակամությունը, բարոությունը, հոժարությունը, լավատեսությունը մեզ շատ են ոգեշնչել:

Պատերազմի առաջին ամիսներից վերսկսել ենք մեր իրավապաշտպան գործունեությունը: Մենք տեսել ենք, որ բռնությունն աճում է, և շարունակել ենք մեր աջակցությունը բռնությունից տուժած կանանց: Ներկայումս գրեթե դադարեցրել ենք մարդասիրական օգնության բաղադրիչը, քանի որ խոշոր մարդասիրական հիմնադրամներ և կազմակերպություններ են եկել Ուկրաինա և

the rights of women and children affected by violence. Now we are at a new stage. At the stage of implementation of the Istanbul Convention. I believe that we will pass many more stages and victories on our way. Feminist initiatives in Ukraine have shown themselves very well. We passed the test for solidarity, strength and viability. We have become stronger and I am convinced that we will continue to defend the rights of women in Ukraine, no matter what!

Marta Chumalo,
Women's Perspectives Center, Ukraine

“Challenging violence against women had been a principal commitment of Ukrainian feminists since national independence in 1991.

Marta Chumalo, a psychologist, has been among the campaign's most determined activists. As part of that campaign, Marta co-founded Lviv's Women's Perspectives Center – an independent feminist organization dedicated to charting violence against Ukrainian women. It has pressed all arms of the government to take the violence seriously by holding perpetrators accountable and training civil servants and NGO activists in feminist analysis. It has held workshops to raise awareness of violence among diverse women. Contrary to local folk wisdom, they learn, “Beating is not a form of love.”

Marta and her colleagues launched the Center in 1998, seven years after the collapse of the Soviet Union and Ukraine's formal independence. Marta and her Center colleagues lived through

հանձն են առել տրամադրել մարդասիրական աջակցություն:

Այժմ ուժասպառուություն ենք նշմարում մեր շուրջը: Մարդիկ արդեն շատ երկար ժամանակ աշխատում են իրենց կարողությունների առավելագույն չափով: Ավելի ու ավելի շատ խնդիրներ են առաջանում: Հակամարտությամբ պայմանավորված սեռական բռնություն, հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ, գինվորականների կողմից բռնություն, ընտանեկան բռնություն, երեխաների նկատմամբ բռնություն. սրանք այսօր լուրջ խնդիրներ են Ուկրաինայում:

Ուկրաինյան վավերացրել է Ստամբուլյան կոնվենցիան («Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիա», Եվրոպայի Խորհրդի միջազգային համաձայնագիր) պատերազմի ընթացքում՝ 2022 թվականի հունիսին: Մեզ համար սա բռնությունից տուժած կանանց և երեխաների իրավունքների ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների երկարատև շրջափուլի ավարտ էր: Հիմա նոր փուլում ենք՝ Ստամբուլյան կոնվենցիայի իրականացման փուլում: Ես համոզված եմ, որ մեր ճանապարհին դեռ շատ շրջափուլեր և հաղթանակներ են լինելու: Ուկրաինայում ֆեմինիստական նախաձեռնություններն իրենց շատ լավ են դրսևորել: Մենք հանձնել ենք համերաշխության, ուժի և կենսունակության քննությունը: Մենք ավելի ուժեղ ենք դարձել, և ես համոզված եմ, որ շարունակելու ենք պաշտպանել կանանց իրավունքները Ուկրաինայում՝ անկախ ամեն ինչից:

Մարթա Չումալո,
«Կանանց հեռանկարներ» կենտրոն, Ուկրաինա

the country's 2004 "Orange Revolution," which, disappointingly, did not end the government's rampant corruption.

Corruption is always gendered. Women and men do not play identical roles in political and bureaucratic corruption. More often than not, while women can become corrupt, the relationships that grease the wheels of corruption are masculinized relationships, relationships that depend on certain understandings shared among well-placed men. Rule of law is meant to disrupt those distorted, anti-democratic relationships. Ukrainian women's advocates have been advocates for the rule of law because it makes governance fairer, more transparent and more open to civil society's input.¹ In the area of violence against women, police officers widely known to take bribes are not police officers to whom a woman suffering domestic violence by a male partner is likely to report abuse.²

Nine years after the Orange Revolution, Marta and her co-activists experienced a more effective popular uprising. Today it is referred to as the "Revolution of Dignity." From November 2013 through February 2014, Ukrainians of disparate backgrounds – students and their parents, Jews and Christians, LGBTQ activists and tradespeople, small town residents and city dwellers – flocked to the central plaza of Kyiv, the "Maidan," to challenge the increasingly corrupt and autocratic president who had caved in to Putin's demand that Ukraine give up its candidacy for EU membership. There in the Maidan, defying the regime's security forces' brutality, many Ukrainians felt as though, for the first time in Ukraine's history, they were creating a genuine civil society. There was a gender division of labor among the protestors, with mostly men building the barricades and

«Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարը ուկրաինացի ֆեմինիստների հիմնական հանձնառությունն է եղել 1991 թվականին անկախության հռչակումից ի վեր:

Մարթա Չումայուն, մասնագիտությամբ՝ հոգեբան, եղել է արշավի ամենավճռական տրամադրված ակտիվիստներից: Այդ արշավի շրջանակներում Մարթան համահիմնել է Լվովի «Կանանց հեռանկարներ» կենտրոնը՝ անկախ ֆեմինիստական կազմակերպություն, որը նվիրված է ուկրաինացի կանանց նկատմամբ բռնության դեպքերի վերհանմանը: Կազմակերպությունը ճնշում է գործադրում իշխանության բոլոր ճյուղերի վրա, որպեսզի վերջիններս ավելի լուրջ վերաբերեն բռնությանը՝ պատասխանատվության ենթարկելով մեղավորներին և վերապատրաստելով քաղաքացիական ծառայողներին և հասարակական կազմակերպությունների ակտիվիստներին ֆեմինիստական վերլուծություն իրականացնելու թեմայով: Նրանք կազմակերպել են նաև սեմինարներ՝ բարձրացնելու բռնության մասին իրազեկվածությունը տարբեր կանանց շրջանում: Հակառակ տեղական ժողովրդական իմաստության՝ նրանք սովորում են, որ «Ճեծը սիրո ձև է»:

Մարթան և իր գործընկերները կենտրոնը հիմնադրել են 1998 թվականին՝ Խորհրդային Միության փլուզումից և Ուկրաինայի անկախության հռչակումից յոթ տարի անց: Մարթան և կենտրոնի իր գործընկերներն այնտեղ էին, երբ 2004 թվականին երկրում տեղի ունեցավ «Նարնջագույն հեղափոխությունը», որը, ցավոք սրտի, վերջ չտվեց պետական ոլորտում մոլեգնող կոռուպցիային:

mostly women supplying food and nursing, but everyone in the Maidan, it seemed, felt that, together, they were making history. It was a memorable collective moment.³

Marta and Women's Perspectives were part of the country's vibrant post-Maidan civil society. The Center's work was intended to ensure that women were full participants in the still-nascent bottom-up democracy. They argued that a woman threatened by domestic violence could not act as a full citizen. A woman subjected to any sort of violence who could not trust the police, public prosecutors or judges to effectively pursue her charges was being denied full citizenship. Without effectively challenging violence against women, the promise of Ukrainian democracy could not be fulfilled.

By 2021, in the middle of the Covid lockdown, Marta and the Center's activists were labeling the level of men's violence against Ukrainian women "femicide."

They argued that the scale of male violence endured by women across Ukraine had reached such an extraordinary level that it qualified as murder of an entire class of persons. The Center announced, therefore, that it was establishing a new program: the National Femicide Watch. The project's staff would track murders of Ukrainian women, as well as police responses and prosecutorial and judicial actions. Its staff would also monitor what, if any, protective orders were issued by authorities against threatening potential perpetrators. National Femicide Watch would use its findings to lobby for reforms in both government policy and practice.⁴

To document the dire condition of women in Ukraine internationally – and to ensure that the

Կոռուպցիան միշտ էլ գենդերացված է: Քաղաքական և բյուրոկրատական կոռուպցիայում կանանց և տղամարդկանց դերերը նույնական չեն: Չնայած կանայք կարող են կոռումպացված լինել, հաճախ կոռուպցիան խթանող փոխհարաբերությունները առնականացված են՝ կախված լինելով շահավետ դիրքում գտնվող տղամարդկանց միջև որոշակի ըմբռնումներից: Օրենքի գերակայությունը կոչված է խաթարելու այդ խեղված, հակաժողովրդավարական հարաբերությունները: Ուկրաինացի կանանց շահերի պաշտպանները ջատագովում են օրենքի գերակայությունը, ինչն էլ հանգեցնում է ավելի արդար, թափանցիկ և բաց կառավարման¹: Օրինակ՝ տղամարդ գուզընկերոջ կողմից ընտանեկան բռնության ենթարկված կինն ամենայն հավանականությամբ կաշառք վերցնող ոստիկանին այդ մասին չի հայտնի²:

Նարնջագույն հեղափոխությունից ինը տարի անց Մարթան և այլ ակտիվիստներ ականատես եղան ավելի արդյունավետ ժողովրդական ընդվզման: Այսօր այն անվանում են «Արժանապատվության հեղափոխություն»: 2013թ. նոյեմբերից մինչև 2014թ. փետրվար ամիսները տարբեր ուկրաինացիներ՝ ուսանողներ և իրենց ծնողները, հրեաներ և քրիստոնյաներ, ԼԳԲՏՔ ակտիվիստներ և առևտրականներ, փոքր և մեծ քաղաքների բնակիչներ, հավաքվել էին Կիևի «Մայդան» կոչվող կենտրոնական հրապարակում՝ մարտահրավեր նետելու կոռումպացված և ավտոկրատ նախագահին, որը ենթարկվել էր Պուլտինի պահանջին, որ Ուկրաինան հրաժարվի ԵՄ-ին անդամակցելու իր թեկնածությունից: Դիմակայելով ռեժիմի անվտանգության ուժերի դաժանությանը՝ Մայդանում շատ ուկրաինացիներ զգացին,

government did not underplay its extent – Marta Chumalo and two attorneys from Women’s Perspectives submitted a formal report to the UN Special Rapporteur on Violence Against Women and Girls. The Special Rapporteur had been launched by the UN Human Rights Council in 1994 under pressure from feminists inside and outside the UN who asserted that violence against women was neither merely a private affair nor only a national concern.

Violence against women, they contended, denied women the basic human rights that the UN was established to uphold.⁵

What happens to violence against women in war and how should feminists think about violence against women when militarized violence has engulfed the entire society? After the February 2022 Russian invasion, priorities shifted for Ukrainian government officials. There was less public money to support shelters for women victims of domestic violence. There were fewer police officers to respond to women’s calls for protection. There was less “bandwidth” for civilian Ukrainian feminists to have lessons to teach us - policy-makers - to think about non-war-related violence against women. Marta and her feminist colleagues insisted that wartime did not make violence against women beside the point. Just the opposite. If Ukraine was going to effectively wage its defensive war against Russian aggression, the country’s women, as well as its men, would need to be capable of acting as fully functioning citizens. Yet the conditions of war exacerbated the factors causing violence against women.⁶

Documented sexual abuse by occupying Russian soldiers had to be prosecuted, but those were not the only sorts of violence against Ukrainians

որ Ուկրաինայի պատմության մեջ առաջին անգամ իրենք իսկական քաղաքացիական հասարակություն են ստեղծում: Տուլցարարների միջև աշխատանքի գենդերային բաժանում էր նշմարվում, երբ բարիկադները կառուցում էին հիմնականում տղամարդիկ, իսկ կանայք գերազանցապես անունդ էին մատակարարում և քույրություն անում: Այնուամենայնիվ, Մայդանում բոլորը կարծես զգում էին, որ միասին պատմություն են կերտում: Հավաքական ոգու անմոռանալի պահ էր³:

Մարթան և «Կանանց հեռանկարներ» կենտրոնը երկրի հետմայդանյան ակտիվ քաղաքացիական հասարակության մասն էին կազմում: Կենտրոնի աշխատանքը նպատակ ուներ ապահովելու, որ կանայք լիիրավ մասնակիցներ լինեն դեռևս նոր ծնվող ժողովրդավարության կերտմանը: Ցանկացած տեսակի բռնության ենթարկված կանայք, որոնք չէին կարող հույսը դնել ոստիկանության, դատախազների կամ դատավորների վրա, փաստորեն զրկված էին իրենց քաղաքացիական իրավունքները լիարժեք իրացնելու հնարավորությունից: Առանց կանանց նկատմամբ բռնությանը արդյունավետորեն մարտահրավեր նետելու՝ Ուկրաինայում ժողովրդավարություն հաստատելու խոստումը չէր կարող իրականացվել:

2021 թվականի դրությամբ՝ ԶՈՎԻԴ համավարակով պայմանավորված լրքդառնի ընթացքում, Մարթան և Կենտրոնի ակտիվիստները տղամարդկանց կողմից ուկրաինացի կանանց նկատմամբ բռնությունն արդեն անվանում էին «կնասպանություն»:

Նրանք պնդում էին, որ Ուկրաինայում կանանց նկատմամբ բռնության մասշտաբները հասել են այնպիսի արտասովոր մակարդակի, որ դրանք կարելի է որակել որպես մարդկանց

that needed to be made public and challenged during this war. Since the invasion, more Ukrainian women in villages and cities were living on their own. There were fewer streetlights. There were more men on the streets. More Ukrainian men had guns.⁷

Marta, along with other Ukrainian feminists, stepped up their pressure on the government of President Volodymyr Zelensky and his party, Servant of the People, to push members of parliament (now one-fifth women) to ratify the Istanbul Convention on Preventing and Combating Violence Against Women. For six years, conservative members of the legislature, the Rada, backed by the country's conservative religious clergymen, had refused to ratify the Istanbul Convention, claiming that its concept of gender legitimized gay marriage and undermined the family. Zelensky and his party, though elected in 2019 in a fair election and promising to protect democracy and weed out corruption, had waffled, not wanting to upset the conservatives.⁸

Feminists, however, kept pressing Zelensky and his allies. In June 2022, they prevailed. The Rada ratified the Istanbul Convention. For the first time, the Ukrainian government was legally committed to creating effective state mechanisms and practices to combat and prosecute men's violence against women.⁹ Nor did wartime take the topic of militarized masculinities off Ukrainian feminists' proverbial table. Four months after their parliamentary victory, Marta organized a feminist workshop. Women came to Lviv to take part, despite Russian missiles raining down on the country. The participants wanted to share their ideas about what men's militarization in wartime meant for women. In their own feminist and humanitarian work to support women, they

մի ամբողջ դասի սպանություն: Կենտրոնը հայտարարեց, որ սկսում է նոր ծրագիր, որը կոչեցին Femicide National Watch: Ծրագրի անձնակազմը հավաքագրում էր ուկրաինացի կանանց սպանությունների վերաբերյալ տեղեկություններ, հետևում էր ոստիկանության արձագանքին, ինչպես նաև դատախազների ու դատարանների գործողություններին: Նրանք նաև հետևում էին, թե արդյոք իշխանությունները սպառնալիքներով հանդես եկող հնարավոր հանցագործներին պաշտպանող իրավական ակտեր ընդունում են, թե ոչ: National Femicide Watch-ը օգտագործում էր իրենց բացահայտումները՝ հանրային քաղաքականության ոլորտում և իրավակիրառ պրակտիկայում բարեփոխումների լրբբինգ իրականացնելու համար⁴:

Մարթա Չումայլոն և «Կանանց հեռանկարներ» կենտրոնի երկու փաստաբաններ պաշտոնական զեկույց են ներկայացրել ՄԱԿ-ի Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության հարցերով հատուկ զեկուցողին՝ միջազգային մակարդակով փաստագրելու Ուկրաինայում կանանց ծանր դրությունը և ապահովելու, որ իշխանությունները դրա ծավալները ճիշտ ներկայացնեն: Հատուկ զեկուցողի պաշտոնը ստեղծվել էր ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից 1994 թվականին՝ ՄԱԿ-ի ներսում և դրանից դուրս Ֆեմինիստների ճնշման ներքո, որոնք պնդում էին, որ կանանց նկատմամբ բռնությունը մարդկանց անձնական գործը չէ, ոչ էլ՝ զուտ ազգային խնդիր:

Նրանք պնդում էին, որ կանանց նկատմամբ բռնությունը զրկում է կանանց իրենց հիմնարար իրավունքներից, որոնց պաշտպանության համար էլ ստեղծվել է ՄԱԿ-ը⁵:

were seeing Ukrainian men returning from combat taking out their anger or trauma on women in their households. This could not be shoved to the proverbial back burner. It had to be challenged by Ukrainian women now, during wartime.”

Ինչ է տեղի ունենում կանանց նկատմամբ բռնության հետ պատերազմի ժամանակ և ինչպես պետք է ֆեմինիստները անդրադառնան կանանց նկատմամբ բռնությանը, երբ ռազմականացված բռնությունը ընդգրկել է ողջ հասարակությունը: 2022 թվականի փետրվարին Ռուսաստանի ներխուժումից հետո Ուկրաինայի իշխանությունների համար առաջնահերթությունները փոխվեցին: Ավելի քիչ պետական միջոցներ էին հասանելի ընտանեկան բռնությունից տուժած կանանց ապաստարաններին աջակցելու համար: Ավելի քիչ ոստիկաններ կային, որ արձագանքեին կանանց՝ իրենց պաշտպանելու կոչերին: Ուկրաինացի ֆեմինիստների համար ավելի քիչ հնարավորություններ կային՝ քաղաքականություն մշակողներին հիշեցնելու կանանց նկատմամբ պատերազմի հետ չկապված բռնության մասին: Մարթան և իր ֆեմինիստ գործընկերները պնդում էին, որ պատերազմը կանանց նկատմամբ բռնությունը ոչ ակտուալ չի դարձնում: Ճիշտ հակառակը: Եթե Ուկրաինան ցանկանում է արդյունավետորեն վարել իր պաշտպանական պատերազմը ռուսական ագրեսիայի դեմ, ապա կանայք, ինչպես նաև տղամարդիկ, պետք է հնարավորություն ունենան լիարժեքորեն իրացնելու իրենց քաղաքացիական իրավունքները: Այնուամենայնիվ, պատերազմը սրեց կանանց նկատմամբ բռնության հանգեցնող գործոնների ազդեցությունը⁶:

Ռուսական օկուպացիոն զորքի կողմից սեռական բռնության փաստագրված դեպքերի առնչությամբ պետք է քրեական վարույթներ նախաձեռնվեին, սակայն դրանք Ուկրաինացիների նկատմամբ բռնության միակ տեսակները չէին, որ անհրաժեշտ էր հրապարակայնացնել և հասցեագրել այս պատերազմի ընթացքում: Ներխուժումից հետո

գյուղերում և քաղաքներում միայնակ ապրող ուկրաինացի կանանց քանակն ավելացել էր: Փողոցների լուսավորությունը պակասել էր: Փողոցներում ավելի շատ տղամարդիկ կային: Ձենք կրող ուկրաինացի տղամարդկանց քանակն ավելացել էր⁷:

Մարթան, ուկրաինացի այլ ֆեմինիստների հետ միասին, ավելի մեծ ճնշում էին գործադրում նախագահ Վլադիմիր Ձելենսկու կառավարության և «Ժողովրդի ծառա» կուսակցության վրա, որպեսզի պատգամավորներին (ներկայումս մեկ հինգերորդը կազմում են կանայք) դրդեն վավերացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան (Ստամբուլյան կոնվենցիան): Վեց տարի շարունակ օրենսդիր մարմնի՝ Ռադայի պահպանողական պատգամավորները, վայելելով երկրի պահպանողական կրոնական առաջնորդների աջակցությունը, հրաժարվում էին վավերացնել Ստամբուլյան կոնվենցիան՝ պնդելով, որ այնտեղ տեղ գտած գենդերի հասկացությունը օրինականացնում է նույնասեռական ամուսնությունները և արժեզրկում ընտանիքի գաղափարը: Ձելենսկին և նրա կուսակցությունը, թեև ընտրվել էին 2019 թվականին կայացած արդար ընտրությունների արդյունքում և խոստացել էին պաշտպանել ժողովրդավարությունը և վերացնել կոռուպցիան, վարանում էին՝ չցանկանալով առաջացնել պահպանողականների վրդովմունքը⁸:

Ֆեմինիստները, սակայն, շարունակում էին ճնշում գործադրել Ձելենսկու և նրա դաշնակիցների վրա: 2022 թվականի հունիսին նրանք հաղթեցին: Ռադան վավերացրեց Ստամբուլյան կոնվենցիան: Ուկրաինայի

¹ One of Ukraine's feminist civil-society groups working to establish the rule of law is Women Lawyers of Ukraine (JurFem): *Hyrstyna Kit, "Helping Ukraine's Sex-Crime Survivors"* on World Today, Chatham House, February 3, 2023: www.chathamhouse.org, accessed February 3, 2023. The memoir by an American woman ambassador to Ukraine who advocated for the rule of law in the crucial years after the Russian conquest of Crimea, and who resisted the Trump administration's questionable attempts to gain influence with the Ukrainian government, is: Marie

Yovanovitch, *Lessons from the Edge: A Memoir* (New York: Mariner Books, 2022).

² Regarding efforts to create new citizen-friendly police in Ukraine: Marc Santora, "Drunks and Drones: Life as a Cop in Kyiv" in *New York Times*, February 10, 2023.

³ A graphic account of Ukraine's Revolution of Dignity, based on interviews with participants, is: Marci Shore, *The Ukrainian Night: An Intimate History of Revolution* (New Haven, CT: Yale University Press, 2017).

կառավարությունն առաջին անգամ պարտավորվել է ստեղծել արդյունավետ պետական մեխանիզմներ և պրակտիկա՝ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարելու և վարույթներ հարուցելու համար⁹: Պատերազմին չհաջողվեց ռազմականացված առնականության թեման հանել ուկրաինացի ֆեմինիստների օրակարգից: Խորհրդարանում հաղթանակից չորս ամիս անց Մարթան կազմակերպեց ֆեմինիստների աշխատաժողով: Այդ աշխատաժողովին մասնակցելու համար կանայք հասել էին Լվով՝ չնայած երկրի վրա թափվող ռուսական հրթիռներին: Մասնակիցները ցանկանում էին կիսվել իրենց մտքերով այն մասին, թե կանանց համար ինչ է նշանակում պատերազմի ժամանակ տղամարդկանց ռազմականացումը: Կանանց աջակցելու իրենց ֆեմինիստական և մարդասիրական աշխատանքի ընթացքում նրանք տեսնում էին, թե ինչպես էին ուկրաինացի տղամարդիկ վերադառնում մարտի դաշտից և իրենց զայրույթը կամ տրավմաները ուղղում ընտանիքի կանանց դեմ: Սա հնարավոր չէր անտեսել: Ուկրաինացի կանայք այս իրավիճակին պետք է հակադրվեին հենց հիմա՝ պատերազմի ժամանակ:

¹ Ուկրաինայի ֆեմինիստական քաղաքացիական հասարակության խմբերից մեկը, որն աշխատում է օրենքի գերակայության հաստատման ուղղությամբ, կոչվում է «Ուկրաինայի կին իրավաբաններ» (Women Lawyers of Ukraine): (JurFem): Հրիստինա Քիտ, «Օգնելով Ուկրաինայում սեռական բռնություն վերապրած անձանց», Չեթհըմ Հաուս, 3-ը փետրվարի, 2023թ.: www.chathamhouse.org: Ուկրաինայում ԱՄՆ կին դեսպանի հուշերը, որը ջատագովում էր օրենքի գերակայությունը Ռուսաստանի կողմից Ղրիմի գրավումից հետո և դիմադրում էր Ուկրաինայի կառավարության վրա ազդեցություն ձեռք բերելու՝ Թրամփի վարչակազմի կասկածահարույց փորձերին՝

Մարի Յովանովիչ, *Lessons from the Edge: A Memoir* (Նյու Յորք: Mariner Books, 2022թ.):

² Ուկրաինայում քաղաքացիների նկատմամբ բարյացակամ ոստիկանություն ստեղծելու ջանքերի վերաբերյալ՝ Մարկ Սանտորա, «Հարբեցողներ և դրոններ. ոստիկանի կյանքը Կիևում» (Drunks and Drones: Life as a Cop in Kyiv): Նյու Յորք Թայմս, 10-ը փետրվարի, 2023թ.:

³ Ուկրաինայի Արժանապատվության հեղափոխության գրաֆիկական նկարագրությունը, որը հիմնված է մասնակիցների հետ հարցազրույցների վրա. Մարսի Շոր, *The Ukrainian Night: An Intimate History of Revolution* (New Haven, CT: Yale University Press, 2017).

⁴Women’s Perspectives Center, “Submission of Information on Femicide” in Lviv, 2021: www.women.lviv.ua, accessed Feb 2, 2023.

⁵United Nations Special Rapporteur on Violence Against Women: www.ohchr.org. The first person appointed to the post of Special Rapporteur was Radhika Coomaraswamy. For her work, Coomaraswamy has been named on the Wall of Gender Justice at the ICC in The Hague.

⁶Merit Hietanen, Oksana Potapova, Christina Haneef, Ganna Kvit and Felicia Dahlquist, Rapid Gender Analysis of Ukraine, p.39

⁷Ukrainian sex workers reported that, once the war began, more of their Ukrainian male clients had guns. That made the sex workers wary. Their armed male clients were more likely to refuse to pay the women’s established rates and more likely to demand additional services from them for free. Social workers who had spent years building trust with sex workers reported that

the war made it harder to stay in contact with women needing support to handle drug addiction and HIV. Prostitution is not legal in Ukraine, but it is widely tolerated. Prior to 2022, men from other European countries had traveled to Ukraine for sex tourism. Those male clients, sex workers report, have disappeared in wartime: Maria Varenikova, “Juggling Sex, Secrecy and Safety as Battles Rage All Around” in New York Times, January 31, 2023.

⁸Yaryna Grusha Possamai, “Kyiv’s Continuing Failure to Implement the Istanbul Convention” on Kennan Institute, Wilson Center, July 13, 2020: www.wilsoncenter.org/blog-post/kyivs-continuing-failure-implement-istanbul-convention, accessed Feb 3, 2023.

⁹Iryna Slavinska, “Historic Victory for Women’s Rights: Ukraine Ratifies Istanbul Convention”, Ukraine Alert on Atlantic Council, June 21, 2022: www.atlanticcouncil.org/ukrainealert/historic-victory-for-womens-rights, accessed February 3, 2023.

(The Ukrainian Night: An Intimate History of Revolution) (Նյու Ջեյքս, Յեյլի համալսարանի հրատարակչություն, 2017):

⁴ «Կանանց հեռանկարներ» կենտրոն, «Կնասպանությունների մասին տեղեկատվության ներկայացում» Լվով, 2021 թ.: Լվով, 2021թ.: www.women.lviv.ua:

⁵Կանանց նկատմամբ բռնության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող www.ohchr.org. Հատուկ զեկուցողի պաշտոնում նշանակված առաջին անձը եղել է Ռադհիկա Կոմարասվամին: Իր պաշտատանքի համար Կոմարասվամին անունը փակցվել է Հաագայում գտնվող Միջազգային քրեական դատարանի Գեներալային արդարության պատին:

⁶Մերիթ Հիեթանեն, Օկսանա Պոտապովա, Քրիստինա Հանեեֆ, Գաննա Բվիտ և Ֆելիսիա Դահլկվիստ, Ուկրաինայի արագ գեներալային վերլուծություն, էջ 39:

⁷Ուկրաինացի սեքս աշխատողները նշել են, որ պատերազմի մեկնարկից ի վեր, գենք կրող ուկրաինացի տղամարդ հաճախորդների քանակն ավելացել է: Դա ստիպում էր սեքս աշխատողներին զգուշանալ: Չինված տղամարդ հաճախորդները ավելի շատ դեպքերում էին հրաժարվում վճարել կանանց նշած գինը կամ նրանցից անվճար լրացուցիչ ծառայություններ պահանջում: Սոցիալական աշխատողները, որոնց երկար տարիներ էին պահանջվել սեքս աշխատողների շրջանում վստահություն ձեռք բերելու համար, նշել են, որ պատերազմի պատճառով ավելի դժվար է կապի մեջ մնալ կանանց

հետ, ովքեր աջակցության կարիք ունեն թմրամիջոցներից կախվածության և ՄԻՎԿ-ի դեմ պայքարելու համար: Ուկրաինայում մարմնավաճառությունն օրինական չէ, սակայն առկա է դրա նկատմամբ հանդուրժող վերաբերմունք: Մինչև 2022 թվականը ելրոպական այլ երկրներից տղամարդիկ մեկնում էին Ուկրաինա՝ սեքս-տուրիզմի նպատակով: Ըստ սեքս աշխատողների՝ այդ տղամարդ հաճախորդները պատերազմի մեկնարկից ի վեր այլևս չեն գալիս: Մարիա Վարենիկովա, «Համատեղելով սեքսը, գաղտնիությունը և անվտանգությունը, քանի դեռ շուրջըլորը մարտեր են մղվեցնում» (Juggling Sex, Secrecy and Safety as Battles Rage All Around): Նյու Յորք Թայմս, 31-ը հունվարի, 2023թ.:

⁸Յարինա Գրուշա Պոսամայի, «Կիևը շարունակում է ճախողել Ստամբուլյան կոնվենցիայի իրականացման հարցում» (Kyiv’s Continuing Failure to Implement the Istanbul Convention), Քենանի անվան ինստիտուտ, Վիլսոնի կենտրոն, 13-ը հուլիսի, 2020թ.: www.wilsoncenter.org/blog-post/kyivs-continuing-failure-implement-istanbul-convention:

⁹Իրինա Սլավինսկա, «Կանանց իրավունքների ոլորտում պատմական հաղթանակ. Ուկրաինան վավերացնում է Ստամբուլյան կոնվենցիան» (Historic Victory for Women’s Rights: Ukraine Ratifies Istanbul Convention), Ukraine Alert, Ատլանտյան խորհուրդ, 21-ը հունիսի, 2022թ.: www.atlanticcouncil.org/ukrainealert/historic-victory-for-womens-rights:

Read more on Women’s Perspectives Center



Կարդալ ավելին Կանանց հեռանկարներ կենտրոնի մասին



The World is Bleeding... Don't Look Away¹

Lina AbiRafeh

This piece was written together with Kit Nicholson.

These days, all of my attention is hyperfocused on Palestine. I cannot eat or sleep without thinking about the relentless genocide in Gaza. Because they do not eat or sleep.

The death toll² in Gaza has risen to 31,726 with an estimated 73,792 injured. Violence in the West Bank is escalating³ more and more every day, and the looming man-made (Israeli and American) famine in Gaza has already killed⁴ 27 children. Even as I type these figures, they've increased.

At the same time, the world is full of atrocities. Peace is scarce — seemingly impossible. The insatiable quest for power continues nearly unabated, no matter who it kills in its pursuit. There's an epidemic of violence, and I'm trying to keep focus on as much of it as I can digest in these dark and difficult days.

It is impossible to list everything, but I'm thinking of specific countries where I've lived and worked and others I try to support from a distance. Places like Haiti, Afghanistan, and Sudan along with other major conflicts around the world — to make sure that we are actively holding space and advocating for everyone as much as we can.

I want to do both — remain steadfast in my focus on Palestine and also remain concerned about other places around the world. My heart is big enough to exist in multiple spaces at once.

Because, well, in the words of American civil rights leader Fannie Lou Hamer:

"Nobody's free until everybody's free."

The 2024 Emergency Watchlist⁵ by the International Rescue

Աշխարհն արյունահոսում է... Հայացքդ մի թեքիր¹

Լինա ԱբիՌաֆեհ

Այս աշխատությունը գրվել է Քիրթ Նիքոլսոնի հետ համատեղ


Այս օրերին իմ ամբողջ ուշադրությունը սևեռված է Պաղեստինի վրա: Ես չեմ կարողանում ուտել կամ քնել առանց Գազայում իրականացվող դաժան ցեղասպանության մասին մտածելու: Որովհետև նրանք չեն ուտում և չեն քնում:

Գազայի հատվածում զոհերի թիվը² հասել է 31,726-ի, վիրավորներինը՝ մոտ 73,792-ի: Հորդանան գետի արևմտյան ափին բռնությունն³ օրեցօր ավելի է սաստկանում, իսկ Գազայում հասունացող մարդածին (իսրայելա-ամերիկյան) սովին զոհ է դարձել արդեն⁴ 27 երեխա: Նույնիսկ մինչ ևս գրում եմ, այս թվերը աճում են:

Միևնույն ժամանակ՝ աշխարհը լի է վայրագություններով: Խաղաղությունը սակավ է՝ կարծես անհնարին: Իշխանության անհագ տենչը հարատևում է գրեթե առանց մեղմանալու՝ անկախ նրանից, թե ում է սպանում իր ճանապարհին: Բռնության համաճարակ է բռնկվել, և ես փորձում եմ կենտրոնանալ դրա վրա այնքանով, որքանով կկարողանամ մարսել դա այս խավար ու դժվարին օրերին:

Անհնար է բոլորը թվարկել, բայց ես մտածում եմ որոշակի երկրների մասին, որտեղ ապրել ու աշխատել եմ, իսկ մյուսներին փորձում եմ սատարել հեռվից. վայրեր, ինչպիսիք են Հաիթին, Աֆղանստանը և Սուդանը, ինչպես նաև այլ խոշոր հակամարտությունների օջախներ ամբողջ աշխարհում՝ համոզվելով, որ հնարավորինս նրանց սատար ենք կանգնում և մեր ուժերի ներածին չափով պաշտպանում ենք բոլորի շահերը:

Ես ցանկանում եմ անել երկունս էլ՝ անսասան մնալ Պաղեստինի վրա կենտրոնացմանս հարցում և նաև մտահոգվել աշխարհի այլ վայրերով: Իմ սիրտը բավականաչափ մեծ է, որ կարողանա գոյատևել միաժամանակ մի քանի վայրերում:



Committee (IRC) highlights 20 countries across the globe that face the greatest threat of humanitarian emergency and catastrophe. From Burkina Faso to Niger, more than half of these 20 localities have a majority Black population. Yet, how often have we seen Sudan, Congo, or Haiti talked about on the news or on social media? How often are we updated on the situation on the ground in these countries? What about the political context and our own role in the ongoing violence?

I remain incredibly thankful and inspired by the relentless mass demonstrations the world over for Palestine these past six months. At the same time, I don't want to lose focus on other places. It's impossible to summarize them all, but here are a few we should care about.

Unless otherwise specified, most of the following

Որովհետև, դե, ամերիկյան քաղաքացիական իրավապաշտպան Ֆեննի Լու Համերի խոսքերով.

«Ոչ որ ազապ չէ, քանի դեռ բոլորն ազապ չեն»:

Միջազգային փրկարար կոմիտեի (ՄՓԿ) կողմից 2024 թվականին հրապարակված «Emergency Watchlist»-ում [Արտակարգ իրավիճակների դիտարկում]՝ նշվում է աշխարհի 20 երկիր, որ գտնվում է մարդասիրական ճգնաժամի և աղետի ամենամեծ սպառնալիքի ներքո: Բուրկինա Ֆասոյից մինչև Նիգեր՝ այս 20 բնակավայրերի կեսից ավելին սևամորթ բնակչություն ունի: Այնուամենայնիվ, որքան հաճախ ենք տեսնում, որ լուրերով կամ սոցիալական ցանցերում խոսեն Սուդանի, Կոնգոյի կամ Հաիթիի մասին: Որքան հաճախ ենք տեղեկանում այս երկրներում տիրող իրավիճակի մասին:

Ինչ կասեք քաղաքական ենթատեքստի և շարունակվող բռնություններում մեր իսկ դերի մասին:

Ես խորապես երախտապարտ և ոգեշնչված եմ այս վերջին վեց ամիսների ընթացքում Պաղեստինի համար ամբողջ աշխարհում իրականացվող կատաղի զանգվածային ցույցերից: Միևնույն ժամանակ՝ չեմ ուզում ուշադրությունիցս բաց թողնել այլ վայրերը: Անհնար է բոլորն ամփոփել, բայց ահա մի քանիսը, որոնց մասին պետք է հոգալ:

Հետևյալ տվյալների մեծ մասը համադրվել է երկու հայտնի հավաստի աղբյուրներից՝ ՄՓԿ 2024թ. Emergency Watchlist⁶ և Human Rights Watch-ի 2024թ. համաշխարհային զեկույց⁷:

Աֆղանստան

Թեև 2023 թվականից ի վեր երկրի տնտեսական իրավիճակը փոքր-ինչ բարելավվել է, սակայն 23

data has been synthesized from two reliable sources in the know: The IRC 2024 Emergency Watchlist⁶ and Human Rights Watch World Report 2024.⁷

Afghanistan

While the economic situation in the country has gotten marginally better since 2023, just over 23 million people — 55% of the population — still remain in dire need of humanitarian assistance. Nearly half of the country lives at or below the international poverty line and an increasingly unstable climate threatens the lives and livelihoods of those most vulnerable. Recent earthquakes and floods have rocked and further destabilized the country. Crop production and food supplies in the north and northeast regions have dropped dramatically which has led to increasing levels of food insecurity.

Since the Taliban came back to power in 2021, the rights of women and girls within the country have been the most severely affected. In addition to mandatory face veiling, women must be accompanied by a male chaperone in most places and are forbidden from attaining any secondary or higher education. Over 60,000 women lost their jobs as the government forcefully closed all beauty salons, a key place of female employment. In addition, recent tensions with neighboring countries such as Pakistan has forced around 500,000 Afghan refugees residing in Pakistan to return home.

I've written a few books and many blogs on this incredibly special place. It deserves our full attention. See a few other pieces here⁸ and here⁹.

միլիոնից ավելի մարդ՝ բնակչության 55%-ը, դեռևս գտնվում է հումանիտար օգնության խիստ կարիքի մեջ: Երկրի գրեթե կեսն ապրում է աղքատության միջազգային շեմի վրա կամ դրանից ցածր, իսկ շարունակ ապակայունացող կլիման սպառնալիք է ստեղծում առավել խոցելի բնակչության կյանքի և ապրուստի համար: Վերջին երկրաշարժերն ու ջրհեղեղները ցնցել և էլ ավելի են ապակայունացրել երկիրը: Մշակաբույսերի արտադրությունը և աննդի պաշարները հյուսիսային և հյուսիսարևելյան շրջաններում կտրուկ նվազել են, ինչը հանգեցրել է պարենային անապահովության մակարդակի աճի:

2021թ. թալիբանի վերադարձից հետո երկրի ներսում կանանց և աղջիկների իրավունքները ամենաշատն են տուժել: Ի լրումն դեմքի պարտադիր քողարկման՝ կանանց շատ վայրերում պետք է ուղեկցի տղամարդ, իսկ որևէ միջնակարգ կամ բարձրագույն կրթություն ստանալն արգելվում է: Ավելի քան 60,000 կին կորցրել է աշխատանքը, քանի որ կառավարությունը բռնի կերպով փակել է բոլոր գեղեցկության սրահները, որոնք կանանց հիմնական աշխատավայրն էին: Բացի այդ՝ վերջին լարվածությունը հարևան երկրների հետ, որոնցից է Պակիստանը, ստիպել է Պակիստանում բնակվող մոտ 500,000 աֆղան փախստականների վերադառնալ հայրենիք:

Ես մի քանի գրքեր և շատ բլոգեր եմ հեղինակել այս աներևակայելիորեն առանձնահատուկ վայրի մասին: Այն արժանի է մեր ամբողջ ուշադրությանը:⁸

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն

Երկրում բնակվում են Աֆրիկայի ամենամեծ թվով ներքին տեղահանվածները՝ մոտ յոթ միլիոն: Թեև ԿԴՀ-ն ավելի քան տասը տարի է, ինչ գտնվում է ՄՓԿ դիտազանկում, սակայն ներկայիս փխրուն կառավարությունը քիչ քան է արել իր ժողովրդի տառապանքը մեղմելու համար: ԿԴՀ-ում է գտնվում նաև մարդասիրական օգնության կարիք ունեցող

Democratic Republic of the Congo

The country houses Africa's largest number of internally displaced people — nearly seven million. Although the DRC has been on the IRC watchlist for over ten years, the current and fragile government has done little to ease the suffering of its people. The DRC also houses the world's largest number of people in need of humanitarian assistance — over 25 million.

Over 120 armed groups are reported to be operating within the eastern parts of the country. M23, a Rwanda-backed militia, has been at the forefront of much of this violence against government forces. Meanwhile, excessive police violence has increased in the capital Kinshasa as the government cracks down on the freedoms of speech and assembly. All forms of sexual violence are rampant, and continue with relative impunity.



Image by Annette Jones from Pixabay

աշխարհի ամենամեծ թվով բնակչությունը՝ ավելի քան 25 միլիոն:

Հաղորդվում է, որ երկրի արևելյան շրջաններում գործում է ավելի քան 120 զինված խմբավորում: M23-ը՝ Ռուանդայի կողմից աջակցվող ոստիկանությունը, եղել է իշխանական ուժերի դեմ այս բռնությունների մեծ մասի առաջնագծում: Միևնույն ժամանակ՝ մայրաքաղաք Կինշասայում աճում են ոստիկանական անհամաչափ բռնությունները, մինչ կառավարությունը ճնշում է խոսքի և հավաքների ազատությունը:

Սեռական բռնության բոլոր ձևերը համատարած են և շարունակվում են հարաբերական անպատժելիության պայմաններում:

Կոնգոյի մի կնոջ՝⁹ վերջերս տված հարցազրույցը ևս մեկ անգամ աշխարհին է բացահայտում այդ սարսափները: Նրա խոսքերով.

«Նրան [ամուսնուս] սպանելուց հետո կտրեցին նրա ոտքերը և սեռական օրգանները, մարմնի մասերը եփեցին ու ասացին, որ ուտեմ: Ինձ ասացին, որ եթե չքնեմ բոլորի հետ, ինձ կսպանեն»:

Այս պատմությունը, ինչպես շատ ուրիշներ, ընդունվել է հարաբերական լռությամբ:

Եթովպիա

Եթովպիան ժամանակին լուրերում հայտնվեց երկրի հյուսիսային շրջանում Եթովպիայի կառավարության և «Տիգրայ» ժողովրդական ազատագրական ճակատի (ՏԺԱՃ) միջև ակտիվ բախումների հետևանքով: 2022թ. երկու կողմերը հրադադարի մասին համաձայնագիր ստորագրեցին, որը քիչ թե շատ դեռևս պահպանվում է: Այդուհանդերձ, Եթովպիան շարունակում է թե՛ կետ մնալ, քանի որ մի քանի անընդմեջ տարիների կործանարար

A recent interview¹⁰ with a Congolese woman once again exposes the horrors to the world. In her words:

“After they killed him [my husband], they cut off his legs and private parts. They cooked the body parts and told me to eat it. They told me that if I didn’t sleep with all of them, they were going to kill me.”

This story, like many others, has been met with relative silence.

Ethiopia

Ethiopia was once in the news for active clashes between the Ethiopian government and the Tigray People’s Liberation Front (TPLF) in the northern region of the country. In 2022, the two parties signed a ceasefire agreement that is tentatively still lasting. However, Ethiopia remains a hotspot because successive years of crippling droughts have decimated the resiliency of communities in southern regions. With El Niño on the horizon, the country expects massive flooding to compound the struggles of these already fragile communities.

Approximately 20 million people remain in need of humanitarian assistance. And other clashes in the regions of Oromia and Amhara threaten to spill over. Already, human rights groups are noting hundreds of civilian casualties and a weak judicial system that leaves perpetrators unaccountable.

More than 90,000 refugees from Ethiopia living in Sudan recently made their way back into Ethiopia as the situation in Sudan deteriorated rapidly this past year. Food insecurity and gender-based

երաշտները ոչնչացրել են հարավային շրջանների համայնքների դիմակայունությունը: Հաշվի առնելով էլ Նինյոյի հեռանկարը՝ ակնկալվում է, որ զանգվածային ջրհեղեղները երկրում կխորացնեն այս՝ առանց այն էլ փխրուն համայնքների դժվարին կացությունը:

Մոտ 20 միլիոն մարդ շարունակում է մնալ մարդասիրական օգնության կարիքի մեջ: Իսկ Օրոմիայի և Ամհարայի շրջաններում մյուս բախումները սպառնում են տարածվել: Իրավապաշտպան կազմակերպություններն արդեն իսկ հաղորդում են հարյուրավոր քաղաքացիական զոհերի և թույլ դատական համակարգի մասին, որը բռնարարներին անպատիժ է թողնում:

Սուդանում բնակվող ավելի քան 90,000 եթովպիացի փախստականներ վերջերս վերադարձել են եթովպիա, քանի որ վերջին տարում Սուդանում իրավիճակը կտրուկ վատթարացել է: Պարենային անապահովությունը և գենդերային հիմքով բռնությունը շարունակում են մնալ երկրի ամենահրատապ խնդիրները:

Չնայած Տիգրայում հայտարարված զինադադարին՝ այս շրջանի կանայք շարունակաբար ենթարկվում են սեռական ստրկության, և շարունակում են ստացվել հաղորդումներ էրիթրեական ուժերի կողմից տիգրայացի կանանց և աղջիկների բռնաբարությունների և սեռական ոտնձգությունների մասին: Տարածաշրջանում գենդերային հիմքով բռնությունը զուգորդվում է էթնիկական հատկանիշներով, որի հետևանքով կանայք թիրախավորվում են պարզապես տիգրայացի լինելու համար:¹⁰

Հաիթի

Երկու խոշոր միջադեպ կրկին այս երկիրը ուշադրության կենտրոնում են պահում: Ներկայումս թույլ կենտրոնական կառավարությունից ավելի շատ

violence continue to be the country's most pressing issues.

Despite a truce in Tigray, women in the region have been continually forced into sexual slavery, and many reports of Eritrean forces raping and assaulting Tigrayan women and girls continue to come to light. Gender-based violence in the region is being perpetrated along ethnic lines with women being targeted for being simply Tigrayan.

Here¹¹ is my old post on Ethiopia — the situation has only gotten worse since then.

“The Tigray crisis is playing out on the bodies of women and girls. Even one case of rape is too many.”

-Lina AbiRafteh

Haiti

Two major incidents have put this country into the spotlight once again. After a mass prison break¹² in early March of this year by some of the more than 300 armed street gangs that currently hold more power than the weak central government (and hold 80% of the capital of Port-au-Prince), the interim Prime Minister Ariel Henry agreed to step down¹³ citing the chaos in the country as his motivating factor. Henry was forced to power in 2021 after the assassination of the ex-President Jovenel Moïse which left the already-unstable country in even greater turmoil. The country's neighbor, the Dominican Republic, also recently returned almost 100,000 people to Haiti, although some were Dominican citizens.

The Haitian government has a barely functioning political system which cannot meet the needs of its people. More than 40% of the country faces regular food insecurity and access to reliable

իշխանություն ունեցող (տիրապետում է մայրաքաղաք Պորտ-օ-Պրենսի 80%-ին) ավելի քան 300 զինված փողոցային հանցախմբերի կողմից այս տարվա մարտի սկզբին բանտից զանգվածային փախուստից¹¹ հետո վարչապետի պաշտոնակատար Արիել Հենրին համաձայնել է պաշտոնից հեռանալ¹²՝ որպես իր դրդապատճառ նշելով երկրում տիրող քաոսը: Հենրին ստիպված եկավ իշխանության 2021 թվականին՝ նախկին նախագահ Ջովենել Մոյզի սպանությունից հետո, որն առանց այն էլ անկայուն երկիրը թողեց էլ ավելի մեծ ցնցումների մեջ: Երկրի հարևան Դոմինիկյան Հանրապետությունը նույնպես վերջերս Հաիթի վերադարձրեց գրեթե 100,000 անձի, թեպետ ոմանք Դոմինիկյան Հանրապետության քաղաքացիներ էին:

Հաիթիի կառավարությունն ունի հազիվ գործող քաղաքական համակարգ, որը չի կարողանում բավարարել իր ժողովրդի կարիքները: Երկրի ավելի քան 40%-ը բախվում է կանոնավոր պարենային անապահովության խնդրին, իսկ հուսալի էլեկտրաէներգիայի, կրթության և սանիտարական պայմանների հասանելիությունը սահմանափակ է: 2023թ. հոկտեմբերին Միավորված ազգերի կազմակերպությունը երկրում լիազորեց կայունացման առաքելության իրականացումը Զենիայի գլխավորությամբ, որը դեռևս չի իրականացվել նման գործողության օրինականության վերաբերյալ տարբեր մտահոգությունների, ինչպես նաև քաղաքացիական բնակչության համար ավելի շատ զինված անձնակազմի ներհոսքից բխող վնասի պատճառով:

Հաիթիի կանանց համար երկրի անկայունությունը միայն ավելի շատ մարտահրավերներ է ստեղծում: Ներկայումս Հաիթիում գործում է հղիության արհեստական ընդհանուր բացարձակ արգելք, սակայն այս տարի ուժի մեջ մտնող փոփոխված քրեական օրենսգիրքը թույլ կտա դա անել բժշկական անհրաժեշտության և մինչև 12

electricity, education, and sanitation is limited. In October of 2023, the United Nations authorized a Kenyan-led stabilization mission to the country that has yet to materialize because of various concerns about the legality of such an action and the harm an influx of more armed personnel might mean to civilians.

For Haitian women, the country's instability only leads to more challenges. Haiti currently has a total ban on abortion, but a revised penal code going into place this year will allow it in cases of medical necessity and up to 12 weeks of pregnancy. It's not perfect, but it's progress. Between January and May of 2023, MSF treated over 1,000 survivors of violent sexual assault —



Image from @golfarahani

more than double the amount of the previous year in the same time period. As Haiti returns to instability, it is Haitian women and girls who bear the brunt.

Iran

News about Iran once flooded our screens after the death of Mahsa Amini at the hands of the country's morality police in September 2022. Since then, the rest of the world has moved on to other issues, but the situation in Iran remains grave. The government continues to crack down on women's rights, freedom of expression, and assembly of its citizens. The rights of women and girls remain severely restricted and

շաբաթական հղիության դեպքում: Սա կատարյալ չէ, բայց առաջընթաց է: 2023թ. հունվարից մինչև մայիս ընկած ժամանակահատվածում «Բժիշկներ առանց սահմանների»-ն աջակցել է բռնի սեռական ոտնձգության ենթարկված ավելի քան 1000 կնոջ, ինչը կրկնակի գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի թիվը: Մինչ Հաիթիի հետընթաց է ապրում դեպի անկայունություն, հարվածի ողջ ծանրությունն իրենց վրա են կրում Հաիթիի կանայք և աղջիկները:

Իրան

Իրանի մասին լուրերը ողողեցին մեր էկրանները 2022 թվականի սեպտեմբերին երկրի բարոյականության ոստիկանության ձեռքով Մահսա Ամինիի մահից հետո: Այդ ժամանակից ի վեր՝ աշխարհի մնացած մասն անցել է այլ խնդիրների, սակայն Իրանում իրավիճակը շարունակում է մնալ ծանր: Կառավարությունը շարունակում է ճնշումներ գործադրել կանանց իրավունքների, իր քաղաքացիների խոսքի և հավաքների ազատության դեմ:

Կանանց և աղջիկների իրավունքները մնում են խիստ սահմանափակումների և քննադատության ներքո: Մինչև 13 տարեկան աղջիկներին օրենքով թույլատրվում է ամուսնանալ: Նմանապես, ըստ «Human Rights Watch»-ի¹³, 2021 թվականից ի վեր ավելի քան 165 կին է սպանվել իր տղամարդ զուգընկերոջ կողմից՝ միջինում յուրաքանչյուր 4 օրը մեկ: «Կանայք, կյանք, ազատություն» բողոքի ցույցերից ի վեր, իրավապաշտպան խմբերը հետաքննում են ավելի քան 500 ցուցարարների մահը, որոնցից 68-ը՝ երեխաներ:

Այն, որ մենք Իրանի մասին լուրեր չենք տեսնում, չի նշանակում, որ ամեն ինչ կարգին է¹⁴:

under fire. Girls aged 13 and under are still legally allowed to be married. Similarly, according to Human Rights Watch¹⁴, over 165 women have been reported as being murdered by their male partner since 2021 — an average of one every 4 days. Since the Women, Life, Freedom protests, human rights groups have been investigating the death of over 500 protestors — 68 of whom were children.

All because we are not seeing news on Iran does not mean that things are ok. See my other articles on Iran here¹⁵ and here¹⁶.

Sudan

Sudan finds itself embroiled in a civil war between the Sudanese Armed Forces (SAF) and the Rapid Support Forces (RSF). In less than a year, the number of people in dire need of humanitarian assistance rose from 15.8 million to 24.8 million, a majority of whom are women and girls. For reference, that's the equivalent of the entire country of Austria descending into chaos in only 12 months. Bombs and heavy artillery are commonplace in civilian/urban areas and the United Nations estimates that 9,000 people have been killed since the beginning of the conflict in April 2023.

To make matters worse, a genocide is playing out in Darfur as the majority Arab RSF attacks the indigenous Massalit population. Fractures like this are playing out throughout the country as the population is divided along ethnic lines. With cities and urban centers acting as playgrounds for militants and more than 70% of the critical health infrastructure damaged during the war, experts are warning of critical failure of the country's vital systems as famine and disease increase

Սուդան

Սուդանում ծավալվում է քաղաքացիական պատերազմ Սուդանի զինված ուժերի (ՍՀՈՒ) և Արագ արձագանքման ուժերի (ԱԱՌԻ) միջև: Մեկ տարուց պակաս ժամանակում մարդասիրական օգնության խիստ կարիք ունեցող մարդկանց թիվը 15,8 միլիոնից հասել է 24,8 միլիոնի, որոնց մեծամասնությունը կանայք և աղջիկներ են: Ի գիտությունն՝ դա համարժեք է նրան, որ ամբողջ Ավստրիան ընդամենը 12 ամսում հայտնվի քաոսի մեջ: Ռումբերն ու ծանր հրետանին սովորական երևույթ են քաղաքացիական/քաղաքային բնակավայրերում, իսկ ՄԱԿ-ի գնահատմամբ՝ հակամարտության սկզբից՝ 2023թ. ապրիլից, զոհվել է 9000 մարդ: Իրավիճակն էլ ավելի սրելով՝ Դարֆուրում ցեղասպանություն է տեղի ունենում, մինչ արաբական ԱԱՌԻ մեծամասնությունը հարձակվում է բնիկ Մասալիտ բնակչության վրա: Նման մասնատվածություններն առկա են ամբողջ երկրում, քանի որ բնակչությունը պառակտված է էթնիկ հողի վրա: Քանի որ քաղաքներն ու քաղաքային կենտրոնները հանդես են գալիս որպես զինյալների թատերաբեմեր, և պատերազմի ընթացքում վնասվել է առողջապահական կարևոր ենթակառուցվածքների ավելի քան 70%-ը, փորձագետները զգուշացնում են երկրի կենսական համակարգերի կրիտիկական տապալման մասին, մինչ սովն ու հիվանդությունները կտրուկ աճ են արձանագրում:

Կանայք կազմում են 1,3 միլիոն փախստականների մեծամասնությունը, որոնք փախել են երկրից հարևան այլ պետություններ: Նմանապես, ՄԱԿ-ի փորձագետներն արդեն իսկ ստուգել են, որ Խարթումում և Դարֆուրում տեղի ունեցող գենդերային հիմքով սեռական բռնությունների մեծ մասը հատկապես էթնիկ հիմքով է: Այսինքն՝ կանայք դառնում են սեռական ոտնձգությունների թիրախ զուտ մասալիտցի իրենց ազգային պատկանելության համար:

dramatically.

Women make up the majority of the 1.3 million refugees that have fled the country to other neighboring states. Similarly, UN experts have already verified that a majority of the gender-based sexual violence happening in Khartoum and Darfur is specifically along ethnic lines. That is, women are becoming targets of sexual assault simply because of their ethnicity as Massalit.

Everywhere else...

There are many more places in need of our attention, advocacy, and support. These humanitarian catastrophes are overwhelming.

And we know too well from experience that in insecure contexts, women and girls suffer more.

The numbers themselves are shocking. How do we begin to help when the need is in the tens of millions?! There's a risk that all these figures blur together and people's lived experiences get lost. It seems far easier to shrug and do nothing. But I don't think so. Activism is about intent — actively centering our humanity and compassion in our analysis and understanding of world politics. Sure, it's ugly. But we cannot look away.

At the same time, it is important to critically examine how each of these countries ties into the fabric of Empire. Much as we know that the US's new "temporary" dock¹⁷ along Gaza's coastline has nothing to do with the delivery of humanitarian aid and all to do with advancing US interests in the region, we know that the instability of these countries only furthers the agenda of the powers that be.

Այլուր...

Կան շատ ավելի շատ վայրեր, որոնք ունեն մեր ուշադրության, ջատագովության և աջակցության կարիքը: Նման հումանիտար աղետները չափազանց շատ են:

Եվ փորձը ցույց է տալիս, որ անապահով միջավայրերում կանայք և աղջիկներն ավելի շատ են տուժում:

Թվերն ինքնին ցնցող են: Ինչպե՞ս ենք մենք սկսում օգնել, երբ դրա կարիքը հասնում է տասնյակ միլիոնների: Վտանգ կա, որ այս բոլոր թվերը միասին կմշուշոտվեն, և մարդկանց ապրած փորձառությունները կկորչեն: Թվում է, թե շատ ավելի հեշտ է թոթվել և ոչինչ չանել: Բայց ես այդպես չեմ կարծում: Ակտիվիզմը մտադրության մասին է՝ ակտիվորեն կենտրոնացնելու մեր մարդասիրությունն ու կարեկցանքը համաշխարհային քաղաքականության մեր վերլուծության և ըմբռնման վրա: Իհարկե, պատկերը սարսափելի է: Սակայն մենք չենք կարող մեր հայացքը թեքել:

Միևնույն ժամանակ՝ կարևոր է քննադատաբար ուսումնասիրել, թե ինչպես է այս երկրներից յուրաքանչյուրը միահյուսվում կայսրության կառուցակարգին: Մենք գիտենք, որ Գազայի ափի երկայնքով ԱՄՆ-ի նոր «ժամանակավոր» նավահանգիստը¹⁵ ոչ մի կապ չունի հումանիտար օգնության առաքման հետ, այլ միայն՝ տարածաշրջանում ԱՄՆ շահերի առաջնական: Մենք գիտենք, որ այս երկրների անկայունությունը միայն նպաստում է գերտերությունների օրակարգին:

Մեր ուշադրությամբ ու ջատագովությամբ մի օր այդ նժարը մեր օգտին կթեքվի: Փոփոխությունն արդեն սկսվում է...

With our attention and advocacy, one day that balance will tip in our favor. It's starting to change already...

¹ This article originally appeared on Medium, on March 21, 2024; The World is Bleeding... Don't Look Away | by Lina AbiRafeh | Medium

² Israel-Gaza war in maps and charts: Live tracker | Israel-Palestine conflict News | Al Jazeera

³ Inside the West Bank's surging settler violence | KALW

⁴ <https://www.msn.com/en-us/news/world/over-one-million-people-in-gaza-are-suffering-from-starvation/ar-BB1k5WrR>

⁵ rescue.org/sites/default/files/2023-12/CS2401_Report_Watchlist_Final_30MB_0.pdf

⁶ rescue.org/sites/default/files/2023-12/CS2401_Report_Watchlist_Final_30MB_0.pdf

⁷ World Report 2024 | Human Rights Watch ([hrw.org](https://www.hrw.org))

⁸ <https://linaabirafeh.medium.com/trying-to-live-is-different-from-living-afghan-women-two-years-on-f43ff45ed020>

⁹ <https://linaabirafeh.medium.com/afghanistan-one-year-later-and-the-story-of-one-afghan-woman-df2b11ec37c2>

¹⁰ TW: SA  How much suffering and crimes against humanity do we need to endure before the world shows us a hint of what they've shown others?? ... | Instagram

¹¹ Women of Tigray are calling out — are we listening?! | by Lina AbiRafeh | Medium

¹² Haiti declares state of emergency after mass prison escape | CNN

¹³ U.S. Reportedly Pressuring Haitian Prime Minister Ariel Henry to Step Down Amid Mounting Crisis | Democracy Now!

¹⁴ World Report 2024: Iran | Human Rights Watch ([hrw.org](https://www.hrw.org))

¹⁵ Women! Life! Freedom! Women in Iran, one year later | by Lina AbiRafeh | Medium

¹⁶ Women, Life, Freedom: For Iran, for all women | by Lina AbiRafeh | Medium

¹⁷ US will deploy 1,000 troops off Gaza shore in plan to build floating dock - World Socialist Web Site ([wsws.org](https://www.wsws.org))

¹ Այս հոդվածը սկզբնապես հայտնվել է «Medium»-ում 2024 թվականի մարտի 21-ին. The World is Bleeding... Don't Look Away | by Lina AbiRafeh | Medium

² Israel-Gaza war in maps and charts: Live tracker | Israel-Palestine conflict News | Al Jazeera

³ Inside the West Bank's surging settler violence | KALW

⁴ <https://www.msn.com/en-us/news/world/over-one-million-people-in-gaza-are-suffering-from-starvation/ar-BB1k5WrR>

⁵ rescue.org/sites/default/files/2023-12/CS2401_Report_Watchlist_Final_30MB_0.pdf

⁶ rescue.org/sites/default/files/2023-12/CS2401_Report_Watchlist_Final_30MB_0.pdf

⁷ World Report 2024 | Human Rights Watch ([hrw.org](https://www.hrw.org))

⁸ Տես ևս մի քանի այլ աշխատություններ այստեղ՝ <https://linaabirafeh.medium.com/trying-to-live-is-different-from-living-afghan-women-two-years-on-f43ff45ed020> և այստեղ՝ <https://linaabirafeh.medium.com/afghanistan-one-year-later-and-the-story-of-one-afghan-woman-df2b11ec37c2>

⁹ TW: SA  How much suffering and crimes against humanity do we need to endure before the world shows us a hint of what they've shown others?? ... | Instagram

¹⁰ Իմ հին գրառումը Եթովպիայի մասին. այդ ժամանակից ի վեր իրավիճակը միայն վատթարացել է՝ Women of Tigray are calling out — are we listening?! | by Lina AbiRafeh | Medium

¹¹ Haiti declares state of emergency after mass prison escape | CNN

¹² U.S. Reportedly Pressuring Haitian Prime Minister Ariel Henry to Step Down Amid Mounting Crisis | Democracy Now!

¹³ World Report 2024: Iran | Human Rights Watch ([hrw.org](https://www.hrw.org))

¹⁴ Իրանի մասին իմ մյուս հոդվածները տես այստեղ՝ Women! Life! Freedom! Women in Iran, one year later | by Lina AbiRafeh | Medium և այստեղ՝ Women, Life, Freedom: For Iran, for all women | by Lina AbiRafeh | Medium

¹⁵ US will deploy 1,000 troops off Gaza shore in plan to build floating dock - World Socialist Web Site ([wsws.org](https://www.wsws.org))

Read more from Lina AbiRafeh



Կարդալ ավելին Լինա ԱբիՌաֆեհից



Voices of Strength: Sudanese Women's Resilience Amid War and Conflict

SUWRA, Sudan

Sudan is living in a perpetual state of crisis for the last 6 years. The political instability before and after the revolution of 2018, increased the risks of the downfall of the state. The revolution itself was a collective preventive act to protect the country from this frightening future. The war of April 15th, 2023, preceded by the coup of October 25th, 2021, created the momentum of the worst fears of Sudanese people. Through the last 3 years, Sudanese women lived in a constant state of interconnected crises.

Sudanese women are encountering unprecedented crises that threaten their lives and fundamental rights. Women's groups and activists are working under catastrophic conditions to respond to the intersectional and multifaceted crises.

With limited resources and increasing risks these efforts of local women's groups are threatened to stop every day. One of the leaders of women's groups providing small portions of food for poor women said that some of their local donations stopped due to the group support of protests during the coup. The donors used to support them said that they will not donate to a group supporting the protest movement. The divisions across the political sphere had direct and indirect impact on women groups ability to respond to the rising crises in Sudan. The failure of local women's groups to do their essential work to provide support to affected communities will intensify the impact of the crises on Sudanese people at several levels.

Ուժեղ ձայներ. սուդանցի կանայք տոկոմ են պատերազմին ու հակամարտությանը

Սուդանցի կանանց իրավունքների շարժում (SUWRA), Սուդան

Վերջին 6 տարիներին Սուդանը շարունակական ճգնաժամերի մեջ է: 2018 թվականի հեղափոխությունից առաջ և հետո եղած քաղաքական անկայունությունը բարձրացրեց պետության փլուզման վտանգները: Հեղափոխությունն ինքնին հավաքական կանխարգելիչ գործողություն էր՝ պաշտպանելու երկիրն այս ահասարուռ հեռանկարից: 2023 թվականի ապրիլի 15-ի պատերազմը, որին նախորդել էր 2021 թվականի հոկտեմբերի 25-ի զինված հեղաշրջումը, սուդանցի ժողովրդի վատթարագույն վախերն իրենց գագաթնակետին հասցրեց: Արդեն երեք տարի է՝ սուդանցի կանայք գտնվում են փոխկապակցված տևական ճգնաժամերի մեջ:

Այս ճգնաժամերը սպառնում են սուդանցի կանանց կյանքերին և հիմնարար իրավունքներին: Կանանց խմբերն ու կին ակտիվիստներն աշխատում են աղետալի պայմաններում՝ փորձելով արձագանքել փոխհարվող ու բազմակողմանի այս ճգնաժամերին:

Սահմանափակ ռեսուրսներով և գնալով մեծացող վտանգների առաջ կանգնելով՝ տեղացի կանանց խմբերի գործողություններն ամեն օր կարող են կասեցվել: Աղքատ կանանց փոքր չափաբաժիններով սնունդ մատակարարող խմբերից մեկի ղեկավարն ասում է, որ տեղական համայնքներում հավաքագրվող իրենց նվիրատվությունները դադարել են, քանի որ իրենց խումբը հեղաշրջման ժամանակ սատարել է ցույցերը: Միջազգային դոնորները նախկինում աջակցում էին իրենց, սակայն ասել են, որ այլևս նվիրատվություններ չեն անի մի խմբի, որն աջակցում է ցուցարարների շարժմանը: Քաղաքական դաշտի պառակտումներն ուղղակիորեն և անուղղակիորեն անդրադարձել են կանանց խմբերի՝ Սուդանում վեր հառնող շարունակական ճգնաժամերին

From the hot zones in conflict areas to the frontlines of protests, women activists and women groups are the first responders to the complex crises in Sudan since the military coup of October 2021.

Women have led the calls and mobilization efforts to resist the military take over. In conflict areas women are leading the local support networks that interact with the major displacement and humanitarian crises in 3 regions of Sudan.

In the events of inter community conflicts in Eastern Sudan and Blue Nile regions, women led the process of collection of aid for locally displaced communities, while advocating for peace and coexistence.

Following the war of April 2023, The Emergency Response Rooms in neighborhoods of Khartoum and other states are grassroots civic groups that emerged to respond to the crisis. These groups have their roots in the Neighborhood Resistance Committees, the cluster local groups that mobilized people during the 2018 revolution and during the resistance against the coup. Women and youth within resistance committees, women's groups including other CSOs such as professional unions, created Emergency Rooms at neighborhood levels to respond to urgent needs. Since the first week of the war, members of these rooms organized evacuations, allocated safe routes, mobilized resources to ensure medical support, food supplies, documentation of violations, and distribution of available humanitarian aid. These operations on the ground were largely funded by Sudanese in diaspora.

Amid these crises, women groups are the leading response at different levels that includes:

արձագանքելու ունակության վրա: Տեղական համայնքներում կանանց խմբերի կողմից իրենց հիմնական աշխատանքը չանելը՝ համայնքներին աջակցություն չտրամադրելը, կարող է էլ ավելի մեծացնել մի քանի մակարդակներում սուդանցի ժողովրդի վրա ծառայած ճգնաժամերի բացասական ազդեցությունները:

2021 թվականի հեղաշրջումից ի վեր՝ լինեն թեժ հակամարտության գոտիներում, թե ցույցերի առաջին շարքերում, կին ակտիվիստները և կանանց խմբերն առաջինն են արձագանքում Սուդանի բարդ ճգնաժամերին:

Կանայք գլխավորել են իշխանության ռազմական բռնազավթմանը դիմադրելու կոչերն ու համախմբման գործողությունները: Հակամարտության շրջաններում կանայք առաջնորդում են աջակցության համայնքային ցանցերը, որոնք հակազդում են Սուդանի 3 տարածաշրջաններում ընթացող խոշորածավալ տեղահանումներին և մարդասիրական ճգնաժամերին:

Արևելյան Սուդանի և Կապույտ Նեղոսի շրջանների միջհամայնքային հակամարտությունների ժամանակ կանայք ղեկավարել են տեղահանված բնակչության համար օգնության հավաքագրումը, ինչպես նաև ջարդագույլ են խաղաղություն և համերաշխ համակեցություն:

2023 թվականին բռնկված պատերազմից հետո Խարթումի թաղամասերում և այլ նահանգներում ստեղծվեցին ինքնաբուխ քաղաքացիական խմբեր՝ իրենց անվանելով «Արտակարգ արձագանքման սենյակներ» և սկսեցին արձագանքել ճգնաժամին: Այս խմբերի արմատները ձգվում են մինչև Թադային դիմադրության կոմիտեներ՝ կլաստերային տեղական խմբեր, որոնք 2018 թվականի հեղափոխության, ինչպես նաև հեղաշրջման դեմ պայքարի ժամանակ մարդկանց էին մոբիլիզացնում: Դիմադրության կոմիտեներում

— **Humanitarian Aid:** women activists were first responders to conflict affected communities in Sudan. They led the efforts of community support in Darfur regions across the continuous conflicts since the coup. In small, but effective efforts, women's groups on the ground are taking responsibility for acting as early responders to every conflict in the country. Providing clothing, food, and shelters, when possible. In central, western and eastern Sudan, women are playing an important role to create safe zones for locally displaced communities.

— **Resistance and leading pro-democracy and peace building movement:** women activists and groups led the resistance movement with youth groups and resistance committees during the coup. Women have led the calls for ending the military engagement in politics and warned about the military coup 4 months before it happened in 2021. The role of women in protests is not limited to protesting and showing up in large numbers on streets, but they are contributing to building the pro-democratic movement that pushes for structural changes in the political system in Sudan. Women's groups

ներգրավված կանայք և երիտասարդները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ միավորներ, ինչպես, օրինակ, արհեստակցական միությունները, սկսեցին թաղամասերում ստեղծել Արտակարգ արձագանքման սենյակները, որպեսզի արձագանքեն հրատապ կարիքներին: Պատերազմի առաջին շաբաթից սկսած՝ այս խմբերի անդամները կազմակերպել են մարդկանց տարահանումներ, մշակել են ապահով երթուղիներ, ռեսուրսներ են հավաքագրել բուժօգնության և սննդամթերքի մատակարարման, իրավախախտումների արձանագրման, առկա մարդասիրական օգնության բաշխման համար: Նման աշխատանքները մեծ մասամբ ֆինանսավորվել են սուդանյան սփյուռքի կողմից:

Այս ճգնաժամերի ընթացքում կանանց խմբերը եղել են գլխավոր արձագանքողները, նրանք աշխատել են տարբեր ուղղություններով՝ ներառյալ հետևյալը՝

— **Մարդասիրական օգնություն.** Կին ակտիվիստներն առաջինն են արձագանքել Սուդանում հակամարտություններից տուժած համայնքներին: Հեղաշրջումից ի վեր՝ Դարֆուրի շրջաններում իրար հաջորդող հակամարտությունների թատերաբեմում հայտնված համայնքներին օգնություն տրամադրելու գործողություններն իրենք են ղեկավարել: Փոքրաթիվ, սակայն արդյունավետ ջանքերով կանանց խմբերը ստանձնում են երկրում բռնկվող յուրաքանչյուր հակամարտությանն առաջինը արձագանքելու պատասխանատվությունը՝ մարդկանց մատակարարելով հագուստ, սնունդ և հնարավորության դեպքում՝ ապահովելով կացարաններով:

were leading discussions on legal reforms, security sector reforms and the constitutional building process that will lead to sustainable democratic change. They are fighting on different fronts to protect their rights, as the patriarchal system continues to dominate the Sudanese public and political sphere. Following the war, women are leading the calls for peace and risking their own safety to become peacemakers at the local community levels.

- **Women and Human rights advocacy:** The important role of women in advocating for the respect and implementation of human and women's rights in Sudan increased since the military coup. Women activists led the efforts for documentation and exposed the human rights crimes against Sudanese people. Women groups, journalists and WHRDs advocated at the international and local levels against the mounting violations. They faced increasing threats because of their advocacy. Dozens of WHRDs are being detained, threatened, and women's groups are facing rising risks. After the war, women's leadership in documentation and monitoring of violations within and outside Sudan was essential to inform

Սուդանի կենտրոնական, արևմտյան և արևելյան մասերում կանայք կարևոր դերակատարում ունեն ներքին տեղահանված բնակչության համար ապահով գոտիներ ստեղծելու հարցում:

- **Դիմադրական և Ժողովրդավարական ու խաղաղաշինական շարժման գլխավորում.** Կին ակտիվիստները և կանանց խմբերը երիտասարդների խմբերի և դիմադրական կոմիտեների հետ միասին առաջնորդել են հեղաշրջման դեմ դիմադրությունը: Նրանք առաջինն էին կոչ անում, որ բանակը դադարի քաղաքականության մեջ ներգրավվել, և դեռևս զինված հեղաշրջումից 4 ամիս առաջ զգուշացնում էին դրա վտանգի մասին: Տույցերում կանանց դերը չի սահմանափակվում ցույցերին մասնակցելով և հոծ խմբերով փողոց դուրս գալով, նրանք մեծ ներդրում ունեն ժողովրդավարական շարժում ստեղծելու մեջ, որն առաջ է մղում Սուդանի քաղաքական համակարգում կառուցվածքային փոփոխությունները: Կանանց խմբերը նախաձեռնել են օրենսդրական, անվտանգային բարեփոխումների մասին քննարկումներ, առաջ են քաշել սահմանադրական փոփոխությունների գործընթաց, որը երկիրը կմղի դեպի կայուն ժողովրդավարություն:

the world of the catastrophe in the country. Women's groups led the calls for peace and continue to raise their voices to end the war in Sudan.

- **Peace making and peace building:** During the coup, women activists from conflict areas in Eastern Sudan, Blue Nile, Nuba mountains and Darfur are playing vital roles in defusing intercommunal conflicts. They are fighting hate speech, racism, and discrimination in local communities to ensure peaceful coexistence among rival groups. In the Eastern Sudan city of Port Sudan, women led the efforts to make local dialogues to ease the tension after several clashes in the city in the last couple of years. Similar efforts took place in Blue Nile state after conflict last year. The knowledge of local communities made women the most effective peace makers in many circumstances. After the war of April 15th, women are leading efforts to call for an end to the war. WHRDs are organizing local communities to build solidarity and resilience, while fighting militarization of the public space. Some women groups like "No to Women's Oppression" tried to organize public events, but the authorities dispersed their gathering.

Նրանք պայքար են մղում տարբեր ճակատներում, որպեսզի պաշտպանեն իրենց իրավունքները, քանի որ հայրիշխանական համակարգը շարունակում է տիրապետել սուդանյան հանրային և քաղաքական ոլորտում: Պատերազմի բռնկումից ի վեր կանայք են խաղաղություն հաստատելու կոչերի առաջնագծում: Վտանգելով իրենց կյանքը՝ նրանք ներգրավված են տեղական մակարդակներում ընթացող խաղաղարարության գործընթացներում:

- **Կանայք և մարդու իրավունքների ջատագովությունը.** Կանանց կարևոր դերակատարումը մարդու և կանանց իրավունքների նկատմամբ հարգանքի և դրանց իրացման ջատագովության հարցում ավելի է մեծացել ռազմական հեղաշրջումից հետո: Կին ակտիվիստները արձանագրել և բացահայտել են Սուդանի ժողովրդի դեմ կատարված հանցանքները: Կանանց խմբերը, լրագրողները, կին իրավապաշտպանները ելույթներով հանդես են եկել միջազգային և տեղական մակարդակներում՝ ընդդեմ մարդու իրավունքների աճող խախտումների: Երկրում կալանավորված են տասնյակ իրավապաշտպաններ, շատերի կյանքին վտանգ է սպառնում, կանանց խմբերը նույնպես

— **Transitional Justice and accountability:** The efforts for making transitional justice part of the crises solutions in Sudan is one of the priorities for women's groups. Organizations, like Martyrs Families Organizations, which fight for justice for protesters killed since the revolution is led by women and mothers of martyrs. The organization with other NGOs and lawyers pushed for Sudan joining the International Criminal Court during the transitional government. Women leading these organizations are seeking a justice and accountability process that will lead to wider transitional justice operations. The current war in Sudan is internally linked to the lack of effective transitional justice process in the country. Therefore, women leading these efforts are playing an important role in defining the future of the country. Mothers of martyrs in Sudan became respected community figures and leaders of change. They played an important role in mobilization against the military coup since the first day and continue to lead the efforts for justice and democratic change that will ensure comprehensive accountability that will not exclude military leadership. These efforts for transitional

բազմաթիվ վտանգների առջև են կանգնած: Պատերազմից հետո մարդու իրավունքների խախտումներն արձանագրելու և հսկելու գործողությունները գլխավորելու կանանց դերակատարումը առանցքային է եղել երկրում տիրող աղետի մասին աշխարհին իրազեկելու հարցում: Կանանց խմբերը գլխավորել են խաղաղության կոչերը և շարունակում են բարձրաձայնել Սուդանում պատերազմին վերջ տալու մասին:

— **Խաղաղաշինություն.** Ռազմական հեղաշրջման ժամանակ Արևելյան Սուդանի, Կապույտ Նեղոսի, Նուբայի լեռների և Դարֆուրի տարածաշրջանների կին ակտիվիստները կենսական դեր են խաղացել միջհամայնքային հակամարտությունները մեղմելու հարցում: Նրանք պայքարում են տեղական համայնքներում ատելության քարոզի, ռասիզմի, խտրականության դեմ և փորձում խաղաղ համակեցություն ապահովել հակամարտող խմբերի միջև: Պորտուգալացի քաղաքում կանայք գլխավորել են տեղական երկխոսության գործընթացները, որպեսզի վերջին տարիներին քաղաքում բռնկվող մի շարք բախումների լարվածությունը մեղմեն: Նմանատիպ գործողություններ են ձեռնարկվել Կապույտ Նեղոսի նահանգում անցյալ տարվա հակամարտությունից հետո:

justice were interrupted by the war, but more women and mothers of martyrs are joining the movement. As the war expands in violating human rights, justice and accountability is now one of the main pathways to bring sustainable peace in Sudan.

- **Economic crisis and climate change:** Sudan's economy deteriorated in record-breaking numbers within the last 2 years. Poverty and food insecurity indicators are frightening, as half of the population need humanitarian aid this year according to the UN. Women activists are working in different areas to respond to this crisis. Some women's groups were providing support for small income generation projects for women, training for the job market for women with no formal education, or direct support to poor women. But these efforts are limited due to the lack of resources available for women's groups working on these issues and the ongoing war in Sudan. On the other hand, the climate change crisis is affecting women in Sudan during the flood season, as 350 thousand families were affected by the flood last year. Some women activists work as volunteers to provide urgent

Տեղական համայնքների մասին կանանց լավ իրազեկվածությունը կանանց դարձրել է շատ հանգամանքներում արդյունավետ խաղաղարարներ: Ապրիլի 15-ին բռնկված պատերազմից հետո կանայք են գլխավորում պատերազմին վերջ տալու կոչերը: Կին իրավապաշտպանները կազմակերպում են համայնքներին, որպեսզի բարձրացնեն նրանց տոկոսությունը և իրար միջև զորակցությունը: Նրանք պայքարում են հանրային դաշտի ռազմականացման դեմ: Կանանց որոշ խմբեր, ինչպիսին, օրինակ, «Ռջ կանանց ճնշմանը» խումբն է, նույնիսկ փորձել են հանրային միջոցառումներ կազմակերպել, բայց նրանց հավաքները իշխանությունները ցրել են:

- **Անցումային արդարադատություն և հաշվետվողականություն:** Անցումային արդարադատության առաջխաղացումը՝ որպես Սուդանում ճգնաժամերի լուծումների մի մաս, կանանց խմբերի առաջնահերթություններից է: Կան կազմակերպություններ, օրինակ, «Նահատակների ընտանիքների կազմակերպությունը», որոնք պահանջում են արդարություն հեղափոխությունից հետո սպանված ցուցարարների համար, և այդ պայքարը մղում են կանայք և նահատակված ցուցարարների մայրերը:

support for affected families raising funds from Sudanese in diaspora to provide urgent aid. Women leading these efforts were attacked by the military and some of them were accused of collecting funds to support the protests movement after the coup. After the war women working in the humanitarian sector are risking their lives to provide support across the country. The war created dangerous working conditions and prevented efforts to reach most vulnerable communities.

Women activists and groups play a primary role in responding to the intersectional crises in Sudan. But these efforts are limited by different challenges and risks. Women's groups faced difficulties to return to work normally after the military coup. Amid the war, most women's groups are struggling to survive or deliver support to their communities. Although they continue to take immense responsibilities to respond to the ongoing crises, they are facing internal crises that threaten their ability to continue their work. They worked through 5 long years of continuous crises; their strength and resources were drained. International actors must act urgently and immediately to empower women's groups in Sudan and build their resilience to continue to lead the responses on the ground.

Հենց այս կազմակերպության գլխավորությամբ են ՀԿ-ները և իրավաբանները հասել նրան, որ Սուդանը անցումային կառավարության օրոք միանա Միջազգային քրեական դատարանին: Այս կարգի կազմակերպությունները ղեկավարող կանայք պայքարում են արդարության հաստատման և հանցագործներին պատասխանատվության կանչելու համար, և այդ գործընթացը կազմակերպում են ավելի լայն անցումային արդարադատություն հաստատելու համատեքստում: Սուդանում ընթացող պատերազմը պայմանավորված է անցումային արդարադատության արդյունավետ ներքին գործընթաց չունենալով, ուստի կանայք գլխավորում են նաև այս ջանքերը, որոնց շրջանակներում նրանք սահմանում են նաև երկրի ապագան: Նահատակների մայրերի կազմակերպությունը Սուդանում հայտնի է դարձել որպես հարգված գործիչների և փոփոխության առաջամարտիկների կազմակերպություն: Նրանք ռազմական հեղաշրջման առաջին իսկ օրվանից մեծ դերակատարում են ունեցել դրա դեմ համախմբվելու և արդարադատության նվաճման և ժողովրդավարության հաստատման գործընթացներում: Ըստ նրանց՝ այդ գործընթացները պետք է հանգեցնեին լիակատար պատասխանատվության, և ռազմական առաջնորդները

դրանցից պետք է չբացառվեին:

Անցումային արդարադատությանն ուղղված նրանց ջանքերն ընդհատվեցին պատերազմով, սակայն շարժման շարքերը համալրվում են նորանոր կանանցով և նահատակների մայրերով: Պատերազմը հանգեցնում է մարդու իրավունքների լայնածավալ խախտումների, իսկ Սուդանում կայուն խաղաղության հասնելու հիմնական ճանապարհներից մեկը արդարությունն ու հաշվետվողականությունն է:

- **Տնտեսական ճգնաժամ և կլիմայի փոփոխություն.** Սուդանի տնտեսությունը ռեկորդային արագությամբ անկում է ապրել վերջին երկու տարիներին: Աղքատության և պարենային անապահովության ցուցանիշները սասափեցնող են. ըստ ՄԱԿ-ի՝ երկրի բնակչության կեսն ունի մարդասիրական օգնության կարիք: Կին ակտիվիստներն այս ճգնաժամին արձագանքելու համար տարբեր ուղղություններով են աշխատում: Կանանց որոշ խմբեր աջակցություն են տրամադրում, որպեսզի խթանեն եկամտաբեր փոքր գործունեության ծրագրեր, մյուսները ֆորմալ կրթություն չունեցող կանանց տրամադրում են աշխատաշուկային անհրաժեշտ հմտություններ ասպահովող դասընթացներ,

այլ խմբեր անմիջականորեն օգնություն են տրամադրում աղքատ կանանց: Սակայն այս բոլոր գործողությունները խիստ սահմանափակ են, քանի որ կանանց խմբերն իրենք չունեն ռեսուրսներ Սուդանում ընթացող պատերազմի պատճառով: Ինդիհրն ավելի է սրվում կլիմայական ճգնաժամի պատճառով, որի ազդեցությունը հատկապես կանանց վրա շատ մեծ է եղել հեղեղների սեզոնին. անցյալ տարի հեղեղներից տուժել է 350 հազար ընտանիք: Շատ կին ակտիվիստներ կամավորագրված են հրատապ աջակցություն տրամադրելու ծրագրերում, որոնց համար ֆինանսները ձեռք են բերվում սուդանյան սփյուռքից: Սակայն հենց այս կանանց դեմ գինվորականությունը հարձակումներ է սկսել, նրանցից ոմանք մեղադրվել են հեղաշրջումից հետո բարձրացած դիմադրության շարժման համար ֆինանսներ հավաքագրելու մեջ: Պատերազմից հետո մարդասիրական ոլորտում աշխատող կանայք իրենց կյանքերը վտանգելու գնով են երկրով մեկ օգնություն տրամադրում: Պատերազմի պատճառով մարդասիրական աշխատանքի պայմանները խիստ վտանգավոր են դարձել՝ խոչընդոտելով օգնության մատակարարումը առավել խոցելի համայնքներին:

Կին ակտիվիստները և խմբերը նաև գլխավոր դերակատարում ունեն փոխհատվող ճգնաժամերին արձագանքելու հարցում: Սակայն այդ ջանքերը նույնպես սահմանափակված են տարբեր մարտահրավերների և ռիսկերի պատճառով: Ռազմական հեղաշրջումից հետո կանանց շատ խմբերի համար իրենց նախկին գործունեությանը վերադառնալն անհնար դարձավ: Պատերազմի ընթացքում կանանց խմբերի առջև դրվեց սեփական գոյությունը պահպանելու կամ իրենց սեփական համայնքներին օգնություն հասցնելու հրամայականը: Թեև նրանք ահռելի պարտականություններ են ստանձնում առկա բազմատեսակ ճգնաժամերին արձագանքելու համար, նաև ներքին ճգնաժամերի առջև են կանգնած, որոնց պատճառով վտանգված է գործունեությունը շարունակելու նրանց կարողությունը: Կանայք աշխատել են շարունակ ի հայտ եկող ճգնաժամերով լեցուն հինգ տարիների ընթացքում, նրանց ուժը և պաշարները սպառվել են: Սուղանում կանանց խմբերին ուժ տալու և նրանց տոկոսնությունն ամրապնդելու համար միջազգային դերակատարները պետք է հրատապ քայլեր ձեռնարկեն, որպեսզի նրանք կարողանան շարունակել ճգնաժամերին արձագանքելու իրենց գործունեությունը:

Read more on SUWRA



Կարդալ ավելին SUWRA-ի մասին



There is No End to War

Susanna Shahnazaryan

My grandmother was a communist, but she would curse Stalin.

She would say that it was not Hitler who sent her husband to the front.

They had been married for several years when the Great Patriotic War started. After having two sons they were expecting a daughter, whom my grandfather never saw. My aunt was born months after the war started, when her father was already at the front. She never concealed the fact that she had always envied the children who had a father. She would say that she always missed the father she had never seen.

In the third year of the war, they received the news of my grandfather's death. My father's aunt Milvar was married at that time but had no children. Seeing the helpless and difficult situation of her brother's wife, she separated from her husband in order to help take care of the children.

Nobody seemed to care that the man in the family had been killed. The kolkhoz demanded that my grandmother Arevhat, who was a teacher, should do the weeding, pick tobacco leaves, and feed the silkworm after the school lessons. Everyone was in the fields, in the pastures. And in the evenings, they would knit socks for the soldiers at the front.

The village of Khndzoresk¹, thousands of kilometers away from the war, was no longer living its own life. The slogans "Everything for the front", "за Родину" ("for the Motherland" in Russian) drowned out the plight of orphans and mothers who had lost their children.

The village was dominated by heavy silence and the horror of

Պատերազմին վերջ չկա

Սուսաննա Շահնազարյան

Տալսա կոմունիստ էր, բայց Ստալինին անիծում էր:

Ասում էր՝ Հիտլերը չի ամուսնուն ռազմաճակատ տարել:

Մի քանի տարվա ամուսնացած էին, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, երկու տղաներից հետո սպասում էին դստերը, որին, այդպես էլ պապս չտեսավ: Հորաքույրս ծնվել է պատերազմից ամիսներ հետո, երբ հայրն արդեն ռազմաճակատում էր: Նա երբեք չէր թաքցնում, որ միշտ նախանձով է նայել այն երեխաներին, որոնք հայր ունեին. ասում էր, որ միշտ կարոտում է երբևէ չտեսած հորը:

Պատերազմի երրորդ տարում ստանում են պապիս մահվան լուրը: Հորս Միլվար հորաքույրն այդ ժամանակ ամուսնացած էր, բայց երեխա չունեիր: Տեսնելով եղբոր կնոջ անօգնական ու ծանր վիճակը՝ բաժանվում է ամուսնուց, որպեսզի օգնի երեխաներին խնամել:

Ոչ մեկի կարծես չէր հետաքրքրում, որ ընտանիքի տղամարդը զոհվել է, կոլխոզը պահանջում էր, որ դպրոցի դասերից հետո ուսուցչուհի Արևհատ տատս մյուսների հետ գնա քաղհան անելու, ծխախոտի տերև քաղի, շերամին կերակրի: Բոլորն էին դաշտում, հանդում: Երեկոյան ժամերին էլ գուլպա էին գործում ռազմաճակատի զինվորների համար:

Պատերազմից հազարավոր կիլոմետրերով հեռու գտնվող Խնձորեսկ¹ գյուղն այլևս իր կյանքով չէր ապրում: «Ամեն ինչ ռազմաճակատի համար», «за Родину» լոզունգները խլացնում էին որդեկորուստ մայրերի ու որբացած երեխաների դժբախտությունը:

Գյուղի տերուտիրականը ծանր լռությունն էր, ու այրիացած կանանց սարսափը, հանկարծ գլխաշորի տակից տղամարդու պատահական մի հայացք մատի փաթաթան չդարձնի...

Սփոփվում էին այլևս հետադարձ հասցե չունեցող նամակներով, հետմահու почетная грамота-ներով. ոչ ոք որբերի համար սիրտ չունեիր:

widowed women at the prospect of being shamed for a random exchange of glances with a man from under the headscarf.

They were comforted by letters with no return address, posthumous certificates of honor. Nobody had a heart for the orphans. A month before the news of my grandfather's death came, they received his letter on the occasion of my father's first school day. Eighty years later, we still have the letter in which my grandfather, who was a captain, urged his son to study well and love his homeland.

My grandmother never cried because nobody cared for the crying. Stalin's merciless character had turned everyone's tears into stone.

There were few men left in the village. Those who survived the war were driven to Siberia just a few years after their return, their families were divided. Still, love proved to be stronger, new children were born, and the years stretched on until the nineties. Then my grandmother died, away from her home, because the war had already reached Khndzoresk. There were very few people at her funeral. For safety reasons, it was not allowed to gather in one place. She died of a heart attack. According to statistics, it is rare among women, but perhaps the numbers do not take account of difficulties of life.

My mother was a communist, but she would curse Lenin, saying, "Who was the enemy to raise a hand against Armenians if Lenin had not divided Armenia?"²

This time the war³ was very close to our house, just a few hills away. Death news came every single day from the battlefield, from the village, from the neighboring village. My mother was

Պապիս զոհվելու լուրից մեկ ամիս առաջ ստանում են նրա նամակը՝ հայրիկիս առաջին անգամ դպրոց գնալու առթիվ: Ութսուն տարի անց հիմա էլ պահպանվում է նամակը, որտեղ կապիտան պապս որդուն հորդորում էր լավ սովորել, հայրենիքը սիրել:

Տասն երբեք լաց չեղավ, որովհետև լացին էլ բանի տեղ դնող չկար: Ստալինի անողոք կերպարը կապար էր դարձրել բոլորի արցունքները:

Գյուղում քիչ տղամարդ էր մնացել, վերադարձողների մի մասին էլ մի քանի տարի անց քշեցին սիբիրներ, բաժան-բաժան արեցին ընտանիքները, բայց միևնույն է՝ սերն ավելի զորեղ էր, սիրուց նոր երեխաներ ծնվեցին, ու ճգվեցին տարիները՝ մինչև իննսունականներ: Հենց այդ ժամանակ էլ իր տնից հեռու մահացավ տատս, որովհետև պատերազմն արդեն Խնձորեսկ էր հասել: Շատ քիչ մարդ կար նրա թաղմանը. անվտանգությունից ելնելով՝ արգելում էին մի տեղում հավաքվել: Նա մահացավ ինֆարկտից. ըստ վիճակագրության՝ այն հազվադեպ է հանդիպում կանանց շրջանում, բայց երևի թվերը կյանքի դժվարություններին բանի տեղ չեն դնում:

Մայրս կոմունիստ էր, բայց անիծում էր Լենինին, ասում էր՝ թշնամին քանի՞ գլխանի էր, որ հայի վրա ձեռք բարձրացնի, եթե ժամանակին նա չձևեր² Հայաստանը:

Էս անգամ պատերազմը³ մեր տանը շատ մոտ էր՝ համարյա մի քանի բլուր էն կողմ: Ամեն օր մահվան լուրեր կային՝ ռազմի դաշտից, գյուղից, կողքի գյուղից. մայրս տարբեր տարիների իր աշակերտներին ներկա-բացակա էր անում:

Սգացող մայրերի ողբը խլանում էր հրեպակոծության ձայների հետ: Դժգոհող չկար. Արցախի, հայրենիքի, փան կռիվ էր:

Գյուղը լցվել էր փախստականներով՝ Բաքվից, Սումգայիթից, Լեռնային Ղարաբաղի տարբեր

making a mental note of her present and absent students from different years.

The mourning of grieving mothers was drowned out by the sounds of shelling. No one complained. It was a fight for Artsakh, for the homeland, for home.

The village was filled with refugees from Baku, Sumgait, regions of Nagorno-Karabakh. They were barefoot, homeless, hungry, and tortured. It was already winter. They were accommodated in the building of the House of Culture of the village, people were sleeping on the floor. Due to power outages, irregular water supply, there were no basic living conditions, no hygiene products were available. Lice were torturing people. Then came the order to vacate the building of the House of Culture for the fighters of the self-defense units from different towns and villages of Armenia, who, exhausted and wounded due to combat operations, would spend the night there from time to time to have some rest. The residents of the village gave shelter to the displaced persons although they themselves were sheltered in the basements. People had left their homes without taking anything with them, some had lost their relatives during the panicky escape, the sons or husbands of some families had been killed on the battlefield or in their own village. There was a house where two or three widows or women who had lost their children lived. They were alone. There was no one to give them a hand, because the newly independent state was not standing on its feet yet⁴. The newly forming army⁵ also depended on those who, having comforted themselves in their grief, had got used to relying on themselves only. The once golden wheat fields of Khndzoresk had been turned to ashes. For several months the harvester had not entered the

շրջաններից. ոտաբորբիկ, անտուն, քաղցած, խոշտանգված: Ձմեռնամուտ էր արդեն, նրանց տեղավորել էին գյուղի մշակույթի տան շենքում, մարդիկ քնում էին հատակին: Հովհարային անջատումների, անկանոն ջրամատակարարման պատճառով չկային կենցաղային տարրական պայմաններ, հիգիենիկ պարագաներ, ոջիլը քրքրում էր մարդկանց: Հետո հրաման եղավ, որ մշակույթի տան շենքն ազատեն Հայաստանի տարբեր բնակավայրերից եկած ինքնապաշտպանական ջոկատների մարտիկների համար, որոնք մարտական գործողություններից հյուժված, վիրավոր, ժամանակ առ ժամանակ հանգստի համար գիշերում էին այդտեղ: Գյուղի բնակիչները, չնայած իրենք էլ նկուղներում էին պատսպարված, տեղահանվածներին ապաստան տվեցին իրենց հարկի տակ: Մարդիկ ձեռնունայն էին լքելու իրենց բնակավայրերը, ոմանք խուճապահար փախուստի պահին կորցրել էին հարազատներին, ոմանց ընտանիքների որդիները կամ ամուսինները զոհվել էին մարտադաշտում կամ իրենց իսկ գյուղում: Տուն կար, որտեղ ապրում էին երկու-երեք որդեկորույս կամ այրի կանայք: Նրանք մենակ էին, ձեռք մեկնող չկար, որովհետև նորանկախ պետությունը դեռևս չորեքթաթ⁴ էր քայլում: Նոր-նոր ձևավորվող բանակի⁵ հույսը նաև նրանք էին, որ իրենք իրենց ամոքելով վիշտը՝ սովոր էին հույսներն իրենց վրա դնել: Խնձորեսկի՝ երբեմնի ոսկեհաս ցորենի դաշտերը մոխրացել էին, քանի ամիս դաշտերը կոմբայն չմտավ՝ անվերջ հրետակոծում էին, կոմբայնավար էլ չէր մնացել գյուղում:

Չկային ո՛չ միջազգայիններ, ո՛չ կամավորներ, մարդիկ տապակվելով իրենց վշտի մեջ՝ շարունակում էին ապավինել մեկը մյուսին:

Շատ էր մոտ պատերազմը: Տան շեմին⁶ էր հասել:

Մարդկանց ապրեցնում էր հավաքը, որ մի օր վերադառնալու են իրենց փուն. արդար Հաղթանակին էին սպասում:

fields since they were bombarded endlessly. Not even a driver was left in the village.

There were no international organizations, no volunteers. Coping with their own grief, people continued to rely on each other.

The war was so close. It was at their doorstep.⁶

The belief that one day they would return to their homes kept people alive. They were waiting for the righteous Victory.

In the second year of the war, my mother was diagnosed with cancer, and had to move to Yerevan since there was no medicine or doctor available. She made them install a telephone line in our house in Yerevan. Months later, she could no longer walk, so we extended the telephone line until her bed, because, whenever telephone communication with the village was possible, she would call the mothers of her fallen students and talk to them for hours. She used to tell them stories from their daily student life, and quote from books. She was a math teacher but was so good at literature. She would recite poems for them.

One day she said she could no longer stay there. I don't know if it was the feeling of imminent death or the nostalgia. She returned to the village torn from her wounds. Many of those mothers came to visit her. Although we were supposed to inject her with painkillers at specific hours of the day, we were not allowed to disturb her during those meetings. There was an impression that she wanted to convey the last shreds of optimism to the people alive.

The victory was close, the hail of shelling no longer silenced the cries of mothers. Tears were no longer

Պատերազմի երկրորդ տարում մայրս քաղցկեղով հիվանդացավ, ստիպված էր Երևան տեղափոխվել, որովհետև ո՛չ դեղորայք կար, ո՛չ էլ՝ ազատ բժիշկ: Համարյա ստիպեց, որ Երևանի մեր տանը հեռախոսի գիծ անցկացնեն: Ամիսներ հետո այլևս չէր քայլում, հեռախոսի լարը երկարացրինք մինչև նրա անկողին, որովհետև պարբերաբար, եթե գյուղի կապը չէր ընդհատվում, զանգում էր իր զոհված աշակերտների մայրերին, ժամերով խոսում: Դեպքեր էր պատմում նրանց աշակերտական առօրյայից, մեջբերումներ էր անում գրքերից, մաթեմատիկայի ուսուցչուհի էր, բայց փայլուն գրականություն գիտեր, բանաստեղծություններ էր արտասանում նրանց համար:

Մի օր էլ ասաց, որ այլևս չի կարող մնալ: Չգիտեմ՝ մահվան սարսուռն էր, թե՛ կարոտը: Վերադարձավ վերքերից քրքրված գյուղ⁷: Նույն այդ մայրերից շատերը նրան տեսության էին գալիս, ու չնայած սահմանված ժամերի նրան ցավազրկողներ էինք ներարկում, այդ հանդիպումների ընթացքում չպիտի խանգարեինք, տպավորություն կար, որ լավատեսության վերջին փշուրները ուզում էր փոխանցել ապրողներին:

Հաղթանակը համարյա մոտ էր, հրետակոծության ծայներն այլևս չէին խլացնում մայրերի ողբը: Կապանքներից ազատված արցունքներն այլևս արգելք չունեին, ու գյուղի գերեզմանատան տասնյակ շիրիմներ օրնիբուն ողողվում էին մայրերի արցունքներով:

Երկար տարիներ հետո, վերջապես, ինստունչորսին⁸ դպրոցում վերջին զանգ տոնեցին: Ընկեր Լիլիկի համար աշակերտները ծաղկեփնջեր ուղարկեցին: Ծաղկի, բնության սիրահար մայրս անգամ չչոջվեց: Դեմքը դեպի պատը դարձրած, հագիվ լսելի ասաց՝ տարեք...ու թվարկեց զոհված⁹ քսանից ավելի իր աշակերտների անունները. . .

kept behind bars. Dozens of graves in the village cemetery were flooded with mothers' tears day and night.

After many years, in 1994, they finally celebrated the Last Bell (school graduation ceremony-Ed.) at schools. The students sent flowers for Comrade Lilik. My flower and nature loving mother did not even turn around. With her face towards the wall, she said in a barely audible voice: "Take it away" and listed the names of more than twenty of her fallen students...

However, after a few days, she listened to the tests of the final grade math exam on the radio with surprising enthusiasm, and, solving the two math tasks with her dry, bony fingers, she said: "My [students] would have done this too."

A few days later, she passed away. More than the pain, she left us her optimism, the will to love life, rather than compete with it, the will to overcome difficulties.

I took it with me as a dowry. When the Grad rocket struck our house, my daughter was the same age as my father when the Great Patriotic War started.

She had only gone to school one day, and when the day after the shelling men with files under their arms came to measure the damage caused by the Grad, my little daughter crawled through them, through the broken glass, and, with her injured hands, she picked up the primer she had received the day before. She was so happy the pages had remained intact.

Later, however, when we found a temporary shelter in Yerevan, at the school where she

Մի քանի օր հետո, սակայն, զարմանալի խանդավառությամբ ռադիոյով լսեց ավարտական դասարանի մաթեմատիկայի քննության թեստերը և չորացած, ոսկրացած մատներով լուծելով հարցաթերթերի երկու տարբերակները՝ ասաց՝ իմոնք էլ կգրեին:

Օրեր անց նա հեռացավ կյանքից՝ ցավից առավել մեզ թողնելով իր լավատեսությունը, կյանքի հետ ոչ թե մրցելու, այլ այն սիրելու, դժվարությունները հաղթահարելու կամքը:

Ես այն ինձ հետ օժիտ տարա: Նույն տարիներին, երբ գրադի արկն ընկավ մեր տան վրա, աղջիկս նույն տարիքին էր, ինչ հայրս, երբ հայրենականը սկսվեց:

Նա ընդամենը մեկ օր էր դպրոց գնացել, և երբ հրետակոծության հաջորդ օրը, թղթապանակները թևի տակ դրած տղամարդիկ եկել, չափում էին՝ հաշվարկելու գրադի¹⁰ վնասը, փոքրիկս, նրանց արանքներով սողոսկելով, փշրված ապակիների միջից ձեռքերն արնոտելով գտավ նախօրեին ստացած այբբենարանը և ուրախացավ շատ, որ թերթերը չեն վնասվել:

Հետո, սակայն, երբ ժամանակավոր ապաստան գտանք Երևանում, դպրոցում, որտեղ մի քանի ամիս ուսումը շարունակեց, ուսուցչուհին թույլ չափտի տար, որ նա ևս լրսանկարվի դասարանի աշակերտների հետ՝ ասելով, թե դու էս դասարանից չես:

Նույն Երևանում հացի գիշերվա հերթում անծանոթ մի ոստիկան պիտի դուբինկայով խփի մեջքիս՝ բանի չդնելով էլ, որ երեխայի եմ սպասում, ու մարդիկ հերթն ինձ էին գիշել:

Համարյա հիսուն տարի անց արդեն իմ տղայի տատը կրակի մեջ խորովվող քաղաքից¹¹ նամակ պիտի գրի թափառական դարձած թոռանն ու ասի, թե «էստեղ

continued her studies for several months, the teacher would not allow her to be photographed with the students of the class, saying that she did not belong to that class.

In the same Yerevan, an unknown policeman would hit me in the back with a truncheon, ignoring the fact that I was expecting a child, for which very reason people had allowed me to go ahead of them in the line.

Almost fifty years later, my son's grandmother would write a letter to her grandson, a rootless wanderer, from the city engulfed in flames, saying: "There is a lot of shooting here, be patient, peace will come soon."

At the same time, a very important official in the same Yerevan would ask: "Do the Grad rockets reach Goris too?"

And years later, in the churchyard of Goris, a singer giving speeches about patriotism today would push the child who was surprised to see a singer in real life and say: "I hate these greedy people of Goris." Later she would go to the National Assembly to show how concerned she was about Goris.

I was also one of those "greedy" people. I never had the time to blame anyone for my unborn child, because in order to live, I had to keep others alive, continue to write articles about my recovering country, my city, my village, teach my children to pray in the evenings and silently pass to them the most harmless infection in the world - the optimism and will of my grandmother, my mother, my mother-in-law. I had to be very careful not to make a distinction between those who had fled Baku, Sumgait, Artsakh and the locals, even in everyday conversations.

շատ են կրակում, մի քիչ էլ համբերեք, շուտով կխաղաղվի»:

Նույն այդ ժամանակ նույն էդ երևանում շատ կարևոր մի պաշտոնյա պիտի հարցնի՝ «Գրադը Գորիս էլ էր հասնում»:

Իսկ տարիներ անց Գորիսի եկեղեցու բակում էսօր հայրենասիրության մասին ճառեր ասող երգչուհին պիտի ձեռքով հրի կենդանի երգիչ տեսնելուց զարմացած փոքրիկին ու ասի՝ զգվում եմ էս չտես գորիսցիներից: շետո ինքը կգնա Ազգային ժողով, որ իբր Գորիսի դարդով¹² տապակվի:

Նույն էդ չտեսներից մեկս, սակայն, իմ չծնված երեխայի համար չհասցրեցի էլ մեղադրել որևէ մեկին, որովհետև ապրելու համար պիտի մի քիչ էլ ապրեցնեի կողքիններիս, շարունակեի նյութեր գրել վերականգնվող երկրիս, քաղաքիս, գյուղիս մասին, երեկոյան ժամերին երեխեքիս սովորեցնեի աղոթել ու անձայն նրանց փոխանցեի աշխարհի ամենամանվնաս վարակով՝ տատիս, մորս, կեսուրիս լավատեսությամբ ու կամքով: Շատ զգուշավոր պիտի լինեի, որ հանկարծ առօրյա զրույցների մեջ անգամ տարբերակում չընեի Բաքվից, Սումգայիթից, Արցախից մազապուրծ փախածների ու տեղացիների միջև:

Ես էդ ժամանակ կոմունիստ չէի, բայց ո՛չ ազերիին էի անիծում, ոչ էլ անգամ՝ Գորբաչովին, ում հայի խասայաթով շարունակում¹³ էինք նամակ գրել ռուսաց թագավորին¹⁴ միամիտ հավաքալով, թե հիմա կկարդա, հրաման կտա ու կասի, թե Արցախը, որտեղ որ է, տարեք, տվեք Հայաստանին:

Չնայած, Արցախը միշտ էր մերը՝ մտքում, սրտում, պատմության, քարտեզների դավթարներում. ու այն ամրագրվեց հազարավոր մարդկանց արյան գնով: Մենք շարունակեցինք վերանորոգել մեր ավերված տները, նորերը կառուցվեցին, էլի երեխաներ ծնվեցին, ես էլ ամենից առաջ ինքս ինձ փրկելու, կյանքս

I was not a communist, but I did not curse the Azeri, not even Gorbachev, to whom, by virtue of being Armenian, we continued to write letters, naively believing that the “Russian king” would read them, issue an order to take Artsakh and give it to Armenia.

Artsakh was always ours - in our minds, hearts, history, maps. And this fact was cemented at the cost of the lives of thousands of people.

We continued to repair our destroyed houses, new ones were built, more children were born, and I became a mother again, above all, to save myself, to be able to love life more and to live it. All the same, we were so naïve as to think that by handing over our children’s future to the custody of the world, we would ensure a life of peace for them, and by donating the last penny to Artsakh, it would finally be laid out in black and white that Artsakh is Armenia, and that’s it.

However, the end came earlier, in 2023, when I did not favor or curse anyone, because I was too obsessed with the idea that all difficulties had been left behind, and I had dedicated myself to changing the quality of life for myself and others.

My father was the same age as my grandchildren when he received a letter from his father who was later killed in war. My son was the same age when he was left without toys after the shelling of our house. For several years now, we have not celebrated the birthdays of my seven-year-old grandchildren, because all toasts are only about patience, hope, and waiting.

Their mother, who is not even aware of stalinism, hitlerism, leninism, gorbachevism and other -isms, has to master a whole -ism of resistance, replacing

ավելի ուժեղ սիրելու ու դրանով ապրելու համար կրկին մայրացա, բայց միևնույն է՝ գլուղացի Համբոյի պես մտածում էինք, թե մեր երեխեքի ապագան աշխարհին պահ տալով՝ նրանց համար խաղաղ կյանք ենք ապավինելու, վերջին կոպեկն Արցախին նվիրաբերելով, վերջապես, սևով սպիտակի վրա գրվելու է, թե Արցախը Հայաստան է ու վերջ:

Վերջը, սակայն, ավելի շուտ եկավ՝ 2023թ¹⁵-ին, երբ ես «ոչմիական» էի ու ոչ մեկին չէի անիծում, որովհետև չափից ավելի էի տարված այն մտքով, որ անցյալ կատարյալ են բոլոր դժվարությունները, և լծված էի իմ և մյուսների կյանքի որակը փոխելով:

Ճիշտ այն տարիքին, երբ հայրս ռազմաճակատում զոհված հորից նամակ էր ստանում, նույն տարիքին, երբ որդիս մեր տան հրետակոծությունից հետո այլևս ոչ մի խաղալիք չունեի, յոթ տարեկան թռռնիկներիս ծնունդն արդեն քանի տարի չենք նշում, որովհետև բոլոր կենացները միայն համբերելու, հույսի, սպասելու մասին են:

Նրանց մայրը, որ ստալինի, հիտլերի, լենինի, գորբաչովների ու էլի ուրիշ իզմերի տեղն անգամ չգիտի, ստիպված է տատիս, մորս, իմ, կեսուրիս փոխարեն դիմադրողականության մի ամբողջ իզմ¹⁶ անգիր անել ու կամավորականի թևկապով տնետուն անցնել, մարդկանց սիրտ տալ, աչքերը վերջապես բաց արած աշխարհի տարբեր անկյուններից Գորիս հասած «պոմոշները»¹⁷ այլևս անհասցե մնացածներին հասցնի:

Բայց սա արդեն տաք շորով ու վերմիշելով խաբվելու չի, որովհետև մարդկանց ունեցած-չունեցածները ընդամենը ցուցակների անուն-ազգանուններն են մնացել:

Էլ անգամ չա Քոծսոյ-ն, Հաղթելու ենք-ը¹⁸ քսոմնելի են:

my grandmother, my mother, my mother-in-law and myself. She has to go from house to house wearing a volunteer's armband, in order to give people heart, to deliver the "pomosh" (the Russian word for aid – Ed.) to those who have reached Goris, the aid from different countries of the world who have finally opened their eyes.

But this time people are not fooled with warm clothes and vermicelli, since the only thing they are left with are their names and surnames on the lists.

Even the slogans "For the Motherland" and "We will win" arouse nothing but disgust.

What we have in front of our eyes is not the vision of the death of the homeland, but the funeral procession with endless migrants, starving children jumping off the bodies of trucks, elderly people looking for a place to take a pee after the tiring journey.

And there is no end in sight. There is no end to war.

¹ Khndzoresk, a village in Goris community of Syunik Province, Armenia, near the line of contact between Armenia and Azerbaijan.

⁴ Was learning to take its first steps.

⁵ During that period, the National Army was formed in Armenia.

² The annexation of Artsakh to Soviet Azerbaijan, a political process that took place in July 1921.

⁶ During the Artsakh war, Goris and the villages were also shelled.

³ This refers to the first Artsakh war in 1989-1993.

Հայրենիքի մահվան ոչ թե տեսիլքը, այլ թափորն է աչքիդ առաջ՝ անվերջանալի գաղթականներով, բեռնատարների թափքից մի կերպ ցած նետվող սովալլուկ երեխաներով, հոգնատանջ ճամփից հետո մի պատար «կուզելու»¹⁹ տեղ ման եկող տարեց մարդկանց անհարմարությունով:

Ու վերջը չի երևում, պատերազմին վերջ չկա:

¹ Խնձորեսկ, գյուղ Հայաստանի Սյունիքի մարզի Գորիս համայնքում հայ-ադրբեջանական շփման գծի հարևանությամբ

⁵ Հայաստանում այդ ընթացքում ձևավորվեց Ազգային բանակ

² Արցախի բռնակցումը Խորհրդային Ադրբեջանին, քաղաքական գործընթաց, որը տեղի ունեցավ 1921 թվականի հուլիսին

⁶ Արցախյան պատերազմի օրերին հրետակոծվում էին նաև Գորիսը, գյուղերը

⁷ Խնձորեսկ

³ Խոսքը վերաբերում է 1989-93թթ Արցախյան առաջին պատերազմին

⁸ Արցախյան պատերազմի հրադադար եղավ

⁴ Սովորում էր առաջին քայլերն անել

⁹ Արցախյան պատերազմում Խնձորեսկից զոհվեց մոտ երեք տասնյակ մարդ, այդ թվում՝ խաղաղ բնակիչներ

¹⁰ Հրետակոծության արկի

¹¹ Գորիսից

¹² Գորիսի խնդիրների լուծման մասին որոշումներ կայացնի

¹³ բնավորությամբ

¹⁴ Խոսքը վերաբերում է Ակսել Բակունցի «Նամակ Ռուսաց թագավորին» պատմվածքի հերոսին, որը նամակ է գրում ռուս թագավորին՝ հույս ունենալով, որ նա կկարդա նամակը և բանտից կազատի որդուն

¹⁵ Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանվեցին հարյուր հազարից ավելի հայեր

¹⁶ Վերջածանց է, որն օգտագործվում է ինչ որ բառի վրա, օրինակ, կոմունիզմ

¹⁷ Խոսքը վերաբերում է տեղահանված անձանց տրվող հումանիտար աջակցությանը

¹⁸ Լոզունգներ, որոնք արդիական էին 1941-45թթ շայրենական և Արցախյան պատերազմների ժամանակ

¹⁹ Կուզելու՝ միզելու, արցախի բարբառ

Women in the Army: Roles and Expectations¹

Media discourse analysis by Kristine Soloyan
Authors: Mariam Khalatyan, Nvard Margaryan
Editor: Arpy Manusyan

An integral part of the discussions about women's involvement in the military is understanding their roles within it. These discussions had become even more actual in the aftermath of the Second Karabakh War, when more intensive engagement of women in the military became a hot topic. In June 2023, the National Assembly of Armenia adopted amendments to the Law on Military Service and Status of the Military Serviceman and the Law on Defense. These amendments aimed to introduce a voluntary, mandatory military service system for female citizens.² The amendments enable female citizens of Armenia aged between 18-27 to voluntarily apply for a 6-month mandatory military service. These drafted females would be dislocated at a military training station for 6 months without participating in a draw and their entire service will be organized in that one military training station. Upon submission of a military service draft application, the women can withdraw from mandatory military service before the final draft date, if they wish so.

Given the context, it is important to think about the role of women in the army and the expectations that come from that role. There are stereotypical and masculinist notions about the role of women in the army and other military institutions within Armenian culture, which are further legitimized by the media.

To put these in perspective, let's examine public TV program "Zinuzh" (in Armenian «Հինուժ», which means "Armed Forces")³ which airs on Public TV 1. Episodes featuring women in the military encourage them to enlist in the army by highlighting their personal stories including

Կանայք բանակում. դերեր և ակնկալիքներ¹

Մեդիայի դիսկուրս վերլուծությունը՝ Քրիստինե Սոլոյանի Հեղինակների՝ Մարիամ Խալատյան, Նվարդ Մարգարյան Խմբագիր՝ Արփի Մանուկյան

Ռազմական գործում կանանց ներգրավման դիսկուրսի անբաժան մաս է ոլորտում նրանց դերի քննարկումը: Մասնավորապես, կանանց դերի մասին խոսակցությունները ավելի ակտուալացել են Ռարաբաղյան երկրորդ պատերազմից հետո, երբ քննարկման դաշտ մտավ կանանց ռազմական ոլորտում առավել ակտիվ ներգրավելու հարցը: 2023 թվականի հունիսին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց Կառավարության ներկայացրած «Հինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Պաշտպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը, համաձայն որի՝ ներդրվում է իգական սեռի քաղաքացիների՝ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայության համակարգ²: Ըստ նախագծի՝ 18-27 տարեկան իգական սեռի ՀՀ քաղաքացիները կարող են ներկայացնել դիմումներ՝ անցնելու զինվորական ծառայություն վեց ամիս ժամկետով: Զորակոչված իգական սեռի քաղաքացիների համար որպես ծառայության վայր է նշանակվում ուսումնական զորամասը՝ առանց վիճակահանության, և ծառայությունը կազմակերպվում է բացառապես այդ զորամասում: Ընդ որում՝ զինվորական ծառայության անցելու դիմումը ներկայացնելուց հետո կանայք իրավունք են ունենում մինչև զորակոչի օրը հրաժարվելու պարտադիր զինվորական ծառայությունից:

Այս համատեքստը հաշվի առնելով՝ կարևոր է մտածել բանակում կանանց դերի և այդ դերից բխող ակնկալիքների շուրջ: Բանակում և ռազմական այլ հաստատություններում ներգրավված կանանց դերի մասին կարծրատիպային և մասկուլին պատկերացումներն արմատացած են հայաստանյան մշակույթում և մեր օրերում լրացուցիչ լեգիտիմություն են ստանում մեդիայի միջոցով:

their motivations and challenges, family life, experiences, interactions with fellow servicemen, and issues related to hierarchy and equality.

It is also important to note that women are often assigned the role of maintaining the vigilance and discipline of their male counterparts in the army.

“In every way, female military service members are on par with their male counterparts, as we are all equal. We undergo physical training under the same conditions, participate in shooting training on equal terms and receive combat training with no difference in standards.”⁴

An additional emphasis given to the context of service in the army is women’s educational accomplishments with excellence, the struggle they have fought for the right to be enrolled in the army. Often, women’s enrolment in the army is attributed a certain layer of exceptionalism and uniqueness in order to broaden public approval. Women are described - and sometimes describe themselves - as “unusual”, “unique”, or outside the social norms typically associated with women.

[Female soldier] “So that they [men] too get to know, see and, I don’t know, fear. They will perhaps feel bad that a woman is defending their border.

[Journalist] But not an ordinary woman.

[Female soldier] Yeah, I agree, not an ordinary one.”⁵

The fact that women exist in the military constantly needs justifications and “proofs.” As masculine characteristics are more valued in society, so women in a patriarchal system must continuously prove their importance, for example, to serve as equals to men.

Կանգ առնենք, մասնավորապես, Հանրային հեռուստաընկերությամբ հեռարձակվող Չինուժ³ հաղորդման՝ կանանց մասին պարմող ռեպորտաժների վրա, որոնք խրախուսում են բանակում կանանց ներգրավվածությունը: Այդ ռեպորտաժներում կանայք պարմում են զինվորագրվելու իրենց դրդապատճառների և դժվարությունների մասին, անդրադառնում են ընտանիքի պարմությանը, փորձին, ծառայակից տղամարդկանց հետ հարաբերությունների, հիերարխիայի և հավասարության հարցերին:

«Ոչ մի բանով աղջիկ զինծառայողը չի տարբերվում տղամարդուց, քանի որ բոլորս էլ հավասար ենք. մարզում անում ենք հավասար պայմաններում, կրակայիններն անցնում ենք հավասար պայմաններում, մարտական պատրաստվածությունն անցնում է հավասար պայմաններում»⁴:

Բանակում ծառայելու համատեքստում լրացուցիչ նշանակալիություն է տրվում կանանց՝ ուսումը գերազանցությամբ ավարտելուն, բանակում լինելու իրենց իրավունքի համար պայքարին: Հաճախ ռազմական ոլորտում կանանց ներգրավմանը հաղորդվում է արտառոցության և յուրահատկության այնպիսի մի շերտ, որն էլ ավելի կմեծացնի հարցի հանրային հավանությունը: Կանայք բնութագրվում, ինչպես նաև իրենք են իրենց հաճախ ներկայացնում որպես «ոչ սովորական», «յուրահատուկ», կանանց համար սահմանված սոցիալական դերերից դուրս:

[Կին զինծառայող] «Որ իրենք [տղամարդիկ] էլ իմանան, տեսնեն ու, չգիտեմ, վախենան: Իրենց երևի թե ավելի վատ կզգան, որ աղջիկն է պահպանում իր սահմանը:

[Լրագրող] Բայց ոչ սովորական աղջիկը:

[Կին զինծառայող] Դե հա, ես էլ եմ համաձայն, որ ոչ սովորական»⁵:

In this context, women's participation in military exercises is interpreted as commitment and consistency, as well as responsible involvement. It is also important to note that women are assigned the role of ensuring the vigilance of men in the army.

"The borders of our country must be defended, be it by a woman or a man. There are stereotypes, I have not encountered them, but I am trying to break them. Service is equal for all of us. There is no difference in my staff, we all perform the same service. I think that women should serve, because next to a man, when a woman serves, servicemen approach every issue more responsibly, are more alert and disciplined."⁶

The role of women in the military is to be a supporter-encourager of men, male soldiers and officers. This was the position of women who studied war and peace in the 20th century: "During the war, the woman should serve the agenda of the war" (Khalatyan, 2022).

The woman came to fill the vacant roles in the male-centered system. Notions of masculinity, specifically the perception of the woman's role as a supporter in the male-dominated field of warfare, are often formulated and reproduced by female soldiers as something given.

"We stand behind the boys and should always be standing. We should be able to remain present there, do our best to help with everything, even if it's the smallest, with first aid."

"Now, more than ever, women's presence is not only necessary, but also encouraging."⁷

Various TV programs dedicated to the holidays of March 8 and April 7 feature scenes of female

Ռազմական ոլորտում կանանց գոյության փաստը մշտապես հիմնավորումների և «ապացույցների» կարիք ունի. առնական հարկանիշներն ավելի արժեքավոր են սոցիալական միջավայրում, ուստի կանայք հայրիշխանական համակարգում պետք է շարունակաբար ապացուցեն իրենց կարևորությունը, օրինակ՝ ծառայեն տղամարդկանց հավասար:

Այս համատեքստում ռազմական վարժանքներին կանանց մասնակցությունը մեկնաբանվում է որպես նվիրվածություն և հետևողականություն, ինչպես նաև՝ պատասխանատու ներգրավվածություն: Կարևոր է նաև նկատել, որ կանանց վերագրվում է բանակում տղամարդկանց զգոնությունն ապահովողի դերը:

«Մեր երկրի սահմանները պետք է պահել՝ լինի կին, թե տղամարդ: Կան կարծրատիպեր, ես չեմ հանդիպել, բայց փորձում եմ կոտրել: Ծառայությունը հավասար է բոլորիս համար: Իմ անձնակազմում տարբերություն չեն դնում, բոլորս կատարում ենք նույն ծառայությունը: Ես կարծում եմ, որ կանայք պետք է ծառայեն, քանի որ տղամարդու կողքին, երբ կինը ծառայում է, զինծառայողներն ավելի պատասխանատվությամբ են մոտենում յուրաքանչյուր հարցի, ավելի զգոն են, ավելի կարգապահ են»⁶:

Ռազմական ոլորտում կանանց դերը տղամարդկանց, արական սեռի զինվորների ու սպաների աջակից-ոգևորիչը լինելն է: Սա դեռևս 20-րդ դարում պատերազմի և խաղաղության հարցերը քննող կին գործիչների դիրքորոշումն էր. «պատերազմի ժամանակ կինը պետք է ծառայի պատերազմի օրակարգին» (Խալաթյան, 2022):

Կինը եկել է ամբողջացնելու տղամարդակենտրոն համակարգում թափուր մնացած դերեր: Տղամարդակենտրոնության մասին պատկերացումները, մասնավորապես՝ տղամարդաստեղծ ռազմի ոլորտում՝ նեցուկ կնոջ

soldiers receiving flowers, praised for their “special” role of being by the side of men. Within the limits of this predetermined role, nonetheless, female soldiers make significant efforts to become acknowledged without any claims, however, for equality.

Only in rare cases do we see the media featuring female soldiers who criticize the army or raise one or the other issue.

“First, you have to be acknowledged by the soldiers as a commander, then by your colleagues – the other officers and especially by your supervisor that you are an officer and not simply a woman. ... The simplest example would be when at any moment there was a need for replacement of the company commander, the priority was given not to the first platoon commander and then the second and so on, as was prescribed by the rules, but to any man. If all the men were on a holiday or away on assignment, only in that case would I become in charge of the command for the company. I won’t be modest, but they would not take into account the many years of my experience and the amount of training I had received (in various countries), which were not only sufficient but in certain cases excelled of the others, but when they needed to choose by comparing and selecting someone, they would select a male.”⁸

The coverages by the “Zinuzh” TV program never mention the systemic discrimination against women and the challenges they face, but the cultural codes that are presented in these reports suggest their inevitable presence. A more detailed description of discriminatory treatment and systemic issues is provided in the Special Report of the Human Rights Defender’s Office of

դերի մասին ընկալումը հաճախ ձևակերպվում և վերարտադրվում է կին զինվորականների կողմից՝ իբրև բնական տրվածություն:

«Մենք թիկունք ենք տղաներին ու միշտ պետք է լինենք: Պետք է կարողանանք էնտեղ ներկա գտնվել, ամեն ինչով փորձենք օգնել, թեկուզ ամենաչնչին՝ առաջին բուժօգնությամբ»:

«Հիմա ավելի, քան երբևէ, կանանց ներկայությունը ոչ միայն անհրաժեշտ, այլ նաև ոգևորիչ է»⁷:

Մարտի 8-ին և ապրիլի 7-ին տարբեր ռեպորտաժներում կարելի է տեսնել կին զինծառայողների, որոնց նվիրում են ծաղիկներ, գովերգում տղամարդկանց կողքին լինելու նրանց «առանձնահատուկ» դերը: Կանխորոշված դերի սահմաններում, այդուհանդերձ, կին զինծառայողները էական ջանք են թափում ընդունելի դառնալու համար՝ չհավակնելով, սակայն, հավասարության:

Միայն եզակի դեպքերում ենք հանդիպում կին զինծառայողների, որոնք մեղիայում քննադատում են բանակը կամ բարձրաձայնում են այս կամ այն խնդիրը:

«Նախ պետք է ընդունվել զինվորների կողմից որպես հրամանատար, հետո՝ քո գործընկերների՝ մյուս սպաների և հատկապես վերադասի կողմից՝ որպես սպա, ոչ թե որպես ուղղակի կին: ...Ամենապարզ օրինակը կլինի այն, որ երբ ցանկացած պահի պետք էր լինում վաշտի հրամանատարին փոխարինելու, առաջնահերթությունը տրվում էր ոչ թե կանոնակարգմամբ նախատեսված կարգով առաջին դասակի հրամանատարին, հետո՝ երկրորդ դասակի հրամանատարին, այլ՝ տղամարդու: Եթե բոլոր տղամարդիկ արձակուրդում էին կամ գործուղման, այդ ժամանակ նոր ես էի դառնում վաշտի հրամանատարի պատասխանատուն:

Armenia⁹, which refer to the obstacles to women's advancement in the military, obtaining officer rank, presenting themselves in high positions, stereotypical attitudes of society, military uniform, etc.

In the dominant patriarchal culture, women themselves often reproduce male-created, stereotypical understandings of women in the military, distinguishing, for example, feminine and non-feminine military professions, a women's role as a man's inspiration and comforter, etc.

"I think that there are certain military professions that are not so suitable and not so convenient for a girl, that's why I chose air defense. Under my supervision, I am going to have men too. I think it will be easy to work with them because in these past four years, I have gained experience, and I got to know men with various personalities. There were not many obstacles during the study, some issues were overcome with the help of cadet boys, who always kept us in the center of their attention. The boys make us remain, so-called, subtle and not lose our femininity."¹⁰

Societal expectations of women, including those engaged in the military, are framed by the societal roles prescribed to them: in the family as a mother, wife, sister, in charge of child rearing, supporter of the man, who is the defender of the homeland. When speaking about women in the military, the following descriptions are used: "female military serviceperson," "army representatives of the beautiful gender", "Armenian woman," "female Armenian," condensing the elements of the national and the pathetic.

"A mother, a wife, a daughter and even a defender

